ՀՍԽՀ
Կառավարության հաշվետվու-
թյան կարգը

354(47.925)
Յ—11

1927

10

№926

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# Հ. Ս. Խ. Հ.

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

## ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՐՏ 1925 Թ.—ՀՈՒՆՎԱՐ 1927 Թ.

ՀՐԱՏ. Հ.Ս.Խ.Հ. ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՏՆՏԽՈՐՀԻ ԳՈՐԾ. ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ—1927 Թ.

354(47.925)
2-11

Ca 646 354(47.925) Հ-11
1928 N 295
1 MAR 2010
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

# Հ. Ս. Խ. Հ.

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

## ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՐՏ 1925 Թ.—ՀՈՒՆՎԱՐ 1927 Թ.

ՀՐԱՏ. Հ.Ս.Խ.Հ. ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ. ՏՆՏԽՈՐՀԻ ԳՈՐԾ. ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ—1927 Թ.

09 SEP 2013

40.290

ԳՐԱՌԵՊՎ. № 129 (Բ). ՏԻՐԱԺ 1500. ՊԱՏՎԵՐ № 2417.
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 2-ՐԴ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

3741-82

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ . . . . . . . . 1—17
Ա. Գյուղատնտեսության զարգացման հիմնական գծերը հաշվետու ժամանակաշրջանում . . . . . 1
Բ. Ձեռնարկումներ գյուղի արտադրական ուժերի զարգացման բնագավառում . . . . . . 2
Գ. Ձեռնարկումներ գյուղատնտեսական զանազան ճյուղերում . . . . . . . . 9
Դ. Խորհրդային տնտեսություններ . . . . . . 14

II. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ . . . . . . . 18—24
Ա. Արդյունաբերության ընդհանուր դրությունը . . 18
Բ. Արտադրական ձեռնարկությունների գործունեությունը 20
Գ. Մթերում . . . . . . . . 22
Դ. Իրացում . . . . . . . . 23

III. ԱՌԵՎՏՈՒՐ . . . . . . . . . 25—33
Ա. Առևտրի ընդհանուր դրությունը . . . . . 25
Բ. Շուկայի դրությունը . . . . . . . 26
Գ. Մթերումներ . . . . . . . . 29
Դ. Մանրավաճառքի գների իջեցման հանձնաժողովի գործունեությունը . . . . . . . 31

IV. ԿՈՈՊԵՐԱՑԻԱ . . . . . . . . 34—50
Ա. Գյուղատնտեսական կոոպերացիա . . . . . 34
Բ. Սպառողական կոոպերացիա . . . . . . 43
Գ. Տնայնագործական կոոպերացիա . . . . . 48

V. ՖԻՆԱՆՍՆԵՐ . . . . . . . . . 51—74
Ա. Պետական բյուջեն յեվ նրա կառուցվածքը . . . 51
Բ. Տեղական ֆինանսներ . . . . . . . 63
Գ. Աշխատավորական խնայողական դրամարկղներ . . 66
Դ. Վարկ . . . . . . . . . 67
Յե. Պետական ապահովագրություն . . . . . 72

VI. ԿԱՊ ՅԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ . . . . . . 75—77
Ա. Կապ . . . . . . . . . 75
Բ. Հաղորդակցություն . . . . . . . 76

VII. ԱՇԽԱՏԱՆՔ . . . . . . . . 78—88
Ա. Աշխատավարձ . . . . . . . . 78

Բ. Հիմնական ձեռնարկումներ աշխատանքի պաշտպանության բնագավառում . . . . . . . 81
Գ. Սոցիալական ապահովագրություն . . . . . 83
Դ. Գործազրկություն . . . . . . . . 87

VIII. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ . . . . . . 89—91
Ա. Ոժանդակություն չքավորներին . . . . 89
Բ. Փոկեր . . . . . . . . 90

IX. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ . . . . . . . 92—99
Ա. Ձեռնարկումներ ժողովրդական կրթության բնագավառում . . . . . . . . 92
Բ. Սոցիալական դաստիարակություն . . . . . 93
Գ. Արհլուսավորություն . . . . . . 94
Դ. Քաղլուսավորություն . . . . . . 96
Յե. Գիտական-արվեստական հիմնարկությունների ցանցը . 96
Զ. Ազգային փոքրամասնությունների լուսկրթությունը . 97
Է. Լուսավորության նյութական բազան . . . 98
Ը. Պետական Հրատարակչություն . . . . 98

X. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ . . . . . . . 100—106
Ա. Ձեռնարկումներ առողջապահության բնագավառում . 100
Բ. Բժշկա-սանիտարական հիմնարկություններ յեվ բուժօգնություն . . . . . . . . 100
Գ. Սանիտարա-պրոֆիլակտիկ աշխատանքներ . . 105
Դ. Ֆինանսական միջոցները . . . . . . 106

XI. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ . . . . . . . 107—110
Ա. Ձեռնարկումներ կազմակերպչական բնագավառում . 107
Բ. Հեղափոխական օրինականություն . . . . 109

XII. ՊԵՏՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ . . . . . . 111—112
Մարդահամարի արդյունքները . . . . . . 111

ՀԱՎԵԼՎԱԾ. Ցանկ Հ.Ս.Խ.Հ. կառավարության հրատարակված վորոշումների ու կարգադրությունների, վորոնք ընդունվել են 1925 թ. մարտից—1927 թ. հունվարը . 115—128

# I. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## Ա. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում շուկայի ընդհանուր կոնյուկտուրան գյուղատնտեսության համար բավարար է յեղել և նպաստել է նրա արդյունավետության զարգացմանը։

Խոշոր արգելանք է հանդիսացել գյուղատնտեսական մեքենաների, լծկանների և դրամագլխի պակասությունը։

Գյուղատնտեսության համար անբարենպաստ են յեղել նաև օդերևութաբանական պայմանները։ Գարնանային զգալի խոնավությունը, նույնիսկ առատ ձյունը, խիստ ազդեցին ծառապտուղների բերքի վրա և խոշոր վնաս հասցրին անասնապահությանը, նամանավանդ վոչխարներին, վորոնք զգալի չափով, կերի պակասության պատճառով, կոտորվեցին։ Իսկ ամառային ամիսների ջերմությունը և ապա աշնան վաղահաս ցրտերը խիստ բացասական ազդեցություն ունեցան բարձր կուլտուրաների՝ բամբակի և ծխախոտի վրա։

Դառնալով 1925/26 թվի առանձին կուլտուրաների տարածությանը, անցյալ տարվա համեմատությամբ, պիտի ասենք, վոր նա հետևյալ պատկերն է ներկայացնում.

Աղյուսակ № 1

| №№ | | 1925/26 թ. | 1924/25 թ. | Արտադրանք 1925/26 թ. | Արժեքը մինչ պատ. ռուբլիներով |
|---|---|---|---|---|---|
| | | Տարածությունը դեսյատիններով | | | |
| 1 | Աշնանացան | 76.873 | 75 616 | 10.558.100 | 8.417.400 |
| 2 | Գարնանացան | 169.098 | 141.475 | — | — |
| 3 | Բամբակ | 11.186 | 14.666 | 447.000 | 4.089.959 |
| 4 | Ծխախոտ | 487 | 271 | 19.800 | 162.600 |
| 5 | Յուղատու | 4.416 | 5.282 | 113.900 | 170.900 |
| 6 | Կարտոֆիլ | 7.228 | 10.308 | 4.161.800 | 1.373.400 |
| 7 | Բանջարանոցներ յեվ բոստաններ | 3.977 | 3.880 | 2.220.000 | 585.000 |
| 8 | Ցանովի խոտեր | 2.871 | 3.035 | 835.500 | — |
| 9 | Դաշտավայրեր յեվ խոտհարքներ | 69.012 | 57.825 | 6.732.300 | 1.613.700 |
| | Ընդամենը՝ | 345.154 | 312.358 | 25.088.400 | 15.812.959 |

Այսպիսով, գլխավոր կուլտուրաների բերքի ընդհանուր արժեքն է 15.812.959 ռուբլի, նախընթաց տարվա 14.682.000 ռ. հանդեպ։

**Բ. ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԳՅՈՒՂԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ (ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԱՅԼՆ)**

Հողաշինարարական ասպարեզում հաշվետու ժամանակամիջոցում կատարված են հետևյալ տեխնիքական աշխատանքները.

1. Նոր արտանկարներ 64.000 դեսյատինի, 2. ստուգված են և հետազոտված հին պլանշետներով—92.764 դես., 3. գրված են յեռանկյունաչափական նոր կետեր—28 հատ։

Հողաչափական տեխնիքական աշխատանքների շարքում պետք է դասել Մեղրու գավառում և Շամշադինի գավառակում կիրառված միջգյուղյա հողաշինարարությունը. այդ վայրերում հողային հասարակությունների համար նոր սահմաններ են գծված՝ Մեղրու գավառի 23 գյուղում՝ 21.117 դեսյատին, իսկ Շամշադինի 14 գյուղում՝ 23.000 դեսյատին տարածության վրա։

Միջգյուղյա հողաշինարարության ասպարեզում, բացի մատնանշվածից, բոլոր գավառներում կատարվել են սահմանների ճշտումներ և ընթացիկ վեճերն ու տարաձայնությունները վերացնելու աշխատանքներ։

Մնում է միջգյուղյա վերջնական սահմանագծումներ կատարել միայն Իջևանի գավառում և Զանգեզուրի սահմանամերձ գոտում, ինչպես նաև հողազուրկ բնակչության համար ազատ հողեր գտնել Ագբաբայի գավառակում։

Հաշվետու տարում ձեռնարկվել են նաև ներքին հողաշինարարության հիմնական աշխատանքներ, հողաչափների միջոցով։ Տեխնիքական կադրի փոքրաթիվ լինելու պատճառով, այս կարևոր գործը տարվել է առայժմ փոքր ծավալով, այն ել վոչ բոլոր գավառներում։

Կատարված է հողերի նոր ու ճշգրիտ արտանկարում 100 սաժ. մասշտաբով, այն գյուղերում, ուր կիրառված է ներքին հողաշինարարություն։

Հաշվետու ժամանակաշրջանում ներքին հողաշինարարություն կիրառված է.

Աղյուսակ № 2

| | Գավառ | Գավառակ | Գյուղ | Բնակչություն | Դեսյատին |
|---|---|---|---|---|---|
| 1 | Յերևանի . . | Հրազդանի յեվ Ղամարլվի . . . . | 18 | 8.719 | 4.802 |
| 2 | Էջմիածինի . | Ղուրդուղուլու, Սամաղարի յեվ Զանգիբասարի . . . | 9 | 19.300 | 7.800 |
| 3 | Լենինականի . | Առաջին. . . . | 13 | 18.000 | 22.000 |
| 4 | Ն.-Բայազետի | Բասարգեչարի . . | 2 | 1.200 | 2.500 |
| 5 | Փ.-Լոռու . . | Ստեփանավանի . | 3 | 1.800 | 2.500 |
| | | | 45 | 40.019 | 39.602 |

Չքավորներին, գաղթականությանը ու սակավահող գյուղացիությանը հողով բավարարելու խնդիրը՝ մեկ կողմից, հողացրվածության մեղմացման և վոչ աշխատավոր հողոգտագործողների զաման խնդիրը՝ մյուս կողմից, հրատապ և անհետաձգելի խնդիր են դարձրել ներքին հողաբաժանության հարցը։

Թեև հողային հարցը գյուղերում հիմնականորեն ու կանոնավոր կերպով



լուծվում է միայն հողաչափի կողմից կատարված ներքին հողաշինարարության միջոցով, սակայն, հողաչափների սակավության պատճառով, տեղ է տրվել մեծ չափով նաև գյուղական հողկոմների ու չափրարների միջոցով կատարվող հողաբաժանության աշխատանքներին։

Հաշվետու ժամանակաշրջանում ներքին հողաբաժանություն կատարված է.

Աղյուսակ № 3

| №№ | Գ Ա Վ Ա Ռ | Գյուղ | Բնակչություն |
|---|---|---|---|
| 1. | Յերևանի . . . . | 27 | 18.635 |
| 2. | Էջմիածնի . . . | 40 | 24.400 |
| 3. | Լենինականի . . | 46 | 34.161 |
| 4. | Փամբակ-Լոռու . | 46 | 70.683 |
| 5. | Դիլիջանի . . . . | 18 | 19.383 |
| 6. | Նոր-Բայազետի . | 9 | 4.802 |
| 7. | Դարալագյազի . | 34 | 16.686 |
| 8. | Զանգեզուրի . . | 76 | 38.062 |
| 9. | Մեղրու . . . . | 21 | 6.160 |
| | Գումար . . | 317 | 233.192 |

Այսպիսով, ամբողջ Հայաստանում ներքին հողաբաժանության աշխատանքները հետևյալ պատկերն ունեն (առ 1 ն մարտի 1927 թ.)։

Աղյուսակ № 4

| №№ | Գ Ա Վ Ա Ռ | Առ 1927 թ. ավարտ. | | Մնում է կատարելու | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Գյուղ | Բնակիչ | Գյուղ | Բնակիչ | Տարածություն |
| 1. | Յերևանի . . | 213 | 105.000 | 8 | 4.000 | 4.000 |
| 2. | Էջմիածինի . | 155 | 110.000 | 5 | 1.186 | 1.000 |
| 3. | Լենինականի | 145 | 115.000 | 13 | 6.000 | 6.175 |
| 4. | Փ. Լոռու . . | 131 | 114.000 | 15 | 11.795 | 8.849 |
| 5. | Դիլիջանի . . | 53 | 56.000 | 31 | 26.959 | 18.095 |
| 6. | Ն. Բայազետի | 76 | 94.000 | 8 | 4 522 | 5.772 |
| 7. | Դարալագյազի | 55 | 23.000 | 17 | 5.325 | 6.471 |
| 8. | Զանգեզուրի | 106 | 52.000 | 44 | 13.802 | 14.033 |
| 9. | Մեղրու . . . | 23 | 8.000 | — | — | — |
| | Ընդամենը | 957 | 675.000 | 141 | 73.589 | 64.395 |

Հաշվետու ժամանակամիջոցում վոչ մեծ չափով, շարունակվել է գաղթականներին հողի ու տնտեսության հետ կապելու գործը:

Ըստ գավառների հողով բավարարված գաղթականների թիվը հետևյալն է.

Աղյուսակ № 5

| №№ | ԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Շունչ |
|---|---|---|
| 1. | Յերևանի . . . . . | 1.600 |
| 2. | Եջմիածնի . . . . . | 1.250 |
| 3. | Լենինականի . . . . | 350 |
| 4. | Նոր-Բայազետի . . . | 412 |
| 5. | Փամբակ-Լոռու . . . | 540 |
| 6. | Զանգեզուրի . . . . | 151 |
| | Գումար . . . | 4.303 |

1925/26 տարվա ընթացքում, Ներքգործժողկոմատի միջոցով տեղավորված են Յերևանի գավառի Արազդայանի շրջանում և Նոր Բայազետի գավառի Մազրայի շրջանում (Պոլսից և Միջագետքից յեկած) 1880 գաղթականներ, վորոնց համար կառուցված է 84 շենք, բաղկացած 336 սենյակներից և վերանորոգված են 64 սենյակ: Այդ գաղթականությանը տրվել են՝ սերմվարկ, գյուղատնտեսական գործիքներ և անասուններ:

Հողաշինարարական կարևոր աշխատանքներից մեկը գյուղական բնակավայրերի հատակագծման խնդիրն է, վորը հնարավորություն է տալիս աստիճանաբար, բայց հիմնովին փոխելու մեր ասիական տիպի գյուղերը:

Հատակագծման աշխատանքները ներկայումս այնպիսի կարգով են տարվում, վոր գոյություն ունեցող կառուցվածքներն ու արժեքները չտուժեն: Ազատ հողամասեր են հատկացվում տնատեղ չունեցող, կամ նեղ ու անհարմար տնատեղ ունեցող ծխերին: Այդ նոր բնակավայրերում ամբողջ շինարարությունը հատակագծման պահանջների համաձայն է կատարվում, իսկ հին գյուղատեղը, ժամանակի ընթացքում, պետք է հարմարեցվի նոր պահանջներին: Այսպիսով, առանց վնասելու գոյություն ունեցող շենքերին ու այլ արժեքներին, ստեղծվում է նոր գյուղը, վորին ժամանակի ընթացքում կըմիացվի հինը, ամբողջականացնելով հատակագծման գործը լիովին:

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղական բնակավայրերի հատակագծման աշխատանք է տարվել.

Աղյուսակ № 6

| №№ | Գավառի անունը | Կիրառված է | Նախագծված է |
|---|---|---|---|
| 1 | Յերևանի . . | 10 գյուղում | 4 գյուղի |
| 2 | Եջմիածնի . | 7 » | 6 » |
| 3 | Ն.-Բայազետի | 1 » | — » |
| 4 | Լենինականի | 2 » | 2 » |
| | Ընդամենը . | 20 » | 12 » |



Հետագայում այս աշխատանքները պիտի տարվեն այն հաշվով, վոր հատակագծման յենթարկվեն բոլոր այն գյուղերի բնակավայրերը, ուր հողաշինարարություն է կատարվում:

Դաշտավարության արդյունավետության նկատմամբ խոշոր նշանակություն ունի գյուղացիական տնտեսությունների ապահովումը կենդանի յեվ մեռյալ ինվենտարով: Պետք է ասել, վոր մեր գյուղացիությունը նախապատերազմական շրջանում ևս ինվենտարով հարուստ չեր, նույն դրությունը գոյություն ունի և ներկայումս:

Հայաստանն ունի առ 1-ն հունվարի 1927 թ.

Աղյուսակ № 7

| №№ | Ինվենտարի անունը | Քանակը | Քանի տնտես. է հասնում մեկը |
|---|---|---|---|
| 1 | Գութան . | 13.000 | 12,1 |
| 2 | Փոցխ . . | 6.540 | 24,4 |
| 3 | » փայտե | 12.720 | 12,6 |
| 4 | Արոր . . | 50.335 | 3,0 |

Այսպիսով, դաշտավարության գլխավոր գործիք մեզ մոտ շարունակում է մնալ արորը:

Հաշվետու ժամանակաշրջանում ներմուծված է Հայաստան տրակտորներ — 97 հատ: Բացի դրանից, միմիայն Գյուղբանկի միջոցով ներմուծված է — գութաններ — 850 հատ, քամհար մեքենաներ — 100 հատ, տրիյերներ — սերմացանիչ — 70 հատ, փոցխ «Սահակի» — 140 հ., կուլտիվատոր ձեռքի — 150 հատ և այլն: Կենդանի ինվենտարի քանակը (լծկանների) Հայաստանում ընդամենը 161.401 գլուխ է, վորոնք անհամաչափ կերպով են դասավորված: Լծկաններով առանձնապես աղքատ է Արարատյան դաշտը:

Այսպես, ամբողջ Հայաստանում, առանց Արարատյան դաշտի, մեկ դեսյատինին ընկնում է 0,38 գլուխ, իսկ Արարատյան դաշտում՝ 0,25, ըստ վորում, մեկ տնտեսությանն ընկնում է 1,02 և 0,38: Միջին թվով, Հայաստանի լծկանազուրկ տնտեսությունները կազմում են 45,4, իսկ Արարատյան դաշտում — 67,8 տոկոս:

Ջրաշինարարության ասպարեզում կատարված են հետևյալ աշխատանքները. Սարդարապատի ջրանցք — կատարված է հողահարդարում, կառուցված են բարակներ ու կազմված է տեղի գծագիրը: Կատարված են հողային աշխատանքներ — 49.766 խ. ս.: Շիրակի ջրանցք — աշխատանքներն սկսվել են 1926 թ. մայիսից: Կատարված են հողային աշխատանքներ — 4390 խ. ս., արհեստական կառուցվածքներ՝ 10 հատ, գծագիր՝ 8000 դես.: Ղամարլվի ճահիճների չորացում — աշխատանքներն սկսվել են 1925 թ. ապրիլին: Փորված են չորացման առուներ 12.615 խ. ս., կառուցված են արհեստական շենքեր — 8 հատ: Կարճեվանի ջրանցք — Հողային աշխատանքներ՝ 8.400 խ. ս.: Եջմիածնի հողերի մեխանիկական վոռոգում — հողային աշխատանքներ՝ 11.082 խ. ս., անց է կացրած Այղր-Գյոլ — Սարդարապատ ճանապարհը՝ 1.194 խ. ս.,

կառուցված են յերկու տրանսֆորմատորային շենքեր, ջրաչափիչներ, 501 հատ սյուներ Յերևան—Այգր-Գյոլ գծի համար: Արազդայանի ջրանցք—հողային աշխատանքներ՝ 1.000 խ. ս., մաքրված է շլյուզը, վերականգնված է ջրանցքը—26 վերստի վրա ու կարող է ոռոգել մոտ 700 դես. հող: Կազմված է ղեկրի, Կամենկա գետի, Արազդայանի չորացման յեվ ոռոգման ու Սարդարապատի 4-րդ շրջանի գծագիրը ու հետազոտություններ են կատարված: Հիդրոգեոլոգիական կայան—Սևանա լճի վրա բացված են օդերևութաբանական կայաններ՝ 4, անձրևաչափիչ կետեր՝ 4, ջրաչափիչ կետեր՝ 20 հատ:

Բացի այս աշխատանքներից, կատարված են նաև մի շարք հիդրոգեոլոգիական և հողային հետազոտություններ՝ Սարդարապատի, Կամենկա գետի վրա, Արազդայանում ու այլ տեղերում:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակաշրջանում Հայջրտնտեսության կողմից 1.804.998 ռուբլու աշխատանք է կատարված:

Հաշվետու ժամանակաշրջանում անասնաբուժական ոգնության ասպարեզում հետևյալ աշխատանքներն են կատարվել: Հայաստանի սահմաններում այդ շրջանում գոյություն են ունեցել կենդանիների վարակիչ հիվանդություններ՝ ժանտախտ, սիբիրախտ, սապ և այլն:

Այդ հիվանդություններից խոշոր տեղը բռնում է ժանտախտը: Ժանտախտը նկատվել է 674 տեղ, ուր հաշվի յե առնվել 400.937 գլուխ տավար: Այդ քանակությունից մինչև սրսկումները հիվանդացել են 36.806 գլուխ, վորից սատկել են՝ 21.432 գլուխ, այսինքն՝ 58,2 տոկոս: Սրսկումներ արված են 309.055 գլխի, վորից, սրսկումից հետո, սատկել է 8.164 գլուխ, այսինքն 2,6 տոկոս:

Բացի դրանից, արյուն առնելու համար մորթված է 231 գլուխ անասուն: Գործ է ածված 20.000 լիտր հակաժանտախտային շիճուկ:

Ժանտախտի տարածման հիմնական պատճառներն են.

1. Ուրիշ հանրապետություններից յեկող քոչվորական տավարը, վորը, գալով մեր սահմանները, վարակում է և այստեղ յեղածը *), 2. անասնաբուժների շատ սակավությունը, 3. կարանտինային կանոնների տեղական իշխանության կողմից ճիշտ չկատարելը, 4. առևտրա-արդյունաբերական տավարի վոչ սահմանված տրակտներով քշելը և 5. շիճուկի պակասությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում ուրիշ հիվանդություններ նկատվել են 523 տեղ, ուր հիվանդացել են 9745 գլուխ զանազան կենդանիներ և սատկել—4727 գլուխ, այսինքն՝ 49,2 տոկոս: Սրսկված է 17.213 գլուխ:

Անասնաբուժական ոգնություն կազմակերպված է յեղել 11 կայաններում, ուր ոգնություն է ցույց տրված ընդամենը 11,837 կենդանու—15.177 այցելությամբ: Բուժպերսոնալ առ 1-ն հունվարի 1927 թ. մենք ունեցել ենք 3 կենտրոնական, 8 գավառային, 1 յերկաթուղային, 12 շրջանային, 2 քաղաքային անասնաբուժներ և 24 անասնաբուժակներ:

*) Ծանոթ. Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի սահմաններն անցել են հարևան հանրապետություններից 483.213 գլուխ խոշոր յեղջ. անասուն, 1.193.826 վոչխար և 23.673 գլուխ այլ տեսակի անասուններ:



Մեր գյուղատնտեսությունը բարձրացնելու նպատակով, յերկու ձևի աշխատանքներ են տարվել—ագրոպրոպագանդային յեվ ցուցադրական: Սակայն, այդ աշխատանքները հնարավոր չի յեղել հարկ յեղած չափով ընդլայնել, շնորհիվ ագրոպերսոնալի խիստ սակավության: Այսպես՝ 24/25 թ. պերսոնալի թիվը հասնում եր 61 անձի, իսկ 25/26 թ. վերջերում նա իջնում է մինչև 25 հոգու:

Բացի պրոպագանդայի յեղանակից, նոր կուլտուրաներին և մշակության ձևերին ծանոթացնելու համար, բոլոր շրջաններում գյուղացիների հողերի վրա գործել են ցուցադրական դաշտեր, վորոնք ըստ գավառների և կուլտուրաների հետևյալ պատկերն են ունեցել.

Աղյուսակ № 8

| №№ | Գ Ա Վ Ա Ռ | Հացահատիկ | Տեխնիկական բույսեր | Արմատապտուղն. | Բանջարբոստան | Ցանովի խոտ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Յերևանի . . | 55 | 29 | 1 | 5 | 7 | 97 |
| 2. | Եջմիածնի . | 34 | 32 | 5 | — | — | 71 |
| 3. | Լենինականի | 51 | — | — | — | 5 | 56 |
| 4. | Լ. Փամբակի | 8 | — | 18 | — | 42 | 68 |
| 5. | Դիլիջանի . . | 2 | — | — | — | 6 | 8 |
| 6. | Ն. Բայազետի | 10 | — | — | — | 2 | 12 |
| 7. | Դարալագյազի | — | 1 | 5 | — | 6 | 12 |
| 8. | Զանգեզուրի | — | 3 | 6 | 7 | 10 | 26 |
| 9. | Մեղրու . . . | — | 1 | — | — | — | 1 |
| | Ընդ. Հայաստանում | 160 | 66 | 35 | 12 | 78 | 351 |

Ցուցադաշտերից զատ, շրջաններում գործել են վարձակայաններ, վորոնք բաշխվել են հետևյալ ձևով.—Յերևանի գավառ՝ 6 հատ, Եջմիածնի՝ 4, Լենինականի՝ 7, Փամբակ-Լոռու՝ 6, Դիլիջանի՝ 5, Նոր-Բայազետի՝ 4, Դարալագյազի՝ 1, Զանգեզուրի՝ 4,—ընդամենը՝ 37:

Շնորհիվ վարձակայանների գոյության, հնարավորություն է ստեղծվել վորոշ չափով թուլացնելու գավառներում յեղած գյուղգործիքների սուր ճգնաժամը ու մասսայականացնելու մի շարք նոր գործիքներ, ինչպես՝ շարքացան սերմազտիչ և այլն: Բացի գյուղգործիքներ վարձով տալուց, վարձակայանները իրենց սերմազտիչներով մաքրել են գյուղացիների սերմացուն, մեծ մասամբ ձրիաբար: Ընդամենը Հայաստանում զտվել է 58.926 փութ սերմացու, նախորդ տարվա 38.000 փթի հանդեպ:

Հաշվետու ժամանակաշրջանում, բացի վերոհիշյալ ագրոոգնության ձեռնարկումներից, զանազան շրջաններում գործել են 20 բեղմնավորման կայան, 23 հովատակով, 10 ցուլով և 6 եշով:

Գյուղատնտեսության վերակազմության վրա ազդելու նպատակով, կազմակերպվել են նաև մի շարք կարճատև դասընթացներ գյուղացիության

համար։ Այսպես՝ Դիլիջանում գործել են այգեգործության ու անասնապահության և Մեղրիում՝ շերամապահության դասընթացներ։

Սրանից զատ, գործել են բազմաթիվ գյուղատնտեսական խմբակներ, վորոնց գյուղատնտեսական գիտելիքներ են տրվել։

Կազմակերպվել են ցուցահանդեսներ և օրինակելի տնտեսությունների մրցանակաբաշխություններ և այլն։

Հաշվետու ժամանակաշրջանում կլիմայական պայմանները միանգամայն նպաստավոր են յեղել բազմաթիվ վնասատուների և սնկային հիվանդությունների համար։ Այգիներում ուժեղ կերպով տարածված եյին միլդիումը և օիդիումը։ Հատկապես մեծ վնաս է հասցրել առաջին հիվանդությունը, վորից համարյա վոչ մի շրջան զերծ չի մնացել։ Այդ հիվանդություններով վարակված շրջաններում խաղողի բերքը կիսով չափ իջել է, այնինչ, նախորոք սրսկված այգիները բոլորովին ազատ են մնացել միլդիումից։ Օիդիումի հասցրած վնասները այնքան մեծ չեն յեղել։

Միլդիումի վնասներն ըստ գավառների բաշխվել են այսպես.

Աղյուսակ № 9

| №№ | Գ Ա Վ Ա Ռ | Այգիների վոր տոկոսը |
|---|---|---|
| 1. | Յերևանի . . . . | 40 |
| 2. | Էջմիածնի . . . . | 50 |
| 3. | Լոռի Փամբակի . . | 80 |
| 4. | Դիլիջանի . . . . | 70 |
| 5. | Մեղրու . . . . . | 40 |

Մեղրիում և Յերեվանում փչացած այգիների տոկոսը ցածր է այն պատճառով, վոր այնտեղ նախնական բժշկումներ են կատարվել։

Բամբակի չոռը յերևացել է համարյա ամենուրեք։ Պայքարը նրա դեմ տեղերում կազմակերպված հնգյակների աջակցությամբ ու մասնագետների անմիջական ղեկավարությամբ է տարվել։ Այդ նպատակի համար գործ է ածվել 42.805 փութ ծծումբ, աշխատել են 829 ծծմբասրսկիչ, 23 հրահանգչի ղեկավարությամբ։ Շնորհիվ ձեռք առնված միջոցների, բամբակի չոռը մեծ վնասներ հասցնել չկարողացավ։

Հանրային վնասատուներից պետք է հիշատակել մորեխը և մկները։

Մորեխով վարակված եր ընդամենը 13.500 դես. տարածություն։ Նրա դեմ հատուկ միջոցներ չեն ձեռք առնված, վորովհետև խալական և յեգիպտական մորեխի քանակը քիչ եր, իսկ ասիականը բավականին ուշ եր յերևացել ու սկսել եր սնվել յեղեգներով։

Մկներով վարակված մակերդակը 19.345 դես. է յեղել։

Մինչև հաշվետու ժամանակաշրջանը, Հայաստանի խաղողաբուծությունը համարվում եր ֆիլոքսերայից զերծ, բայց հետազոտությունը պարզեց,



վոր արդեն 3—4 տարի յե՝ ինչ նա ներս է մտել Հայաստանի՝ Վրաստանի սահմանակից շրջանները։

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսական ձեռնարկումների համար տրվել է Հողժողկոմատի և տեղական բյուջեյով 579.598 ռուբլի։ Հիշատակելի յե, վոր այն ժամանակ, յերբ պետական բյուջեյով տրված գումարի քանակը տարեց-տարի աճում է, հասնելով 1925/26 թ. 116.059 ռուբլու, նախընթաց տարվա 70.550 ռուբլու համեմատությամբ, տեղական բյուջեյով հատկացված գումարի չափը նվազում է, իջնելով 1924/25 թ. 243.085 ռուբլուց մինչև 1925/26 թ. 95.777 ռուբլու։

### Գ. ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

Ինչպես վերը հիշված եր, դաշտավարության ասպարեզում կլիմայական պայմաններն ընդհանուր առմամբ նպաստավոր են յեղել միմիայն հացահատիկների և, ընդհակառակը, անբարենպաստ՝ մյուս կուլտուրաների համար։

Առանձնապես պիտի շեշտել բամբակի ցանքսերի կրճատման խնդիրը։

Չնայած բամբակի ծավալման համար ձեռնարկված ագրիկուլտուր աշխատանքներին, այնուամենայնիվ, նրա տարածությունը հաշվետու ժամանակաշրջանում պակասել է, վորի պատճառները պետք է փնտրել բամբակի գների՝ գյուղացիության համար տնտեսապես անձեռնտու լինելու մեջ։ Բամբակի և հացահատիկների գների անհամաչափությունը, իր ժամանակին բամբակագործներին անհրաժեշտ քանակությամբ հացահատիկ չմատակարարելը, պատճառ են դարձել բամբակի ցանքսերի կրճատման և նրա փոխարինմանը՝ հացահատիկով։

Բամբակագործներին ոգնություն ցույց տալու համար գոյություն են ունեցել կենտրոնում մի մասնագետ տեսուչ և 4 շրջանային ագրոնոմներ, մեկական հրահանգչով։ Բամբակի ցանքսերը, ըստ շրջանների, հետևյալ պատկերն են ունեցել.

Աղյուսակ № 10

| №№ | Գավառ | Տարածությունը դեսյատիններով |
|---|---|---|
| 1 | Յերևանի . | 2.221 |
| 2 | Էջմիածնի . | 2.620 |
| 3 | Ղուրդուղուլու | 4.280 |
| 4 | Ղամարլվի . | 1.805 |
| 5 | Մեղրու . . | 110 |
| 6 | Դարալագյազի | 150 |
| | Ընդամենը . | 11.186 |

Յուրաքանչյուր բամբակագործական շրջանում գործել են հատուկ բազա-ագրոկայան կաբինետով, վարձակայանով, ցուցադրական դաշտերով և այլն։

Մասնավոր գյուղացիների տնտեսություններում կազմակերպվել են՝

ցուցադաշտեր, ուր աշխատանքները տարվել են բամբակագործական շրջանի գյուղատնտեսի անմիջական ցուցմունքներով։ Ցուցադրական դաշտեր կազմակերպվել են՝ Յերևանի գավ. 10 գյուղում, Ղամարլվի՝ 9 գ., Եջմիածնի՝ 10 գ., Ղուրդուղուլու՝ 10 գ.։

Բացի ցուցադրական հողամասերից, յերեք շրջանի 14 գյուղում կազմակերպվել են նաև սերմնափորձական դաշտեր։

Չորս բամբակագործական շրջանների 118 անտեսության ձրիաբար բաժանված է 2714 փութ բուսպի ալյուր։ Մեկ դեսյատինի վրա, ընդհանուր առմամբ, գործ է ածվել 30—80 փութ քուսպ։ Ավելի ակներև դարձնելու համար հողի պարարտացման նշանակությունը, նրա մի մասը թողնվել է առանց պարարտացման, իսկ մյուսը՝ պարարտացվել է բուսպով։

1925 թ. ծրագրով յենթադրվում եր 18.700 դեսյատին բամբակացանքս ունենալ, սակայն, հետագայում այդ տարածությունը յենթարկվեց փոփոխության, նկատի առնելով, վոր Այգր-Գյոլի ջրհան մեքենան անցյալ սեզոնին չեր կարող պատրաստ լինել (2.000 դ.)։ Այդպիսով, փաստորեն 16.700 դեսյատին բամբակացանքս եր մնում կատարելու, իսկ իրականում, ստուգման ժամանակ պարզվեց, վոր ցանքսերի տարածությունը կազմում է 11.183 դեսյատին, կամ 70 տոկոս ըստ նախագծված ծրագրի, թեև վարկը բախշվել է 14.080 դեսյատինի հաշվով։

Բամբակենու աճեցողությունը բավականին անհաջող է յեղել։ Գարնանային անձրևները, ապրիլի ձյունը, մասսայական վնասատուները (չոռ, կաբադրին և այլն) կարկուտը, հեղեղը և վաղաժամ ցրտերը զգալիորեն իջեցրին բամբակենու բերքատվությունը։ Տարերային աղետներից վնասվել են 480 դեսյատին (100 տոկոսով), ցրտահարության շնորհիվ պակասել է բերքից՝ 106.624 փութ, կամ ընդամենը՝ 130.000 փութ հնդավոր։

Բամբակացաններին բաց թողնված ամբողջ ավանսի գումարը կազմում է 932.508 ռ. 25 կ., վորից 469.804 ռ. դրամով (դեսյատինին միջին հաշվով 40 ռ. 25 կ.) և ապրանքներով՝ 462.704 ռ. (կամ դեսյատինին միջին հաշվով 40 ռ.). ընդամենը միջին թվով դեսյատինին վարկ է բաշխված 80 ռ. 25 կ.։ Բամբակացանքսերի զարգացմանը նպաստելու համար, ընթացիկ սեզոնին նախատեսված վարկի նորմայից դուրս (65 ռուբլի դես.), բաշխվել է նաև 15 ռուբլի ցորենով (կամ դես. 10-ական փութ ցորեն)։

Հայբամբակի կողմից գյուղացիներին և կոոպերացիային տված ավանսները կազմում են ընդամենը 973.285 ռ., վորից հանգցրած է 838.136 ռ. և մնում է 135.150 ռ., վորը հավասար է 13,89 տոկոսի։

Շնորհիվ բնական պայմանների անհաջող դասավորության, ընթացիկ սեզոնին հնդավորի բերքահավաքն ամենուրեք ուշացավ 1 ամսով։ Առ 1-ն փետրվարի ս. թ. գնված է 483.626 փութ—Հայաստանի սահմաններում և 5575 փութ—Սուրմալվից, ընդամենը—489.195 փութ։ Մեկ դեսյատինի միջին բերքը կազմում է 39,65 փութ, այսինքն՝ նախատեսվածից 10 փթով (50 փութ) պակաս։ Այլ կերպ ասած, ընթացիկ սեզոնին բերքի քանակը իջել է մոտ 25 տոկոսով (նախատեսված 672.223 փութ հնդավորի փոխարեն գնված է 489.195 փութ)։



Բամբակագործության նորմալ զարգացման անհրաժեշտ պայմաններից մեկն ել կազմում է ցորենի յեվ մանուֆակտուրայի կանոնավոր հայթայթումը։ Ընթացիկ սեզոնն այդ տեսակետից չափազանց աննպաստ է յեղել։ Ստացված ցորենը վորակով չափազանց ցածր է յեղել, իսկ մանուֆակտուրա միայն յերկու վագոն է ստացվել, այն ել շատ ուշ (փետրվարին)։

Պտղաբուծության յեվ խաղողաբուծության բնագավառում հաշվետու ժամանակաշրջանում հաշվի յե առնված 561 դեսյատին մակարդակի ավելացում։ Ավելացումը կատարվել է գերազանցորեն ի հաշիվ խաղողի այգիների։ Պտղատու այգիների մակարդակն առանձին փոփոխության չի յենթարկվել։ Խաղողի այգիների բերքը յեղել է 3.519.217 փութ։ 1925/26 թ. միլդիումը և ոիդիումը խիստ ազդեցին բերքի վրա, նամանավանդ Ոշականի, Բարանայի և Իջևանի շրջաններում։

Տեխնիկական բույսերի շարքում արժանի յե հիշատակել նաև ծխախոտը, վորի զարգացումը Հայաստանում ամեն կերպ քաջալերվել է։ Անցյալ տարվա 272 դեսյատինի փոխարեն հաշվետու ժամանակաշրջանում ծխախոտի տարածությունը հասել է 488 դեսյատինի, վորը բացատրվում է այդ կուլտուրայի խիստ շահավետությամբ։ Ծխախոտագործության հերթական անելիքը ծխախոտի տաճկական բարձր տեսակների տարածումը պետք համարել։

Անասնապահությունը մեր գյուղատնտեսության եկոնոմիկայի մեջ խոշոր տեսակարար կշիռ ունի։ Շնորհիվ բնապատմական նպաստավոր պայմանների, անասնապահությունը մեր յերկրի տնտեսության մեջ հետագայում ել ավելի խոշոր տեղ պիտի գրավի։ Անասնապահությունն արդեն հասել է նախապատերազմյան չափին, իսկ մի քանի ճյուղերում գերազանցել է այն։

Մեր գյուղացիության անասունները, կանոնավոր կերից ու գոմերից զուրկ լինելու հետևանքով, քիչ արդյունք են տալիս։ Մի շարք շրջաններում կատարված ցուցադրական կերակրումները բերում են այն համոզման, վոր ներկա կթաններից յերկու-յերեք անգամ ավելի արտադրանք կարելի յե ստանալ։

Անասունների ազնվացման համար գործել են բեղմնավորման կայաններ, թվով 20 հատ։ 10 կետերում գոյություն են ունեցել ցուլանոցներ, վորոնք պահվել են տեղական միջոցներով։

Անասնապահությունը բարձրացնելու գործում խոշոր նշանակություն ունեն Լոռվա և Դիլիջանի անասնաբուծարանները, վորոնք իրենց ազնվացեղ և տեղական լավ տեսակի անասուններով հանդիսանում են այն բնակազմը, վորը ի վիճակի յե լինելու հանելու մեր անասնապահությունը իր ներկա աննախանձելի դրությունից։

Ցուցադրական ֆերմաներից աչքի յե ընկնում Նոր-Բայազետինը։

Կենտվիճվարի 1926 թ. գարնանային հետազոտությունը անասնապահության վիճակն այսպես է ներկայացնում (Յերևանի և Լենինականի հետ միասին).

Աղյուսակ № 11

| №№ | | Խոշոր եղջյուրավորներ | Մանր եղջյուրավորներ | Ձի | Խոզ | Էշ, ջորի և ուղտ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Բացարձակ (հազարներով) | 781,0 | 1385,6 | 29,0 | 33,5 | 29.517 |
| 2. | Տոկոսներ մինչպատեր. | 87,5 | 88,6 | 56,3 | 142 | 71,2 |

Գյուղատնտեսության զարգացման գործում խոշոր նշանակություն ունի արոտաշինարարությունը։ Արոտավայրերի ընդհանուր տարածությունը հավասար է 395.887 դես., որից վարձով տրվել է մեր գյուղացիության — 203.892 դես., իսկ դրսից յեկած քոչվորներին՝ 191.995 դես.։ Արոտավայրերի ընդհանուր յեկամուտը — 322.841 ռ. յե յեղել։ Անասնապահությունը զարկ տալու տեսակետից, անհրաժեշտ է զատել պետական արոտավայրերի այն մասը, որը պիտի տրամադրվի գյուղացիներին ու ընդմիշտ առանձնացնել այն արոտատեղերը, վորոնք պիտի ամրացվեն քոչվորների օգտագործության համար։

Հանրապետության անտառային տարածությունը ներկայումս հետևյալ պատկերն ունի.

Աղյուսակ № 12

| ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ | Անտառային պետական ֆոնդ: Հողժողկոմատի անմիջ. իրավաս. տակ. | Պաշտպանողական | Քաղաքային | Լենինարդյունաբերական | Բնության հիշատակարաններ | Տեղական նշանակություն ունեցող | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Դ Ե Ս Յ Ա Տ Ի Ն Ն Ե Ր Ո Վ | | | | | | |
| 1. Անտառների ընդհանուր տարածությունը . | 296.230 | 32.000 | 300 | 100 | 90 | 12.546 | 341.266 |
| 2. Այդ թվում անտառների համար տարածությունը . . . | 215.832 | 20.000 | 300 | 100 | 90 | 12.546 | 248.868 |

Անտառների տարածությունը Հայաստանի հանրապետության ընդհանուր տարածության մոտ 9 տոկոսն է կազմում։

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի անտառներից բաց է թողնված 10.150 խ. ս. շինափայտ և տաղձափայտ և 32.219 խ. ս. վառելափայտ, որից ձրի և զեղչով՝ 10.160 խ. ս.։

Մինչև հաշվետու ժամանակամիջոցը, Հայաստանի անտառները ուսումնասիրված չէյին։ Յելնելով այն տեսակետից, որ անտառային ռացիոնալ տնտեսություն հնարավոր է վարել միմիայն անտառաշինարարական աշխատանքների տվյալների հիման վրա, անտառա-շինարարական աշխատանքներ



են կատարված հետևյալ անտառապետություններում.

| | | |
|---|---|---|
| Ախթալայի անտառապետություն | 51.344 | դես. |
| Ղարաքիլիսայի » | 20.379 | » |
| Իջևանի » | 23.684 | » |
| Կաքենդի » | 39.360 | » |
| | 134.767 | » |

Այսպիսով, հետազոտված և բարեկարգված է Հայաստանի անտառների 39 տոկոսը։

Նկատի առնելով, որ Հայաստանի անտառները, ինչպես հիշվեց, յերկրի ընդհանուր տարածության շատ աննշան տոկոսն են կազմում, որ ազգաբնակչության փայտեղենի կարիքը նրանք անկարող են լրիվ բավարարել և որ անտառներն անհրաժեշտ է պահպանել, 1924/25 թ. հիմնվել են տնկարաններ՝ Ղարաքիլիսայում, Լոռվում, Ծաղկաձորում, Յերևանում և Ալագյազի անտառամասերում, անտառաբուծական աշխատանքներ տանելու նպատակով։

1925/26 թ կատարվել է տեղական նշանակություն ունեցող անտառների զատումը.

| | | |
|---|---|---|
| Զանգեզուրի գավառում | 4.500 | դես. |
| Մեղրու » | 1.930 | » |
| Փամբակ-Լոռու » | 6.116 | » |
| Ընդամենը՝ մոտ | 12.546 | » |

Զատված անտառները մեծ մասամբ այժմ փաստորեն հանձնված են համապատասխան հողային հասարակությունների, հատուկ մշակված ակտերով և հատակագծերով։

Հաշվետու ժամանակաշրջանում անտառային ամբողջ յեկամուտը (առանց մասհանումների՝ տեղերի օգտին և այլն) հավասար է յեղել 361.172 ռուբլու, որից՝ 1924/25 թ.՝ 134.879 ռուբլի, իսկ 1925/26 թ.՝ 226.293 ռ.։

1925/26 թ. անտառային տնտեսությունը ծախք է ունեցել մոտ 188 հազար ռ.։ Յեթե այդ ծախքը դուրս հանենք ընդհանուր յեկամուտից, կը տեսնենք, որ անտառային տնտեսությունը այդ տարվա ընթացքում 38 հազար ռ. մաքուր յեկամուտ է տվել։ Ավելացնելով դրա վրա ձրի և զեղչով բաց թողնված փայտեղենի արժեքը՝ 37.329 ռ., ընդհանուր օգուտը հավասար կը լինի 75.329 ռուբլու։

Ձկնաբուծության ասպարեզում շարունակվել է նախորդ տարվա աշխատանքների խորացումը։ Ձկնաբուծարանի կողմից կատարվել են մի շարք էքսկուրսիաներ, ինչպես Սևանի, այնպես և մյուս՝ փոքր լճերի շուրջը, նրանց ուսումնասիրելու նպատակով։ Շարունակվել է Սևանա լճի խորության և հատակի քարտեզի կազմելը, ուսումնասիրվել է ֆորելի սիստեմատիկան և կենսաբանությունը, ժողովվել են խրամուլու, կողակի և սիգայի

վերաբերյալ նյութեր: Շնորհիվ ձեռք բերված առագաստանավի, ձկնաբուծարանը հնարավորություն է ստացել էլ ավելի լայն հետազոտություններ կատարելու:

1925/26 տարվա ընթացքում Նոր-Բայազետի ձկնաբուծարանը հավաքել է ֆորելի 20.763.000 հատ խավիար ու լցրել լիճը: Գարնանը բերվել է նույն նպատակով 1.800.000 սիգայի խավյար:

Սևանա լճում արդեն սկսվել է նախորդ տարիներում բազմացրած սիգայի որսը. 1926 թ. որսված է 10.000 հատ սիգա:

Մեղվաբուծության ասպարիզում քիչ աշխատանք է կատարվել, կենտրոնում մասնագետ չլինելու պատճառով: Այդ բնագավառում աշխատել են ընդամենը 5 հրահանգիչ, որոնցից մեկը Հայգյուղկոոպի գծով, իսկ 4-ը գավառներում՝ Լենինականում, Փամբակ-Լոռում, Նոր-Բայազետում և Յերևանում:

Իրենց գործունեյությունը շարունակել են Յերևանի, Լենինականի և Նոր-Բայազետի օրինակելի մեղվանոցները: Նախորդ տարիների նման փթախտը ուժեղ կերպով գործել է Հայաստանի զանազան գավառներում, որը, ձեռք առնված միջոցների շնորհիվ, գյուղատնտեսական տարվա վերջում թուլացել է:

Գյուղացիությանը առողջ սերունդ և մայրեր մատակարարելու նպատակով, Ղարաքիլիսայի Փամբակի վայրում հիմնադրվել է պետական մեղվանոցը՝ 303 փեթակով, ուր տեղափոխվել են Դիլիջանի և նախկին Խորհրդային 4-րդ տնտեսության փեթակները:

Շերամապահության զարգացման ասպարիզում տարբեր ցեղերի հունդի փորձեր են կատարվել՝ մեր պայմաններին համապատասխանող հունդի տեսակները գտնելու համար: Շարունակվել են նաև սելեկցիայի և խաչաձևության աշխատանքները: 1926 թվին հունդի արտադրությունը հասել է մինչև 60.000 տուփի, որից կոնտրոլի յե յենթարկված չերամկայանում 56.000 տուփ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել ու ավարտվել է Յերևանի մետաքսի գործարանի կառուցումը 48 բասսեյնով, և վերանորոգվել է Ղափանի մանարանը: Այդ յերկու գործարանները կարող կը լինեն Հայաստանի բոժոժի 80 տոկոսը վերամշակել:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վորպես փորձացուցադրական ձեռնարկություններ, Խորհրդային տնտեսությունները խոշոր անելիքներ ունեն մեր հետամնաց գյուղատնտեսական սիստեմի հեղաշրջման գործում և գյուղատնտեսական նոր ձևերի մասսայականացման ասպարիզում: Այդ նկատառումներով, Խորհրդային տնտեսությունները մեզ մոտ կազմակերպված են կլիմայական զանազան գոտիներում, նպատակ ունենալով մշակելու և տարածելու յուրաքանչյուր շրջանին համապատասխան և շահավետ կուլտուրաներ: Այսպես՝ դաշտավայրի զանազան շրջաններում կազմակերպվել են յերկու խորհրդային տնտեսություններ, (1-ին և 3-րդ), որոնք գերազանցապես նպատակ ունեն բարձր տեսակի կա-



յուն վազերի տարածումը և տեղական հին սիստեմի այգիների աստիճանական փոխարինումը յեվրոպական սիստեմի այգիներով, ուր մշակումը հնարավոր կը լինի կատարել մեքենայական ուժի միջոցով: Այդ Խորհրդային տնտեսությունները միմիայն 1925 թ. ընթացքում բաց են թողել այգեգործներին 19.000 հատ արմատակալած և պարզ զանազան տեսակի վազերի մատ և 1.200 տունկ: Նախալեռնային գոտում, Կոտայքի շրջանում, կազմակերպվել է Մյասնիկյանի անվան Խորհրդային տնտեսությունը, որի հիմնական նպատակն է՝ գտնել այդ շրջանի բնապատմական պայմաններին համապատասխան այնպիսի մի կուլտուրա, որը շահավետ դարձնի շրջանի հողասակավ գյուղացիության տնտեսությունը: Տնտեսության 3 տարվա դիտողությունները բերել են նրան այն համոզման, որ այդ կուլտուրան այժմս ծխախոտը կարելի յե համարել: Բացի դրանից, տնտեսությունը նպատակ է դրել գյուղատնտեսության մեջ սերմափոխության և սերմաշրջանառության սիստեմը մտցնելու: Այդ ուղղությամբ կատարված փորձերը դրական հետևանքներ են տվել, ու Կոտայքի շրջանի համար մեկ դեսյատինից սովորաբար 60—70 փթից չանցնող ցորենի բերքը 1926 թ. փորձադաշտերի վրա—159 փթի յե հասել:

Բանջարանոցների և բոստանների վերաբերյալ՝ տնտեսության մեջ կատարված փորձը բերել է այն յեզրակացության, որ խոշոր տնտեսությունների համար, ուր անհրաժեշտ է մեծ քանակությամբ վարձու բանվորներ բանեցնել, շահավետ բանջարեղեններ՝ պետք է համարել՝ կաղամբը, պամիդորը, տաքդեղը, իսկ, օրինակ, սոխը, բամիան, կանաչեղենը չեն արդարացնում գործադրած ծախսերը: Դաշտային կուլտուրաների մեջ ուշադրության արժանի յե ճակընդեղը, որպես կեր կովերի համար: Յերկու տարվա փորձը ցույց է տալիս, որ ճակընդեղի բերքատվությունը տարեց տարի բարձրանում է: Այսպես, 1924 թ. ստացվել է մեկ դեսյատինից 300 փութ, իսկ 1926 թ.—500 փութ: Բացի դրանից, պետք է նշել, որ ճակընդեղի ցանքսի շնորհիվ, նրան հաջորդող բույսի բերքատվությունը խիստ աճում է: Տնտեսության դիտողությունները և փորձերը ապացուցել են, որ այգեգործությունը խիստ շահավետ է այս շրջանի համար, ուստի նրան զարկ տալու խնդիրը հատուկ ուշադրության առարկա պիտի դառնա: Այդ նկատառումներով, 1925 թ , տնտեսության մեջ կազմակերպվել է պտղատու և այլ տեսակի ծառերի տնկարան, որի տարածությունը 1926 թ. հասցված է 2 դեսյատինի:

Զուգընթացաբար՝ տնտեսության մեջ զարգացվել են նաև կաթնատնտեսություն, խոզաբուծություն, մեղվաբուծություն և թռչնաբուծություն: Այդ ճյուղերից տնտեսության համար շահավետ պիտի համարել կաթնատնտեսությունը և մեղվաբուծությունը, իսկ խոզաբուծությունը և թռչնաբուծությունը զուտ ցուցադրական նշանակություն ունեն:

Անասունների ազնվացման գործը կենտրոնացված է Լոռվա Պետական անասնաբուծարանում, որը արտելներին և գյուղացիությանը զտարյուն ցուլեր է մատակարարում: Տնտեսությունն ունի 400 գլուխ զանազան ցեղերի տավար, որոնց թվում նաև ազնվացեղ շվից և սիմենտալ ցեղի կովեր:

Խորհրդային տնտեսությունների ծախքերն ու յեկամուտները հետևյալ պատկերն են տալիս.

Աղյուսակ № 13

| Վոր տնտեսության | ԾԱԽՍ | | ՄՈՒՏՔ | |
|---|---|---|---|---|
| | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| Խ. 1-ն տնտեսություն | 53.232 | — | 19.253 | — |
| Խ. 2-դ ,, | 55.874 | — | 52.522 | — |
| Խ. 3-դ ,, | 81.548 | — | 34.965 | — |
| Անասնաբուծարան . | 110.000 | — | 32.000 | — |
| Ընդամենը . | 300.654 | — | 138.740 | — |

Ըստ տնտեսությունների՝ կատարված են հետևյալ աշխատանքները.—Առաջին Խորհրդային տնտեսությունն ունի 62 դես. տարածություն, վորից 27 դես. խաղողի այգիներ են, մեծ մասամբ ծերացած վազերով, իսկ 10 դես.— պտղատու ծառերի այգիներ: Վերանորոգչական աշխատանքներ են կատարվել նոր այգիներ տնկելու ուղղությամբ: Կազմակերպված է պտղատու ծառերի տնկարան, վերանորոգված են գոյություն ունեցող շենքերը և կառուցված են նորերը: Տնտեսության ծախսերը գերազանցում են 33.979 ռ., վորի մեջ մտնում են 4469 ռ. ամորտիզացիոն գումարները: Մնացած 29.510 ռ.-ուց 20.000 ռ. ծախսվել է հիմնական աշխատանքների վրա՝ նոր այգիներ տնկելու, հինը բարելավելու, շենքեր կառուցելու, ինվենտար ձեռք բերելու և այլն:

Մյասնիկյանի անվան յերկրորդ խորհրդային տնտեսությունն ընդամենը 109 դես ունի, վորից դաշտավարության համար պիտանի յե վոչ ավելի քան 70 դ.: Տնտեսությունը, քաղաքից 14 վերստի վրա գտնվելով, մերձքաղաքային տնտեսության բնույթ է կրում և իր մեջ նման տնտեսության հատուկ անասնապահություն պիտի կազմակերպի, նպատակ ունենալով անասնապահությունից ստացված կաթը վոչ թե տեղում վերամշակելու, այլ վաճառահանելու քաղաքում: Այդ այն նշանակությունն ունի, վոր շրջանի բնակչությունը, օրինակ վերցնելով, արտելներ կկազմի և իր կաթնամթերքները կտանի Յերևանի շուկայում: Տնտեսությունն ունեցել է գերածախս՝ 3352 ռ., յեթե նկատի առնենք, վոր ծախսերից 10.000 ռ. չափ հիմնական դրամագլխի ուժեղացմանն է գնացել, տնտեսությունը, ընդհանուր առմամբ, անդեֆիցիտ պիտի համարել:

Յերրորդ խորհրդային տնտեսությունը պետական խաղողաբուծական տնտեսություն է վերածված, և առաջիկա հնգամյակում մինչև 100 դես. նոր այգիներ պիտի տնկի: 1925/26 թ.թ. ընթացքում մինչև 16 դես. նոր այգիներ են տնկված: Այգեգործության զարգացման զուգընթաց՝ տարվել են նաև դաշտային-կուլտուրաների աշխատանքներ, վորոնք այս տարի փորձնական բնույթ են կրել՝ կուլտուրաների համեմատական շահավետությունը պարզելու համար:



Դաշտավարության աշխատանքները 1926 թ. խոշոր չափով մեխանիզացիայի յեն յենթարկված: Տնտեսության մեջ աշխատում են 3 տրակտոր, վորոնք, բացի տնտեսության հողերից, հերկում են նաև շրջանի գյուղացիության հողերը: Ձեռք է բերված կալսող մեքենա, վորը տնտեսության բերքը կալսելուց հետո, փոխադրված է շրջակա գյուղերը, գյուղացիների հացահատիկները կալսելու: Տնտեսությունը գերածախս է ունեցել—46.583 ռ.: Այդ գումարի մեջ մտնում է—5.130 ռ. դրամագլխի ամորտիզացիան, մնացած—41.453 ռ.-ուց 37.000 ռ. ծախսվել է հիմնական դրամագլխի ուժեղացման համար, օրինակ՝ նոր խաղողի այգիներ տնկելու, գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերելու և այլն:

Լոռվա Պետական անասնաբուծարանը—ձեռք է բերել 50 հատ շվից և սիմենտալ ցեղի կովեր և ցուլեր, 150 հատ կխարյուն և տեղական, Ղազախի ցեղի, կովեր և ցուլեր: Կառուցված և վերանորոգված են գոմեր՝ անասունների համար և բնակարաններ: Կաթնատնտեսությունը ռացիոնալ հիմքերի վրա դնելու նպատակով, կառուցված է պանրագործարան, նորագույն հարմարություններով: Տնտեսությունն ունեցել է—78.000 ռ. գերածախս, վորը բացառապես գնացել է գույքի ավելացման վրա՝ շենքերի, անասունների, ինվենտարի և այլն:

Ընդհանուր առմամբ, Խորհրդային տնտեսությունները ունեցել են 161.654 ռ. գերածախս, վորից 141.914 ռ. ստացված է վարկի կարգով, իսկ մնացորդը ծածկված է այլ աղբյուրներից:

Гос. Библиотека Института Востоковедения Академии Наук

3741-82

# II. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

*Ա. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ*

Նախընթաց ժամանակաշրջանը բնորոշ է արդյունաբերության ընդհանուր վերելքով: Այդ շրջանում տարվել են թե գոյություն ունեցող, բայց չաշխատող, ձեռնարկությունների և գործարանների (Ալլավերդու, Ղաթարի, «Կարմիր Նոյեմբեր» գործարանների ու հանքերի) վերականգնման և թե նոր գործարանների (ձիթ-ոճառ, տաղձագործական, բամբակազտիչ, մանվածային ու հիդրոկայանների) կառուցման աշխատանքներ:

Միմիայն Ժողտնտխորհի ձեռնարկությունների ընդհանուր արտադրանքը հաշվետու ժամանակաշրջանում 8.812.400 ռուբլի յե յեղել: Իսկ յեթե այդ գումարին ավելացնենք Հայբամբակի բամբակազտիչ և ձիթ-ոճառ գործարանների արտադրանքը՝ 4.362.800 ռուբլի և Հայանտառտրեստի արտադրանքը՝ 443.400 ռ., այդ դեպքում ընդհանուր արտադրությունը կկազմի 13.618.600 ռուբլի:

Արտադրության աճման հետ միասին, աճել է նաև արդյունաբերության մեջ զբաղված բանվորական ուժը: Բանվորների, ծառայողների ու սաորին պերսոնալի թիվը հաշվետու ժամանակաշրջանում փոփոխվում է հետևյալ կերպով (Ժողտնտխորհի ձեռնարկություններում).

Աղյուսակ № 1

| №№ | | Առ 1-ն ապրիլի 1925 թ. | Առ 1-ն հունվարի 1927 թ. | Քանի տոկոս է աճել |
|---|---|---|---|---|
| 1 | Բանվոր . . | 1.475 | 4.134 | 180,3 |
| 2 | Ծառայող . . | 194 | 401 | 106,7 |
| 3 | Սաորին պերսոնալ | 114 | 190 | 66,6 |

Ծառայողների թվի նկատելի աճումը բացատրվում է արդյունաբերության մեջ տեխնիքական անհրաժեշտ կադրի լրացումով: Բանվորների խոշոր մասը զբաղված է պղնձարդյունաբերության մեջ և վողջ բանվորության 65 տոկոսն է կազմում:

Արդյունաբերության և արտադրության վերելքին զուգընթաց՝ բարձրա-



նում է նաև աշխատավարձը: Աշխատավարձի աճումը հետևյալ պատկերն է տալիս (Ժողտնտխորհի ձեռնարկություններում):

Աղյուսակ № 2

| №№ | Ձեռնարկության անունները | Ձերվոն ռուբլիներով | | Տոկոսներով | Բյուջեյական ռուբլիներով | | Տոկոս. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 24/25 թ. | 25/26 թ. | Առ 24/25 թ. | 24/25 թ. | 25/26 թ. | Առ 24/25 թ. |
| 1 | «Արարատ» . | 57,5 | 61,8 | 107,5 | 28,77 | 29,22 | 101,6 |
| 2 | Կաշվարդ . . | 36,8 | 61,4 | 166,9 | 18,37 | 29,03 | 158,0 |
| 3 | Պոլիգրաֆտրեստ | 47,9 | 62,5 | 130,5 | 2[illegible],91 | 29,55 | 123,6 |
| 4 | Մեխգործարան | 52,0 | 57,3 | 110,2 | 25,96 | 27,09 | 104,4 |
| 5 | Ելեկտրակայան | 45,1 | 49,8 | 110,4 | 22,52 | 28,54 | 104,5 |
| 6 | Ալլավերդի . | 34,0 | 40,0 | 119,7 | 16,97 | 18,91 | 114,4 |
| 7 | «Կարմիր Նոյեմբեր» . . . . | 24,9 | 37,1 | 149,0 | 12,43 | 17,54 | 141,1 |
| 8 | Տեքստիլ գործարան . . . . | 14,7 | 25,6 | 174,1 | 7,34 | 12,10 | 164,9 |

Ծանոթություն.—Միջին ինդեկսը (կոոպ. յեվ մասնավոր)

Կոոպ. 24/25 թ. . . . . . . . . 20,03

Մասն. 25/26 » . . . . . . . . 21,15

1924/25 և 1925/26 տարիների թվերը ցույց են տալիս, վոր բոլոր ձեռնարկություններում աշխատավարձը բարձրացել է—նոմինալը՝ 7,5-ից մինչև 74,1 տոկ., իսկ ռեալը՝ 1,6-ից մինչև 64,9 տոկ.:

Աշխատավարձի տարբեր աճումն առանձին ձեռնարկություններում կախված է յերկու պատճառներից —մի կողմից՝ բարձրացված է աշխատավարձը արդյունաբերության ցածր վարձատրվող ճյուղերում, իսկ մյուս կողմից՝ հատավարձի անցնելու հետևանք է:

1924/25, ինչպես և 1925/26 թ. թ. համեմատաբար ցածր աշխատավարձ յեղել է Ալլավերդում, Ղաթարում և Տեքստիլ գործարանում. այդ բացատրվում է նրանց թույլ արտադրողականությամբ, վորը հետևանք է լեռնային արդյունաբերության մեջ կատարող վերականգնման աշխատանքների և տեքստիլ գործարանի բանվորների ցածր վորակի: Առանձնապես կաշվի արդյունաբերության մեջ տարեկան միջին աշխատավարձի բարձրացումը հետևանք է հատավարձի անցնելուն և աշխատանքի արտադրողականության բարձրացման:

**Բ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ**

«Արարատ» տրեստի արտադրությունը յեղել է 3.474.000 ռ.: Տրեստի արտադրական աշխատանքը կախում է ունեցել բերքի քանակից, հումնյութերի հաջող մթերումից, վերջինիս և պատրաստի արտադրանքի գների նկատմամբ յեղած քաղաքականությունից, ինչպես նայեվ Ռուսաստանի շուկայի կոնյունկտուրայից, ուր իրացվում է տրեստի արտադրանքի 85-ից մինչև 90 տոկ.:

Այդ տեսակետից, ամենանպաստավոր շրջանը, կոնյունկտուրայի իմաստով, յեղել է 1924/25 թ. յերրորդ յեռամսյակից մինչև 1925/26 թ. 3-րդ յեռամսյակը, յերբ տրեստի արտադրանքի խիստ պահանջ կար, վորը և համապատասխան կերպով ընդլայնեց արտադրությունը: Յերրորդ յեռամսյակից հետո դրությունը մի քիչ փոխվում է. իրացումն ընկնում է, ու սրա հետ միասին ընկնում է և արտադրությունը:

Անցած ժամանակաշրջանում կոնյակ և սպիրտ պատրաստվել է.

| | |
|---|---|
| Կոնյակ . . . . . . . . . . . . . . . | 2.856.000° |
| Ռեկտիֆիկացիոն սպիրտ . . . . . . . | 6.815.500° |

Դուրս գալով արտադրության մեջ ծախսվածը (գինուն խառնելու համար), ընդհանուր արտադրանքը կը լինի.

| | |
|---|---|
| Կոնյակ . . . . . . . . . . . . . . . | 2.699.900° |
| Սպիրտ . . . . . . . . . . . . . . . | 5.681 100° |

Բացի դրանից, նույն ժամանակաշրջանում պատրաստված է 118.500 դույլ գինի:

Կաշվարդյունաբերությունը ընդգրկում է յերկու գործարան, վորոնցից մեկում պատրաստվում են խոշոր կաշիներ, իսկ մյուսում՝ առավելապես մանր:

Հաշվետու ժամանակաշրջանում այդ գործարաններում կատարվել են շենքերի հիմնական վերանորոգում և ընդարձակում, ինչպես նաև ձեռք է բերվել նրանց համար նոր սարքավորում, վորը զգալիորեն մեքենայնացրել է արտադրությունը:

Այդ ժամանակաշրջանում պատրաստված է 14.788 հատ խոշոր և 167.257 հատ մանր կաշի: Գործարանների ամբողջ արտադրանքը 1.227.900 ռուբլի յե:

Ալավերդու և «Կարմիր Նոյեմբեր» գործարաններում և հանքերում ներկայումս արտադրական աշխատանքներ են կատարվում: Մի շարք տարիների ընթացքում անգործության մատնվելուց հետո, աշխատանքները վերսկըսվեցին «Կարմիր Նոյեմբերում» 1924 թ. ամառը, իսկ Ալավերդում՝ 1925 թ. գարնանը:

Վերականգնման աշխատանքներն ինտենսիվ կերպով տարվեցին նամանավանդ 1925/26 թ. ընթացքում, վորից հետո ավելի ուժեղանում են շահագործման աշխատանքները:



Հաշվետու ժամանակաշրջանում Ղաթարի և Ալավերդու գործարանների ու հանքերի արտադրությունը կազմում է.

| | | |
|---|---|---|
| Պղինձ՝ հալած . . . . . . . . . . | 104.888 | փութ. |
| Հանք՝ ստացված . . . . . . . . . | 1.006.383 | » |
| Հանած և լվացած ծծմբահրաքար . . | 349.027 | » |
| Կարբիտ՝ մշակված . . . . . . . . | 25.508 | » |
| Ընդամենը՝ արտադրանք . . . . . | 2.139.947 | ռուբլի: |

Արդյունաբերության մյուս ճյուղերից անհրաժեշտ է նշել Լենինականի Լուկաշինի անվան տեքստիլ գործարանը:

Այդ գործարանը մինև որս ցուցադրական դպրոց է յեղել և նպատակ է ունեցել ապագա գործարանի բանվորական կադր պատրաստելու: Դպրոցըն ունեցել է յերեք բաժանմունք՝ մանվածային, անկվածային և տրիկոտաժ: Հիմնական նպատակ ունենալով վորակյալ բանվորական ուժ նախապատրաստելու, Լենինականի գործարանը միաժամանակ զարգացրել է և արտադրական գործունեյություն: 1925 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1927 թ. հունվարի 1-ը պատրաստված են 7979 փութ մանվածք, 657,3 հազար մետր բյազ և 36.000 ռուբլու տրիկոտաժ գործվածքներ: 7.979 փութ մանվածքի մեջ չի մտնում արտադրության մեջ բյազ պատրաստելու համար գործածված մանվածքը, վորը յեթե հաշվի առնենք, ամբողջ քանակությունը կըլինի 14.231 փ.:

1926 թ. ոգոստոսից սկսվել է նոր մանվածքային գործարանի սարքավորումը, վորը կավարտվի 1927 թ. մայիսին: Վերոհիշյալ ժամանակամիջոցում ըստ ծրագրի յենթադրվում է դնել 37.544 մանվածային և 2.000 վոլորող իլիկ, վորոնցից 12.500-ը ապրիլից կըսկսեն աշխատել:

Բամբակազտիչ գործարաններում առ 1-ն փետրվարի մաքրված է 373.887 փութ բամբակ, կամ ամբողջ ընդունված քանակի 77 տոկոսը: Բամբակի զտման արդյունքը ընթացիկ սեզոնին, շնորհիվ հնդավորի նվազ վորակի, անհաջող պիտի համարել: Այսպես, միջին հաշվով մաքրած բամբակի յուրաքանչյուր փթին ավելի ծախսվել է մոտ 3 ֆունտ հնդավոր, կամ 36 կոպեկ՝ դրամով արտահայտված: Առ նույն թիվ զտումից ստացվել է մաքրած բամբակ՝ 110.148 փութ:

Ձիթ-ոճառ գործարանի աշխատանքներն սկսվել են անցյալ թվի ոգոստոս ամսից: Առաջին ամիսը—ոգոստոսն անցել է փորձերի համար, իսկ փաստական աշխատանք սեպտեմբերից է սկսվել:

Առ 1-ն հունվարի ս. թ. գործարանը վերամշակել է 248.392 փ. հնդի սերմ: Գործարանի ընդհանուր արտադրանքը յեղել է 1.446.800 ռ.:

Անտառարդյունաբերության գործող արտադրական ձեռնարկությունները հետևյալներն են.

1. Փայտամշակման գործարան Յերևանում, վոր աշխատում է 1926 թ.

դեկտեմբերի 1-ից: Գործարանն ունի 5 ելեկտրոմոտոր 75 և կես ձիաուժ, 22 դազգյահ, կահ-կարասիք ու տների փայտյա մասեր պատրաստելու համար (լուսամուտներ, դռներ, հատակ, առաստաղ և այլն):

Գործարանի տարեկան մոտավոր արտադրողականությունը կազմում է 45.000 միավոր (դուռ, լուսամուտ, ատաղձագործական պլրանքներ), 500 հազար ռուբ. արժողությամբ:

2. Սղոցարան-գործարան (դարձյալ Յերևանում) մի շրջանակավոր և մի մեխանիքական ցիրկուլյար սղոցներով: Գործարանն օրական 15.000 խոր. ֆոտ. սղոցած փայտանյութ կարող է արտադրել: Այդ դազգյահների նշանակությունն այն է, որ, սովորական սղոց-դազգյահների հետ համեմատած, արտադրողականությունը բարձրանում է մինչև 300 տոկոս, իսկ սղոցելու ծախքը, ընդհակառակը, 50 տոկոսով իջնում է:

3. Ճահալվի սղոցարան-գործարան, մի շրջանակավոր դազգյահով և ցիրկուլյար սղոցով: Սղոցարան-գործարանի արտադրողականությունը տարեկան 100.000 խոր. փոտնաչափի յե հավասար:

4. Դիլիջանում վերասարքավորված է յերկու սղոցարան-գործարան, մեկական ցիրկուլյար դազգյահով, յուրաքանչյուրը—60.000 խոր. ֆոտ. փայտանյութի արտադրողականությամբ և 18 ձիաուժ:

5. Ճամշադինի սղոցարան-գործարաններ, վորոնցից մեկը՝ ջրապտույտ անիվով, իսկ մյուսները՝ կոզքի,—ցիրկուլյար: Դրանցից առաջինի արտադրողականությունը հասնում է մինչև 50.000 խոր. ֆոտ., իսկ մնացած յերեքինը՝ մինչև 200 հազարական շպալի:

6. Այրումի շրջանի յերկու ցիրկուլյար դազգյահ, վորոնք աշխատում են լոկոմոբիլ մեքենայով, տարեկան 200.000 խոր. ֆոտ. փայտանյութի հնարավոր արտադրողականությամբ: Յերկու կոզքի շրջանակավոր սղոց՝ շպալներ պատրաստելու համար, վորոնք լրիվ բեռնավորման դեպքում տարեկան 180.000 շպալ կարող են արտադրել:

Գ. ՄԹԵՐՈՒՄ

Արդյունաբերական հում նյութերի հիմնական սպառողները հանդիսանում են՝ կաշվի, գինե-կոնյակի և տեքստիլ արդյունաբերությունը, վորոնք այդ նյութերը գյուղատնտեսությունից են ստանում: Արտադրության աճման հիմնական նախապայմաններից մեկը յերկրի հում նյութերի դրության բարելավումն է, և սրա հետ էլ կապված է մթերումների քանակի ու գների տատանումների խնդիրը:

Այդ տեսակետից, «Արարատ» տրեստի արտադրական գործունեության վրա ազդել է 1925 թ. անբերրիությունը և հում նյութերի գների բարձր լինելը: 1925 թ. ապրիլի 1-ից մինչև 1926 թ. ապրիլը տրեստը 2.625.800 ռուբլու հում նյութ է գնել:

Ինչ վերաբերում է Կաշվարդին և Տեքստիլ գործարանին, նրանց մթերումները կանոնավոր են կատարվել: Տեքստիլ գործարանը բացառապես տեղական հում նյութերով է աշխատել, իսկ Կաշվարդը իր մթերումների մի



չնչին մասը կատարել է հարևան հանրապետություններում և այն էլ խոշոր կաշիների վերաբերյալ, իսկ մանր կաշիները մթերվել են գլխավորապես յերկրի ներսում, բացառությամբ 53.140 ռուբլի արժողությամբ 13.640 հատ կիսաֆաբրիկատի, վորը ստացված է յեղել Պարսկաստանից, Անդրպետառևի միջոցով: Նույնպես վերջինիս միջոցով գնվել է 2.984 հատ խոշոր ամերիկյան կաշի՝ 87.238 ռուբլու: Կաշվարդը հաշվետու ժամանակաշրջանում 699.132 ռուբլու հում նյութ է ստացել:

Տեքստիլ գործարանը մթերել է 17.416 փութ բամբակ—351.340 ռուբլու:

Այդպիսով, մթերման ընդհանուր գումարը հավասար է 3.676.270 ռ.:

Դ. ԻՐԱՑՈՒՄ

Արդյունաբերության աճման հետ միասին հաշվետու ժամանակաշրջանում ընդլայնվել է և իրացման չափը, վորը վոչ միայն ընդգրկում է ստացված արտադրանքը, այլ և գերազանցում է այն՝ 8,8 տոկոսով: Այդ յերևույթը բացատրվում է նրանով, վոր վաճառվել է նաև 1925 թ. սկզբներում կուտակված արտադրանքը, վորը վերաբերում է գլխավորապես «Արարատ» տրեստին:

Իրացման ընդհանուր գումարը հաշվետու ժամանակաշրջանում 9.589,9 հազար ռուբլի յե, վորը ըստ ձեռնարկությունների բաշխվում է հետևյալ կերպով՝ (հազար ռուբլիներով).

| | | |
|---|---|---|
| «Արարատ» . . . | 4.262,8 . . . | 44,4 |
| Կաշվարդ . . . | 1.211,1 . . . | 12,6 |
| Տեքստիլ . . . | 888,6 . . . | 9,3 |
| Ղաթար . . . | 1.259,0 . . | 13,1 |
| Ալլավերդի . . . | 916,6 . . . | 9,6 |
| Պոլիգրաֆ . . . | 534,7 . . . | 5,6 |
| Ծխախոտի գործարան . | 82,0 . . . | 0,9 |
| Մեխանիկ. » . | 198,0 . . . | 1,9 |
| Ելեկտրակայան . . | 247,2 . . . | 2,6 |
| Ընդամենը՝ . . | 9.589,9 . . | 100 տոկ. |

Շուկայի պահանջի տեսակետից, արդյունաբերության զարգացման թափը միանգամայն համապատասխանում է իրական պահանջներին և ընդհանուր առմամբ ապահովված իրացում ունի: Ձեռնարկությունների արտադրանքն իրացվում է ինչպես Հայաստանի սահմաններում, նույնպես և Միության մյուս հանրապետություններում:

Հայաստանի Ժողտնտխորհի հիմնական մուծանքներն արդյունաբերության մեջ 1925/26 և 1926/27 տ.

Աղյուսակ № 3

| ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Մուծված է 1925/26 թ. | Վորից կառուցվածքների համար | Յենթադրվում է մուծել 1926/27 թ. հաստ. ԽՍՀՄ Աշխպաշտխորհի կողմից 3/1—27 թ. |
|---|---|---|---|
| **1. ՏԵՔՍՏԻԼ** | | | |
| Լուկաշինի անվան գործարան Լենինականում . . . . . | 481.008—81 | 385.427—62 | 2.360.000 |
| **2. ԿԱՇՎԱՐԴ** | | | |
| Հայկաշվարդ . . . . . . . | 46.897—53 | 27.681 | 99.000 |
| **3. ՍՆՆԴԱ-ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ** | | | |
| Գինու-կոնյակի տրեստ «Արարատ» . . . . . . . . | 28.792—23 | 23.616—09 | 380.000 |
| **4. ՊՈԼԻԳՐԱՖԱԿԱՆ** | | | |
| Հայպոլիգրաֆ տրեստ . . . | 109.118—61 | 49.117—55 | 153.000 |
| **5. ԼԵՌՆԱ-ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ** | | | |
| Անիի պեմզայի հանքեր . . | 170.000* | — | 67.000 |
| Արծաթ-արճիճային հանքեր | — | — | 50.000 |
| Ծծմբա-հրաքարի հայթայթում | — | — | 180.000 |
| **6. ՔԻՄԻԱԿԱՆ** | | | |
| Կարբիտի գործարան . . . | — | — | 180.000 |
| **7. ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ** | | | |
| Ձերժինսկու անվան մեխանիքական գործարան . . . . | 250.000** | — | 240.000 |
| **8. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ** | | | |
| Տուֆի մեխանիքական մշակումը | — | — | 100.000 |
| **9. ՊՂՆՁԻ** | | | |
| Կարմիր Նոյեմբեր գործարաններ և հանքեր . . . . . | 620.091—56 | 91.565—83 | 1.128.000 |
| Ալլավերդու գործարաններ և հանքեր . . . . . . | 746.772—84 | 57.761—89 | 1.012.300 |
| Յերկրա-հետախուզական . . | 30.174—57 | — | 176.300 |
| ԸՆԴԱՄԵՆԸ . | 2.482.856—16 | 635.169—98 | 6.125.600 |
| **ԵԼԵԿՏՐԱԿԱՆ** | | | |
| Ռիկովի անվան Յերևանի Հիդրոկայան . . . . . . . | 1.650.174—92 | 1.524.985—92 | 544.100 |
| Լենինականի Հիդրոկայան . | 400.000** | — | 1.200.000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ . | 4.533.031—07 | 2.180.155—90 | 7.869.700 |

ԾԱՆՈԹՈՒԹ.— * Այս գումարների վերաբերյալ հաշվետվությունները դեռ չեն ներկայացված։
** Չի հաստատված պատշաճ մարմինների կողմից։

# III. ԱՌԵՎՏՈՒՐ

Ա. ԱՌԵՎՏՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին յերկու տարվա ընթացքում առևտրական շուկան բնորոշվում է լայն գործածության ապրանքների առանձնապես բարձր պահանջով, վորը հետևանք է թե յերկրի տնտեսական ընդհանուր վերելքի և թե ընդհանրապես այդ ապրանքների բացակայության՝ նախընթաց տարիներում։ Հետագայում, յերբ ազգաբնակության սուր կարիքը հետզհետե բավարարվում է, և նա փառահում է շուկայի կարողությանը՝ առանց ընդհատումների արդյունաբերական ապրանքներ մատակարարել, առևտրի շրջանառությունը զարգացման նորմալ ընթացք է ընդունում։

Առևտրական կետերի թիվը Հանրապետության մեջ հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 1

| | 1924 թ. հոկտեմբերի 1-ին | | | | 1925 թ. հոկտեմբերի 1-ին | | | | 1926 թ. հոկտեմբերի 1-ին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մեծաքանակ վաճառատուն | Մեծածախ-մանրածախ | Մանրավաճառ | Ընդամենը | Մեծաքանակ վաճառատուն | Մեծածախ-մանրածախ | Մանրավաճառ | Ընդամենը | Մեծաքանակ վաճառատուն | Մեծածախ-մանրածախ | Մանրավաճառ | Ընդամենը |
| Պետական | 19 | 15 | 18 | 52 | 29 | 19 | 27 | 75 | 31 | 20 | 41 | 92 |
| Կոոպերատիվ *) | 4 | 1 | 244 | 249 | 6 | 1 | 437 | 444 | 8 | 2 | 541 | 551 |
| Մասնավոր **) | 3 | 170 | 1.765 | 1.938 | 15 | 113 | 1.745 | 1.873 | 11 | 123 | 2.305 | 2 439 |
| Ընդամենը՝ | 26 | 186 | 2.027 | 2.239 | 50 | 133 | 2.209 | 2.392 | 50 | 145 | 2.887 | 3.082 |

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս առևտրի յուրաքանչյուր խմբակի տեսակարար կշիռն ընդհանուր ցանցի նկատմամբ և տոկոսային հարաբերությունն առանձին տարիների միջև։

Ծանոթ. *) Հաշվի յեն առնված նույնպես և փոքր գյուղատնտեսական կոոպերատիվները։

**) Այդ թվի մեջ չեն մտնում առաջին կարգի առևտրական կետերը։

Աղյուսակ № 2

| | Տեսակարար կշիռն ընդհանուր թվի նկատմամբ | | | Տոկոսային հարաբերությունն առանձին տարիների նկատմամբ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1924 թ. | 1925 թ. | 1926 թ. | 1924 թ | 1925/24 թվի համեմատ. | 1926/24 թվի համեմատ. |
| Պետական . . . | 2,32 | 3,14 | 2,99 | 100,0 | 144,23 | 176,92 |
| Կոոպերատիվ . . | 11,13 | 18,56 | 17,88 | 100,0 | 178,31 | 221,29 |
| Մասնավոր . . . | 86,55 | 78,30 | 79,13 | 100,0 | 96,65 | 125,85 |
| Ընդամենը՝ | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 106,83 | 137,65 |

Այսպիսով, տեսնում ենք, որ 1926 թ. պետական և կոոպերատիվ ցանցի տեսակարար կշիռը բարձրացել է ընդհանուր ցանցի համեմատությամբ, որը համապատասխանում է այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած առևտրի զարգացման արագության չափին։ Պետական առևտուրը յերկու տարվա ընթացքում ցույց է տալիս 76,92 տոկ., կոոպերացիան՝ 121,29 տոկ. աճում, իսկ մասնավոր առևտուրը՝ միմիայն 25,85 տոկ. աճում։

**Բ. ՇՈՒԿԱՅԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վերջին յերեք տարվա ընթացքում ապրանքների ներմուծումը զգալի չափով աճել է և հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 3

| Փաստական ներմուծումը բացարձակ թվերով / Նախատեսված ծրագրի կատարումը | Հացամթերքներ ցորենի միավորներ (վագ.) | Բամբակյա մանուֆակ. (վագ.) | Շաքար (հազար փթերով) | Մետաղյա ապրանքներ (հ. փթ.) | Աղ (հազար փթ.) | Լուցկի (վագ.) | Կրկնակոշիկ (զույգ) | Ապակեղեն (վագ.) | Թուղթ (հազար փթերով) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1924/25 թ. %%-ով . . | 1921<br>84% | 145<br>91% | 219<br>81% | — | — | — | — | — | — |
| 1925/26 թ. %%-ով . . | 1956<br>95% | 171,7<br>107% | 251,4<br>90% | 115,1<br>43% | 593,7<br>99% | 27<br>108% | 22<br>74% | 28,9<br>41% | 21,6<br>43% |
| 1926/27 թ. առաջին յեռամսյակը՝ %%-ով . | 477,0<br>64% | 57,0<br>79% | 15,0<br>21% | 41,3<br>55% | 297,0<br>165% | 1,0<br>13% | 11,9<br>24% | 30,2<br>101% | 6,5<br>26% |

Հայաստանի մեծաքանակ վաճառքի ընդհանուր շրջանառությունը 1924 և 1925 թ. թ. ընթացքում արտահայտվել է 28.584,1 հազար ռուբլով, իսկ



1925/26 թ.՝ 40.141,0 հազար ռուբլով։ Այլ կերպ ասած, վերջինս մեկ տարվա ընթացքում աճել է 40.43 տոկ.։ Իսկ յեթե սրան ավելացնենք նաև շրջանառության միջգրասենյակային գործառնությունները, տոկոսը կբարձրանա մինչև 47,28։ (45.788,8 ռ. նախընթաց տարվա 31.090.8 ռ.)։

Մեծաքանակ գործառնությունները հետևյալ պատկերն են տալիս.

Աղյուսակ № 4

| | 1924/25 թ. | | 1925/26 թ. | | 25/26 թ. %-ային հարաբերութ. 24/25 թ. նկատմամբ | |
|---|---|---|---|---|---|---|
| Պետական առևտուր | 22.313,8 | 2 .584,1 | 29.167,9 | 36.141,0 | 130,7 | 141,3 |
| Կոոպերատիվ | 3.270,3 | | 6.973,1 | | 213,2 | |
| Մասնավոր | 3.000,0 | | 4.000,0 | | 125,0 | |
| Ընդամենը | 28.584,1 | | 40,141,0 | | 140,43 | |

Ինչպես յերևում է աղյուսակից, մեկ տարվա տոկոսը հավասար է 40,43, բայց որում, առևտրի առանձին ճյուղավորումների մասնակցությունն ընդհանուր շրջանառության մեջ կարտահայտվի հետևյալ ձևով.

Աղյուսակ № 5

| | Պետական առևտուր | Կոոպերատիվ | Պետական և կոոպերատ. միասին | Մասնավոր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1924/25 թ. | 78,0 | 11,5 | 89,5 | 10,5 | 100,0 |
| 1925/26 թ. | 72,8 | 17,3 | 90,1 | 9,9 | 100,0 |

Այսպիսով, կոոպերացիայի տեսակարար կշիռը, ի հաշիվ պետական մարմինների և մասնավորների շրջանառության իջեցման, աճում է։

Հետաքրքիր է այդպիսին զատ զատ դիտել, դուրս գցելով մասնավորների շրջանառությունը, որը կտա հետևյալ պատկերը՝ բացարձակ թվերով.

Աղյուսակ № 6

| | 1924/25 թ. | | | 1925/26 | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Յերկրի սահմաններում | Արտասահմանում | Ընդամենը | Յերկրի սահմաններում | Արտասահմանում | Ընդամենը |
| Արդյուն. ձեռնար. . . . | 1.957,7 | 5.289,4 | 7.247,1 | 2.662,8 | 8.192,7 | 10.855,5 |
| Առևտրական ,, . . . | 6.211,1 | 1.098,8 | 7.309,9 | 6.559,1 | 2.398,2 | 8.957,3 |
| Ներկայացուցչութ. . . . | 7.387,7 | 369,1 | 7.756,8 | 7.756,2 | 559,9 | 9.355,1 |
| Պետական առևտուր . . . | 15.556,5 | 6.757,3 | 22313,8 | 18.017,1 | 11.150,8 | 29.167,9 |
| Կոոպերատիվ . . . . . | 3.162,5 | 197,7 | 3 270,3 | 6.143,0 | 830,1 | 6.973,1 |
| Ընդամենը . . | 18.719,0 | 6.865,1 | 25.584,1 | 24.160,1 | 11.980,9 | 36.141,0 |

Ընդհանուր առմամբ, շրջանառության աճումը, ինչպես վերևում հիշված է, հավասար է 40,43 տոկոսի, ըստ որում, վաճառքի գործառնությունը ներքին շուկայում ավելացել է 29,1 տոկոսով, իսկ արտահանումը՝ 74,5%-ով:

Շրջանառության բաշխումը տոկոսներով, ինչպես երկրի սահմաններում, այնպես և նրա սահմաններից դուրս, ապացուցում են արտահանման տեսակարար կշռի աճումը առևտրի բոլոր խմբակների մեջ, բացառությամբ ներկայացուցչությունների:

Այդ ցույց է տալիս շրջանառության ներքին և արտաքին շուկաներում ըստ տոկոսների դասավորված ներքև բերված աղյուսակը.

Աղյուսակ № 7

| | 1924/25 թ. | | | 1925/26 թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Վաճառ. Հայաստանում | Արտահանում | Ընդամենը | Վաճառ. Հայաստանում | Արտահանում | Ընդամենը |
| Արդյունաբերական կազմակերպություն | 27 | 73 | 100,0 | 26 | 75 | 100,0 |
| Առևտրական կազմակերպ. | 85 | 15 | 100,0 | 73 | 27 | 100,0 |
| Ներկայացուցչութ. | 95 | 5 | 100,0 | 94 | 6 | 100,0 |
| Ընդամենն ըստ պետառևտրի | 70 | 30 | 100,0 | 62 | 38 | 100,0 |
| ,, ըստ կոոպերաց. | 97 | 3 | 100,0 | 88 | 12 | 100,0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 73 | 27 | 100,0 | 67 | 33 | 100,0 |

1924/25 թվում մեր արտահանման գումարն, ընդհանուր շրջանառության նկատմամբ, հավասար էր 27 տոկոսի. հետևյալ տարում նա հասել է 33 տոկոսի:

Այդ հանգամանքը բացատրվում է տեղական արտադրանքի (կոնսերվա, գինի, կոնյակ և այլն) արտահանման աճումով, արդյունաբերական հում նյութերի (բամբակ, մագեղեն, ծխախոտեղեն, բուրդ և այլն) և գյուղատնտեսական մթերքների (պանիր զանազան տեսակի, ձու, մեղր և այլն) իրացմամբ՝ երկրի սահմաններից դուրս:

Ընթացիկ տարում մեծաքանակ առևտրի աճումը դադարել է, և 1926/27 թ. առաջին յեռամսյակի շրջանառությունները համարյա հավասար են անցյալ տարվա համապատասխան յեռամսյակի շրջանառության:

Յերևանի շուկայի տվյալները հետևյալ պատկերն են տալիս:

Աղյուսակ № 8

| | 1925/26 թ. Նույն թվում | | | 1926/27 թ. Նույն թվում | | | 26/27 թ. տոկոսային հարաբերությունը 25/26 թ. նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հայաստ. | Արտահան. | Ընդամենը | Հայաստ. | Արտահան. | Ընդամենը | |
| Պետառևտուր | 4460,4 | 3000,5 | 7460,9 | 3034,1 | 2058,9 | 5093,9 | 60,3 |
| Կոոպերացիա | 1282,8 | 32,1 | 1314,9 | 2470,1 | 643,9 | 3144,6 | 236,8 |
| Ընդամենը | 5742,2 | 3032,6 | 8775,8 | 5505,1 | 2702,4 | 8207,6 | 93,6 |



Շրջանառության 6,4 տոկոսով կրճատումը չպետք է հաշվի առնվի, որովհետև 1926/27 թ. առաջին յեռամսյակի տվյալներն առայժմ լրիվ չեն, որի հետևանքով ներքև բերված թվերը նախնական պետք է համարվեն:

Այնուամենայնիվ, բնորոշ է պետառևտրի շրջանառության կրճատումը (31,7 տոկոսով) հօգուտ կոոպերացիայի շրջանառության աճման (136,8 տոկոս). ըստ որում, սպառողական կոոպերացիայի գծով մենք հավելում ունենք 58,9 տոկոս (2093,4 հազար ռուբլու), իսկ գյուղատնտեսական կոոպերացիայի՝ 768,6 տոկոս. (1056,2 հազար ռ. ընդդեմ 121,1 հազար ռ.):

Պետք է շեշտել, որ կոոպերացիայի շրջանառության աճումն առաջանում է ի հաշիվ ներքին և արտաքին առևտրի, ըստ որում, վերջինս ավելի զգալի աճում է ցույց տալիս (մինչև 2.000 տոկ.), որը և բերում է այն յեզրակացության, որ կոոպերացիան մեծ դեր է խաղում ոչ միայն ներքին առևտրի (սպառողական կոոպերացիայի), այլ և ներմուծման մեջ (գյուղատնտեսական կոոպերացիայի), խոստանալով ապագայում իր վրա վերցնել, բացի մատակարարման ֆունկցիայից, նաև գյուղատնտեսական պրոդուկցիայի յերկրից դուրս իրացման գործը:

Անցնելով մանրավաճառքին, նույնպես պետք է ընդգծենք շրջանառության զգալի հավելում.

Աղյուսակ № 9

| | 1924/25 թ. | 1925/26 թ. | 25-26 թ. տոկոսային հարաբերությունը 24-25 թ. նկատմամբ |
|---|---|---|---|
| Պետառևտուր | 2.240,0 | 3.752,8 | 167,6 |
| Կոոպերացիա | 10.926,1 | 17.086,9 | 156,4 |
| Մասնավոր | 11.214,7 | 13.500,0 | 120,4 |
| Ընդամենը՝ | 24.380,8 | 34.390,7 | 140,8 |

Այստեղ բավականին բնորոշ յերևույթ է այն, որ մասնավոր շուկան զարգացման ավելի թույլ տեմպ է ցույց տալիս, քան պետական և կոոպերատիվ մանրավաճառքը, որի տեսակարար կշիռը տարվա ընթացքում բարձրացել է 54 տոկոսից մինչև 61 տոկ., ի հաշիվ մասնավորի, որն իջել է 46 տոկոսից-39 տոկ.:

Գ. ՄԹԵՐՈՒՄՆԵՐ Հաշվետու յերկու տարվա ընթացքում, Հայաստանի սահմաններում կատարված գյուղատնտեսական մթերքների և արդյունաբերական հում նյութերի մթերումը աճման ձգտում է ցույց տալիս, չընայած որ այդ ձգտումը արտահայտվում է համեմատաբար փոքր չափով, այն է՝ 6,7 տոկ.: Այսպես, 1924/25 թ. ընթացքում մթերված է յեղել 7 411,8 հազար ռուբլու, իսկ հաջորդ 1925/26 թ.՝ 7.912,7 հազար ռուբլու:

Մթերումների աճման մեջ գլխավոր դերը խաղացել է բամբակի մթերումի ավելացումը, որից 1924/25 թ. մթերված է յեղել 694,6 հազար

փութ՝ 3 473,2 հազար ռուբլու, իսկ 1925/26 թ. ընթացքում՝ 807,° հազար փ., 3.939,1 հազար ռուբլու (մթերումների արժողության ընդհանուր գումարի 46,50 տոկ.)։

Հետևյալ տախտակը ցույց է տալիս 1924/25 և 1925/26 թ. թ. կատարված արդյունաբերական և գյուղատնտեսական հում նյութերի մթերումների պատկերը.

Աղյուսակ № 10

| Մթերքներ | Չափի միավոր | 1924/25 թ. Քանակ | 1924/25 թ. Արժեք | 1925/26 թ. Քանակ | 1925/26 թ. Արժեք | Մթերումների արժեքի տոկ. հարաբեր. 1925-26 թ. համեմատած 1924/25 թ. հետ |
|---|---|---|---|---|---|---|
| Բամբակ հնդավոր . | Փութ. | 694.645 | 3.473.225 | 807.201 | 3.939.140 | 113,42 |
| Ծխախոտ . | » | 4.315 | 86.300 | 3.850 | 59.965 | 69,49 |
| Բրինձ և չալթ. | » | 19.644 | 36.341 | 24.773 | 67.118 | 184,69 |
| Հացահատիկ . | » | 96.700 | 163.306 | 65.116 | 88.605 | 54,26 |
| Խաղող . | » | 121.076 | 145 291 | 152.601 | 157.179 | 108,18 |
| Գինի . | Դույլ | 367.881 | 535.427 | 231.810 | 861.432 | 160,89 |
| Ոգի և սպիրտ | Աստճ. | 5.462 446 | 934.329 | 2.369.924 | 731,895 | 78,34 |
| Խոշոր յեղջյուր. անաս. | Գլուխ | 5 839 | 350.340 | 2.033 | 138.807 | 39,62 |
| Մանր յեղջ. անասուն. | » | 9.678 | 116.136 | 4.145 | 45.123 | 38,85 |
| Խոզ . . | » | 278 | 4.378 | 360 | 5.835 | 133,28 |
| Միս (տավարի և ոչխարի) | Փութ | — | — | 23.219 | 183.112 | — |
| Աղիք . . | Հատ | — | 15.817 | — | 20.918 | 132,25 |
| Խոշոր կաշի | » | 11.044 | 88.573 | 10.749 | 120.077 | 135,57 |
| Մանր » | » | 73.925 | 70.229 | 77.733 | 109.669 | 156,16 |
| Բուրդ . | Փութ | 8.354 | 87.550 | 9.959 | 153.757 | 175,62 |
| Մորթեղեն | Հատ | 9.550 | 73.695 | 11.266 | 112.684 | 152,91 |
| Պանիր . | Փութ | 22.312 | 584.986 | 22.294 | 403.147 | 68,92 |
| Յուղ . | » | 3.122 | 58.454 | 2.518 | 77.574 | 132,71 |
| Կաթ, մեղր, ձու | » | — | 9.602 | — | 105.965 | 1082,74 |
| Խոտ . | | 860.922 | 275.495 | 487.713 | 187.118 | 67,92 |
| Ծղոտ և գարման . | » » | 10[illegible].529 | 26.630 | 70.916 | 21.286 | 79,93 |
| Գորգ . | Հատ | — | — | 956 | 58.041 | — |
| Բոժոժ . | Փութ | — | — | 2.251 | 65.547 | 234,36 |
| » չոր | » | 1.451 | 74.465 | 1.509 | 108.973 | 146,34 |
| Միրգ . | » | 25.356 | 39.681 | 9.840 | 18.163 | 59,2 |
| Կարտոֆիլ | » | 95.644 | 37.301 | 48.000 | 30.108 | 80,72 |
| Այլ մթերքներ | » | — | 133.233 | — | 92.637 | 69.53 |
| Ընդամենը՝ | — | — | 7.411.784 | — | 7.912.710 | 106,76 |



Դ. ՄԱՆՐԱՎԱՃԱՌ ԳՆԵՐԻ ԻՋԵՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Գների իջեցման աշխատանքները տարվել են Ներքառժողկոմատի կողմից՝ սովորական կարգով, մինչև հատուկ հանձնաժողով կազմակերպելը։ Նման հատուկ մարմին կազմակերպելու դրա պատճառներն են յեղել՝

ա) 1925/26 գործառնական տարվա առաջին կիսամյակում տեղի ունեցած արդյունաբերական ապրանքների (գլխավոր տեսակների՝ մանուֆակտուրա, մետաղյա ապրանքներ, կաշվեղեն և այլն) առաջարկի ու պահանջի անհամաչափությունը և դրանից առաջացող գների ինքնաբերաբար բարձրացումը՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ։

բ) Նման պայմաններում անխուսափելիորեն առաջացող՝ մասնավոր առևտրականի շահամոլությունը։

գ) Ապրանքաշրջանառության դանդաղումը։

Այդ իսկ պատճառներով, ՍԽՀՄ ժողկոմխորհի՝ 1926 թ. ապրիլի 14-ի վորոշման համաձայն, կազմակերպվեցին մանրածախ գների իջեցման հանձաժողովներ՝ ՍԽՀՄ-ում, ԱՍՖԽՀ-ում և ՀՍԽՀ-ում։ Մեզնում այդ հանձնաժողովն իր աշխատանքներն սկսել է 1926 թվի մայիսի 1-ից։

Նախ քան աշխատանքներին անցնելը, հանձնաժողովի համար անհրաժեշտ եր պարզել շուկայի դրությունը (գների մակարդակը) առ 1-ն մայիսի, թե մեզնում, և թե ՌՍՖԽՀ-ում։ Այդ տվյալներն անհրաժեշտ եյին առանձին ապրանքների շուկաների ասպարեզում տարվելիք աշխատանքները նախագծելու համար։

ՍԽՀՄ-ի կենտրոնական շուկաներում 1926 թ. մայիսին վերադիրները, տրեստի գների հանդեպ, հասնում եյին՝

Մանուֆակտուրայինը մինչև 150 տոկ.
Մետաղյա ապրանքներինը . 130 ,,
Կաշվեղենինը . . . . . 100 ,,

Մեզնում վերադիրները համեմատաբար ավելի ցածր մակարդակի վրա եյին՝

Մանուֆակտուրայինը 70 տոկ.
Մետաղինը . . . . 47 ,,
Կաշվեղենինը . . . 75 ,,

Հանձնաժողովի աշխատանքներին խանգարել են՝

ա) Տեխնիքական աշխատանքները վարող ապարատի ուժերի սահմանափակությունը (աշխատանքները տարվել են Ներքառի ապարատի միջոցով).

բ) հատուկ ֆինանսական միջոցների բացակայությունը.

գ) գավառներում համապատասխան մարմինների բացակայությունը։

Չնայած այդ բոլոր խոչընդոտներին, հանձնաժողովը բավականին մեծ աշխատանքներ է կատարել մանրածախ գների իջեցման բնագավառում։ Դրանցից ամենաեյականներն են՝

1. Հանձնարարվել է Բանգյուղտեսչությանը՝ ուսումնասիրել ապրանքատար ցանցը, վերջինիս ճկունության աստիճանը, ճյուղավորման նպատակահարմարությունը և կառուցվածքը հայտնաբերելու համար։ Այդ աշխատանքները շատ բարդ եյին, ուստի և յերկար տևեցին։

Աշխատանքները բերին այն յեզրակացության, վոր մի շարք ներկայացուցչություններ կարելի յե գյուրությամբ լուծարքի յենթարկել։

2. Բյուջեյական հավաքածուն (бюджетный набор) մինչ այդ շատ աննաջող եր կազմված. զգալի թերություններ կային։ Հանձնաժողովի առաջարկությամբ, այդ հավաքածուն վերանայվեց Անդրկովկասյան մասշտաբով։ Համապատասխան ուղղումներ յեղան։ Այդ բոլորն անհրաժեշտ եր մանրածախ գների իրական պատկերն ստանալու համար։

3. Ի նկատի ունենալով գյուղատնտեսական ապրանքների գների բարձր լինելը, վորը գլխավորապես պայմանավորված եր մասնավոր առևտրի ուժեղությամբ այդ ասպարիզում, հանձնաժողովը պարտադրեց Հայգյուղկոոպին և Պանիրյուղկենտրոնին՝ պարբերաբար բանջարեղենի և կաթնամթերքների մթերումներ կատարել ու մատակարարել Յերևանի ու Լենինականի Բանկոոպներին։ Վերջիններս պարտավորվեցին ավելացնել այդ ապրանքների վաճառքի կետերը (խանութները)։

4. Կովի յուղի գներն իջեցնելու նպատակով, կազմակերպվեց այդ յուղի ներմուծումը՝ Ռուսաստանից։ Ներմուծվեց մինչև 10 վագոն։ Այդ հանգամանքը ուժեղ կերպով ազդեց գների վրա, վորոնք զգալի իջան։

5. Միջոցներ ձեռք առնվեցին, Յերբանկոոպի և Անասնաբուծյունառի կողմից, մսի գները մատչելի դարձնելու ուղղությամբ։

6. Մանուֆակտուրան Հայաստանի ապրանքաշրջանառության 50 տոկոսն ե կազմում։ Այդ պատճառով, հատուկ ուշադրություն դարձվեց հիշյալ ապրանքների վրա՝ կազմակերպվեցին պարբերական հետազոտություններ։ Նման հետազոտությունների յենթարկվեցին 34 կոոպերատիվ ձեռնարկություններ, 1—6 անգամ։ Սկզբում մանուֆակտուրայի գների վերադիրները շատ բարձր եյին ու մինչև 70—80 տոկոսի եյին հասնում (սրճատի գների հանդեպ)։ Հայկոոպի աջակցությամբ ու նրա միջոցով հրահանգներ տրվեցին կոոպերատիվ սարքին ցանցին։ Առաջարկվեց՝ խստիվ ղեկավարվել Ներքառի սահմանած նորմաներով։ Նախազգուշացվեցին, վոր խախտումները կրկնվելու դեպքում, պանցառունները պատասխանատվության կենթարկվեն։ Հետևանքները դրական յեղան, վերադիրներն իջան մինչև 40 տոկոսի, յերբ սահմանած նորման 34 տոկոս եր։

7. Ամանեղենի (սիլիկատներ) գներն իջեցնելու նպատակով ձեռք առնված միջոցներից կարելի յե նշել ամենակարևորը՝ Հանձնաժողովի միջնորդությամբ Հայկոոպի և Պրոդասիլիկատի միջև կնքված պայմանագիրը։

Բացի ձեռք առնված վերոհիշյալ միջոցներից, հանձնաժողովը նաև հրակոզական և հրահանգչական աշխատանքներ ե տարել, հնարավորության սահմաններում։

Պետք ասել, վոր Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վորոշումը, մանրածախ գները միջին թվով 10 տոկ. իջեցնելու մասին, հանձնաժողովը լրիվ կիրառել չի կարողացել։

Մանրածախ գների իջեցումը հետևյալ պատկերն ե տալիս.



Աղյուսակ № 10

ՄԱՆՐԱԾԱԽ ԳՆԵՐԻ ԻՋԵՑՄԱՆ ՏԱԽՏԱԿԸ

| ԱՊՐԱՆՔԻ ԱՆՈՒՆԸ | Չափի միավոր | Յերևան և Լենինական: Գներն ըստ 1-ին մայիսի | Յերևան և Լենինական: Գներն ըստ 20 դեկտեմբ. | Յերևան և Լենինական: Իջեցման տոկոս | Մյուս քաղաքները: Գներն ըստ 1-ին մայիսի | Մյուս քաղաքները: Գներն ըստ 20 դեկտեմբ. | Մյուս քաղաքները: Իջեցման տոկոս | Քաղաքատիպ վայրեր: Գներն ըստ 1-ին մայիսի | Քաղաքատիպ վայրեր: Գներն ըստ 20 դեկտեմբ. | Քաղաքատիպ վայրեր: Իջեցման տոկոս | Գյուղական վայրեր: Գներն ըստ 1-ին մայիսի | Գյուղական վայրեր: Գներն ըստ 20 դեկտեմբ. | Գյուղական վայրեր: Իջեցման տոկոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 Տեսակավոր յերկաթ | Փութ | 4—40 | 3—93 | 10,7 | 4—8 | — | — | — | — | — | — | — | — |
| 2 Ցինկավորված յերկաթ—10 ֆ.1տես. | » | 11—00 | 8—80 | —20 | — | — | — | 13—00 | 12—30 | —5½ | — | — | — |
| 3 Տանիքի յերկաթ 10 ֆ. 1 տեսակի | » | 6—00 | 5—33 | —11 | 8—00 | 6—70 | —16 | 7—20 | 6—00 | —17 | 8—00 | 6—80 | —15 |
| 4 » » 9 ֆ. 1 տեսակի | » | 6—25 | 5—44 | —13 | — | — | — | — | — | — | — | — | — |
| 5 Թիթեղ՝ սպիտակ | Կիլո | —60 | —80 | —33 | — | — | — | — | — | — | —95 | —80 | —16 |
| 6 Մեխ 1 | » | —81 | —65 | —20 | —70 | —60 | —14½ | —70 | —70 | —0 | —76 | —65 | —14½ |
| 7 » 2 | » | —40 | —50 | —25 | —50 | —43 | —14 | —49 | —45 | —8 | —48 | —44 | —8 |
| 8 » 3 | » | —40 | —68 | —70 | —40 | —41 | —12½ | —49 | —43 | —12 | — | — | — |
| 9 » 5 | « | —46 | —39 | —15 | —45 | —42 | —7 | — | — | — | — | — | — |
| 10 Խրոմ Մոսկվայի 1 տեսակի | ֆուս | 1—75 | 1—40 | —20 | — | — | — | — | — | — | — | — | — |
| 11 » » 2 տեսակի | » | 1—50 | 1—30 | —13 | — | — | — | — | — | — | — | — | — |
| 12 Ներբան (պադոշ) Մոսկվ. 1 տես. | Կիլո | 4—80 | 2—96 | —38 | 4—70 | 4—50 | —4 | — | — | — | — | — | — |
| 13 » » 2 տես. | » | 4—40 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 14 Լամպայի ապակի 5 | Հատ | —15 | —11 | —33 | —17 | —12 | —30 | —30 | —15 | —50 | —22 | —15 | —32 |
| 15 » » 8 | » | —18 | —13 | —28 | —22 | —18 | —18 | —35 | —18 | —48 | —28 | —18 | —35 |
| 16 » » 11 | » | —20 | —15 | —25 | —25 | —20 | —20 | —41 | —20 | —51 | —40 | —22 | —45 |
| 17 Ալյուր 1 տեսակի | Փութ | 3—80 | 3—72 | —2 | 4—00 | 4—10 | —2½ | 4—50 | 4—30 | —4½ | 4—40 | 4—25 | —3 |
| 18 » 3 տեսակի | » | 2—20 | 1—80 | —18 | 2—30 | 2—00 | —13 | — | — | — | — | — | — |
| 19 Նավթ | ֆունտ | —4½ | —4 | —11 | —5½ | —5 | —9 | —5 | —5 | 0 | —6 | —6 | 0 |
| 20 Շաքար ռաֆինադ | Կիլո | —80 | —82½ | —3 | —85 | —82½ | —3 | —82 | —82½ | 0 | —86 | —85 | —1 |
| 21 Շաքարավազ | » | —68 | —68 | —0 | —73 | —71 | —3 | — | — | 0 | —73 | —70 | —4 |
| 22 Սապոն Հայկոոպի | Կտոր | —24 | —24 | —0 | —27 | —27 | —0 | —25 | —25 | 0 | —27 | —27 | 0 |
| 23 Տավարի միս | Ֆունտ | —25 | —24 | —4 | —18 | —20 | —11 | — | — | — | — | — | — |
| 24 Վոչխարի միս | » | —38 | —34 | —10½ | —25 | —25 | —0 | — | — | — | — | — | — |
| 25 Աղ | Փութ | —57 | —55 | —3½ | —82 | —77½ | —5½ | —66 | —64 | —3 | —99 | —93 | —6 |
| 29 Մանուֆակտուրա | » | —70 | —40 | —30 | —66 | —60 | —6 | —4 | —32 | —15 | —50 | —37 | 14,5 |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մանուֆակտուրան 25.000-ից ավելի տեսակներ ունի՝ չթեր, մուսլիններ, սատիններ և այլն, ամեն մեկը զանազան տեսակի ու գների։ Ներքառը սահմանում ե միմիայն առավելագույն վերադիրներ ամեն մի տեսակի համար։ Ահա այդ առավելագույն վերադիրներն են, վոր ցույց են տրված սույն աղյուսակում։ Ի հարկե, այդ դեռ չի նշանակում, վոր բոլոր տեսակի մանուֆակտուրան իջել և նույն տոկոսով, կամ ունեցել ե նույն վերադիրները։

# IV. ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

**Ա. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ.** 1925/26 տարին գյուղատնտեսական կոոպերացիայի համար աշխատանքների զարգացման և ընդլայնման շրջաններից է յեղել։

Գյուղատնտեսական կոոպերացիայի ստորին ցանցի աճման պատկերը տալիս է հետևյալ աղյուսակը․

Աղյուսակ № 1

| | Առ 1-ն հոկտեմբ. 1924 թ. (ընդունվ. է 100 տոկ.) | Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. | Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. | 1926 թ. աճման տոկ. 1927 թ. համեմատ. |
|---|---|---|---|---|
| 1. Կոոպերատիվների թիվը | 76 | 147 | 205 | 269,7 |
| 2. Տնտեսությունների » | 9.179 | 19.153 | 30 075 | 327,6 |
| 3. Կոոպերացման %% | 5,94 | 12,75 | 19,31 | 325,1 |

Ինչպես յերևում է աղյուսակից, կոոպերատիվ միավորների թիվը յերկու տարվա ընթացքում աճել է 169,7 տոկ., տնտեսությունների թիվը՝ 227,6 տոկ. և կոոպերացումը՝ 225,1 տոկ.։ Վերջին յերկու հատկանիշների աճումն ավելի ուժեղ է յեղել քան կոոպերատիվների, վորը ապացույց է գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքների խորացման, ըստ տարբեր ճյուղերի։ Աճման պատկերը հաշվետու տարում տալիս է հետևյալ աղյուսակը․

Աղյուսակ № 2

| Կոոպերացիայի ճյուղեր | Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. | | Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. | | Աճման տոկոսներ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Միավոր | Տնտես. | Կոոպ. | Տնտես. | Կոոպ. | Տնտես. |
| 1 Գյուղվարկային ընկ. | 30 | 11.492 | 36 | 18.156 | 120,0 | 158,8 |
| 2 Խառը գյուղ. » | 15 | 509 | 12 | 660 | 800 | 121,8 |
| 3 Բամբակագործ. » | — | — | 13 | 934 | — | — |
| 4 Այգեգործակ. » | 9 | 875 | 12 | 1607 | 133,3 | 183,6 |
| 5 Ծխախոտագործ. » | 2 | 183 | 5 | 527 | 250,0 | 288,0 |
| 6 Մեղվաբուծակ. » | 16 | 693 | 19 | 1509 | 118,8 | 217,7 |
| 7 Թռչնաբուծակ. » | — | — | 3 | 91 | — | — |
| 8 Հնդահանների » | 1 | 28 | 1 | 28 | 100,0 | 100,0 |
| 9 Մեքենաօգտագ. » | — | — | 27 | 602 | — | — |
| 10 Հող. աշխ. արտ. » | 2 | 13 | 2 | 35 | 100,0 | 244,6 |
| 11 Տնայնագործ. » | 1 | 35 | — | — | — | — |
| 12 Վոչխարաբուծ. » | — | — | 2 | 89 | — | — |
| 13 Ձկնաբուծակ. » | — | — | 1 | 60 | — | — |
| 14 Կոմունա » | — | — | 1 | 35 | — | — |
| 15 Կաթնարտելներ | 71 | 5325 | 72 | 5742 | 101,4 | 107,8 |
| Ընդամենը | 147 | 19153 | 205 | 33075 | 130,4 | 157,0 |



Ինչպես տեսնում ենք, հաշվետու շրջանում գյուղկոոպերացիան ընդգրկել է գյուղատնտեսության նոր ճյուղեր, ինչպես՝ բամբակագործական, մեքենաօգտագործական, թռչնաբուծական։ Սակայն, գյուղատնտեսության առանձին ճյուղերի աճումն անհամաչափ է յեղել։ Ըստ միավորների՝ նա դասավորվում է հետևյալ կերպով՝ ծխախոտագործական՝ 150 տոկ., այգեգործական՝ 33,3 տոկ., գյուղվարկային ընկերություններ՝ 20,0 տոկ., մեղվաբուծական՝ 18,8 տոկ , իսկ խառն գյուղատնտեսական ընկերությունները իջել են 20 տոկ.։ Ըստ տնտեսությունների, առաջին տեղը աճման տեսակետից բռնում են ծխախոտագործականը՝ 188,0 տոկ., մեղվաբուծականը՝ 117,7 տոկ., այգեգործականը՝ 83,6 տոկ., հողաշխատ. արտելները՝ 144,6 տոկ., գյուղվարկային ընկերությունները՝ 58,8 տոկ.։ Նախավերջին տեղը բռնում են խառն գյուղատնտեսական ընկերությունները՝ 30,2 տոկ. և վերջինը, կաթնարտելները՝ 7,8 տոկ։

Զանազան ճյուղերի վերաբերյալ նկատվում է նույնը—տնտեսությունների աճումը յեղել է ավելի արագ քան միավորներինը։ Այդ ապացույց է, վոր ընկերությունները վայելում են գյուղացիության համակրանքը։ Տնտեսությունների աճման տոկոսն ավելի կը բարձրանա, յեթե գյուղկոոպերացիան հնարավորություն ունենա վարկավորելու իր բոլոր կարիքավոր անդամներին։

Գյուղատնտեսական կոոպերացիայի աճումն ըստ գավառների հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 3

| | Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. | | | Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. | | | Աճման տոկոսները | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կոոպ. | Տնտ. | Կոոպ. տնտ. 0/0 | Կոոպ. | Տնտ. | Կոոպ. տնտ. 0/0 | Կոոպ. | Տնտ. | Կոոպ. տնտ. 0/0 |
| 1. Յերևանի գավ. | 22 | 3882 | 14,8 | 34 | 6690 | 25,1 | 154,5 | 172,3 | 169,0 |
| 2. Լենինակ. ,, | 13 | 2382 | 9,6 | 17 | 3194 | 12,3 | 130,8 | 133,9 | 137,7 |
| 3. Եջմիածն. ,, | 14 | 2800 | 11,2 | 35 | 5158 | 19,2 | 250,0 | 184,2 | 171,5 |
| 4. Ն. Բայազ. ,, | 9 | 1531 | 9,0 | 19 | 2492 | 13,6 | 211,2 | 162,8 | 150,9 |
| 5. Լ.-Փամբ. ,, | 55 | 5148 | 24,3 | 67 | 6431 | 28,1 | 121,8 | 124,8 | 115,4 |
| 6. Դիլիջանի ,, | 18 | 1867 | 14,0 | 15 | 3488 | 24,8 | 83,3 | 186,8 | 177,8 |
| 7. Դարալագ. ,, | 4 | 401 | 6,6 | 5 | 757 | 12,7 | 125,0 | 188,8 | 191,4 |
| 8. Զանգեզ. ,, | 9 | 676 | 5,1 | 10 | 1313 | 9,6 | 111,1 | 194,2 | 189,9 |
| 9. Մեղրու ,, | 3 | 466 | 30,3 | 3 | 656 | 39,8 | 100,0 | 140,8 | 131,7 |
| Ընդամենը . . | 147 | 19.153 | 12,85 | 205 | 20075 | 19,31 | 139,4 | 157,0 | 151,4 |

Տախտակից յերևում է, վոր կոոպերացման տոկոսը ծայրագավառներում, ի բաց առյալ Մեղրու գավառը, ավելի ցածր է, քան կենտրոնում։ Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, վոր հիշյալ գավառներում գյուղա-

տնտեսության ապրանքային յելույթը բարձր չէ, չկան բարձր կուլտուրաներ և ինտենսիվ գյուղատնտեսություն, վորոնց շուրջը համախմբվեր գյուղացիությունը և կազմակերպեր արտադրողական կոոպերատիվներ։ Այս գավառներում գյուղացիության 77,7-ից—89,1 տոկ. համախմբված է գյուղվարկային ընկերությունների շուրջը, իսկ գոյություն ունեցող վորոշ արտադրողական ընկերությունները շատ թույլ են գործում։ Ինչ վերաբերում է Մեղրու գավառի կոոպերացման բարձր տոկոսին, այդ պիտի վերագրել բնակչության կուլտուրապես բարձր լինելուն և այն հանգամանքին, վոր այդտեղ մշակվում են բարձր կուլտուրաներ։

Գյուղատնտեսական կոոպերացիայի կազմը ըստ ազգությունների տալիս է հետևյալ պատկերը.

Աղյուսակ № 4

| ԱԶԳՈՒԹՅՈՒՆ | Կոոպերացված տնտեսություններ: Բացարձակ | Կոոպերացված տնտեսություններ: Ընդհանուր տոկ. Հայաստ. | Հայաստանի գյուղատնտեսությունների թիվը ըստ ազգության | Կոոպերացման տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1. Հայ | 24.869 | 83,2 | 133.913 | 18,53 |
| 2. Ռուս | 2.250 | 7,5 | 3.805 | 59,14 |
| 3. Թուրք | 2.250 | 8,6 | 15.261 | 16,71 |
| 4. Այլ ազգություններ | 195 | 0,7 | 2.756 | 7,08 |
| Ընդամենը | 29.804 | 100,0 | 155.735 | 18,5 |

Վարկային ընկերությունների տնտեսավարական աշխատանքները ընթացել են մի կողմից՝ անդամներին անհրաժեշտ գյուղգործիքներ, մեքենաներ, սերմացու մատակարարելու, իսկ մյուս կողմից՝ նրանց արտադրանքը վերամշակելու ու վաճառքը կոոպերացիայի միջոցով կազմակերպելու ուղիով։ Այս աշխատանքի պատկերը հետևյալն է տալիս.

Աղյուսակ № 5

| | ԳՆՎԱԾ Է ՀԱԶԱՐՆԵՐՈՎ | | | ՎԱՃԱՌՎԱԾ ՀԱԶԱՐՆԵՐՈՎ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մատակար. ապրանք | Վաճառ. ապրանք | Ընդամենը | Մատակար. ապրանք | Վաճառ. ապրանք | Ընդամենը |
| 1924/25 տար. | 545,9 | 529,9 | 1085,8 | 486,1 | 456,8 | 882,9 |
| 1925/26 » | 740,3 | 1115,5 | 1855,8 | 707,9 | 1158,7 | 1866,6 |
| Տոկոսների աճումը | 135,4 | 210,5 | 170,9 | 145,6 | 253,6 | 211,4 |

Թվերը ցույց են տալիս, վոր 1925/26 թ. գյուղվարկային կոոպերացիան 1886,6 հազար ռուբ. ապրանքաշրջանառության վաճառք է ունեցել, 1158,7 հազար ռուբ. գյուղատնտեսական արտադրանքն է կազմում։ Ապրանքաշրջանառության վաճառքը, 1924/25 թ. հետ համեմատած, 211.4 տոկոս աճում է տալիս, իսկ գնումները՝ 70,9 տոկ.։

Այժմս հնարավոր չէ տալ նրանց կատարած մթերումների մանրամասն



պատկերը, բայց, այնուամենայնիվ, կարելի յէ ասել, վոր Հայաստանում գյուղվարկային ընկերությունները մեծ դեր են խաղում ապրանքաշրջանառության ասպարեզում և գյուղացիության գործիքներ ու այլ գյուղատնտեսական պարագաներ մատակարարելու ասպարեզում առաջին տեղն է բռնում և վոր նրանց այդ աշխատանքներն օրըստօրե զարգանում են։

Վարկային ընկերությունների միջոցով ներկայումս ոգտագործվում են 64 տրակտոր, իսկ խառն գյուղատնտեսական ընկերությունների միջոցով՝ 11-ը։

Այգեգործական ընկերությունները, վորոնց տնտեսավարական աշխատանքները գլխավորապես խաղողի մթերումները և վերամշակությունն են, հաշվետու տարում մթերել են 41.791 փութ խաղող, վորից պատրաստվել է 35.000 դույլ գինի և 80.000 ատիճան ոգի։

Համեմատած անցյալ տարվա մթերումների հետ, այդ քանակը պակասել է, բնական պատահարների պատճառով, վորոնք վատ ազդեցին բերքի վրա, նվազեցնելով այն ու չնչին չափի հասցնելով։

Շնորհիվ շուկայի բարենպաստ պայմանների, ընկերությունները հնարավորություն ունեցան իրենց գինին Հայգյուղկոոպի միջոցով, լավ գներով վաճառելու և զգալի ոգուտ ստանալու։ Ընկերությունների մի մասը, դրա շնորհիվ, իր անդամներին լրացուցիչ վարձատրություն է տվել՝ խալվարին 12 ռուբլի, իսկ ոգուտի մյուս մասը գործադրվել է մառանների կառուցման համար։ Մառաններ կառուցել են 3 ընկերություններ Ղամարլուի շրջանում՝ [illegible].000 ռուբ. միջին արժողությամբ։ Բացի զուտ մասնագիտական այգեգործական ընկերություններից, խաղողի մթերումներ, կոոպերատիվ հիմունքներով, կատարվել են նաև վարկային ու խառն գյուղատնտեսական ընկերությունների միջոցով. այդ մթերումներն 1925/26 թ. կազմում են 345.000 փութ և 70.000 ատիճան ոգի, կամ ամբողջ մթերումների 60 տոկոսը։

Այգեգործական և վարկային ընկերություններն առ 1-ն հոկտեմբերի ընդգրկում եյին 1224 դեսյատին տարածություն։

Մեղվաբուծական ընկ. գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցի ամենաթույլ ճյուղերիցն է, շնորհիվ վերջին տարիների անբարենպաստ պայմանների, ինչպես փթախտը և այլն, վորոնք հնարավորություն չավին ուժեղացնելու տնտեսավարական աշխատանքները, ինչպես և մեղրի մթերումներ կատարելը։ Ընկերությունները զբաղված են փթախտի դեմ պայքարելու և իրենց անդամների մեջ ստացվող վարկերը, մոմաթերթերը, գործիքները (փեթակների) և արկղներ բաժանելու աշխատանքներով։

Ծխախոտագործական ընկերությունները պարապում են ծխախոտի վերամշակությամբ և վաճառահանությամբ։ Բացի մասնագիտական ընկերություններից, այդ ճյուղով պարապում է նաև մի խառն գյուղատնտեսական ընկերություն։ Ցանքսերի տարածությունը այս տարի հավասար է 255 դեսյատինի, վորը, անցյալ տարվա համեմատությամբ, աճել է 132 տոկոսով։ Հայաստանում, կարելի յէ ասել, վոր ծխախոտի մշակությունը և վաճառահանումը 95 տոկոսով կոոպերացված է։ Համապատասխան չորանոցների բացակայությունը ազդում է ծխախոտի վորակի վրա և հնարավորություն չի տալիս լավ գներով վաճառահանելու։

Ծխախոտագործության զարգացման համար Գյուղբանկից ստացված 16.000 ռ. և պետբյուջեյից հատկացված 8.500 ռ. գործադրվեցին 8 չորանոցների կառուցման վրա, վորոնք համարյա թե պատրաստ են և մասամբ ոգտագործվում են։

Բամբակագործական ընկ. պարապում են այժմ բամբակի ցանքսի կազմակերպման և բերքի հանձնման աշխատանքներով։ 15 կոոպերատիվ ընկերությունների միջոցով կազմակերպված ցանքսի տարածությունը հավասար է 5162 և կես դեսյատինի, կամ ամբողջ բամբակացանքսի տարածության 45,5 տոկոսին։

Այժմ այդ ընկերությունները 13 տրակտոր ունեն։

Մեքենաոգտագործական ընկ. ունեն 19 տրակտոր։ Տրակտորի վարը նստում է՝ դեսյատինը 13—20 ռուբլի, այնինչ լծկաններով՝ 25—45 ռուբլի, նայած շրջանին։ Չնայած մեր գյուղացիության հետամնացությանը, տրակտորը հետզհետե գրավում է իր արժանավոր տեղը, յեվ գյուղացիության մեջ նկատվում է ուժեղ ձգտում՝ տրակտորացման անցնելու։

Թռչնաբուծությունը նոր ճյուղ է մեր գյուղկոոպերացիայի ցանցում և դեռ շոշափելի գործունեություն չի ցույց տվել։ Ընկերությունները մեծ մասամբ կազմակերպված են գեղջկուհիներից և խոստանում են լավ ապագա՝ մեր տնտեսության այդ ճյուղի զարգացման և կոոպերացման գործում։ Հայգյուղկոոպը հնարավորություն ունեցավ յերկու գործող ընկերություններին 64 ազնվացեղ թռչուն տրամադրելու։ Ընկերությունների համար ինկուբատորներ են պատվիրված՝ թռչուններ բազմացնելու համար։

Հնդահանների ընկերությունը գտնվում է Մեղրիում ու այս սեզոնին 51.100 տուփ գրենա (բոժոժի սերմ) է պատրաստել, վոր վաճառքի յե հանվել Հայգյուղկոոպի միջոցով։ Բացի այդ, Հայգյուղկոոպը ընկերությունների միջոցով պատրաստել է 10.500 տուփ, ընդամենը 61.500 տուփ։

Արտադրանքը սպառելու շուկայի բացակայության պատճառով, առաջիկայում արտադրության այդ ճյուղի ընդլայնումն հնարավոր չէ, և նույնիսկ գրենա մթերելը, մինչև շուկաներ ունենալը, աննպատակահարմար է։

Կաթնատնտեսական կոոպերացիան գրավում է գյուղկոոպերացիայի մասնագիտական ճյուղերի մեջ առաջին տեղը թե միավորների, և թե կոոպերացված տնտեսությունների հաշվով։ Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. նա ընդգրկում է 18.652 կով, կամ ամբողջ թվի 11,3 տոկ.։ Այս ճյուղի լայն զարգացումը և նրա ապագա աշխատանքների հաջողությունը մասնագիտական ճանապարհով՝ առաջացրեց նրա առանձնացման հարցը, վորը լուծվեց «Պանիր-Յուղ-Կենտրոն»-ի կազմակերպությամբ։

Կաթնարտեների արտադրությունը ներկա տարում հավասար է 13.300 փութ զվիցերական և 35.000 փութ թուշի պանրի, վորը նրա միության կողմից վաճառքի յե հանվում կոմիսիոն հիմունքներով։

Գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցի Ֆինանսական դրությունը բնորոշում է սեփական և փոխառիկ միջոցների հետևյալ աղյուսակը.



Աղյուսակ № 6

| Տ Ի Պ Ե Ր | Սեփական | Փոխառիկ | Հարաբերական |
|---|---|---|---|
| 1. Գյուղվարկային ընկ. | 290.955 | 2.013.407 | 1 : 6,8 |
| 2. Այգեգործական » | 49.066 | 119.142 | 1 : 2,4 |
| 3. Մեղվաբուծական » | 3.652 | 25.271 | 1 : 6,9 |
| 4, Ծխախոտագործ. » | 6.819 | 146.070 | 1 : 21,4 |
| 5. Բամբակագործ. » | 6 421 | 200.165 | 1 : 31,1 |

Աղյուսակից յերևում է, վոր փոխառիկ միջոցները մի քանի անգամ ավելի յեն, քան սեփական միջոցները, վորպիսի դրությունը խիստ աննորմալ պիտի համարել։ Միջոցների այդպիսի փոխհարաբերությունը դժվարության մեջ են դնում ընկերություններին. նրանք չեն կարողանում իրենց բաշխված վարկերը ժամանակին հետ ստանալ և պարտքերը հանգցնել։ Սեփական միջոցների կուտակումն ու ուժեղացումը հրատապ խնդիրներից մեկը պետք է լինի։

Ինչ վերաբերվում է սեփական միջոցների աճմանը, այդ հետևյալ պատկերն է տալիս։

Աղյուսակ № 7

| | Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. | Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. | Աճման տոկ. |
|---|---|---|---|
| 1 Գյուղվարկային | 175.747 | 290.955 | 165,5 |
| 2 Այգեգործական | 15.031 | 49.066 | 326,5 |
| 3 Ծխախոտագործ. | 3.190 | 6.819 | 213,8 |
| 4 Մեղվաբուծակ. | 2.018 | 3.652 | 180,9 |

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, սեփական միջոցներն աճել են բոլոր ճյուղերում։ Ավելի ուժեղ են արտադրողական ընկերություններում, նամանավանդ՝ այգեգործականներում (220,5)։

Չնայած վոր միջոցների աճում է նկատվում, այնուամենայնիվ, նա ավելի դանդաղ է ընթանում, քան անդամների աճումը։

Նույն պատկերը կը ստանանք, յեթե անցնենք փայավճարների գանձման տոկոսին (առ 1-ն հոկտեմբերի 1926 թ.)

Աղյուսակ № 8

| Տ Ի Պ Ե Ր | Քանի ընկերութ. | Հասնում է | Գանձված է | Վոր տոկոսն է |
|---|---|---|---|---|
| 1 Գյուղվարկային | 34 | 218.085 | 156.989 | 71,75 |
| 2 Այգեգործական | 11 | 27.932 | 17.415 | 59,12 |
| 3 Մեղվաբուծական | 12 | 5.528 | 2.420 | 43,78 |
| 4 Ծխախոտագործ. | 5 | 5.870 | 5.605 | 95,49 |
| 5 Բամբակագործ. | 10 | 9.280 | 2.566 | 27,66 |
| 6 Մեքենառզատաղ. | 12 | 3.595 | 2.409 | 67,01 |
| 7 Խառ. գյուղ. | 12 | 5.275 | 4.522 | 85,85 |
| Ընդամենը | — | 275.565 | 191.925 | 69,65 |

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, փայավճարների լրիվ գանձում վոչ մի ճյուղում գոյություն չունի, այնինչ փայավաճարներն են, վոր ընկերության շրջանառության դրամագլխի մեծ տոկոսը և նրանց անտեսավարական աշխատանքների հիմնաքարն են կազմում։

Անհամեմատ չնչին են գանձել փայավճարները նոր կազմակերպված բամբակագործական (27,66) և մեղվաբուծական ընկերությունները։ Հերթական խնդիրներից մեկն է՝ փայավճարների լրիվ գանձում կատարելը, վորպեսզի ընկերությունները հնարավորություն ունենան իրենց աշխատանքները սեփական միջոցներով կատարելու։

Սեփական միջոցների կուտակումը և անդամների աճումն ընթանում է աննորմալ.—փայավճարները, ընդհանուր առմամբ, գանձված են միմիայն 69,65 տոկ., իսկ նոր կազմակերպված ընկերություններում նրանք իջնում են մինչև 27,66 տոկ.։ Գյուղկոոպերացիայի ցանցի առողջացման համար անհրաժեշտ է ուժեղացնել փայավճարների գանձման աշխատանքները։

Գյուղատնտեսական կոոպերացիայի միությունը՝ Հայգյուղկոոպը, բացի կազմակերպչական և ղեկավարող աշխատանքներից, զբաղվել է նաև գյուղատնտեսական ընկերությունների արտադրանքի սպառման ու նրանց գյուղատնտեսական ինվենտար, ապրանքներ և այլն մատակարարելու գործով։ Մթերված և սպառված գյուղատնտեսական ապրանքների ընդհանուր արժեքը հավասար է 3.117.000 ռուբլու։

Հայգյուղկոոպի ցանցը հաշվետու տարում հետևյալ մթերքները և հում նյութերն է արտադրել ու հայթայթել.



Աղյուսակ № 9

| | | |
|---|---|---|
| 1. Զվիցերական պանիր . . | 13.300 փութ | 399.000 ռուբլի |
| 2. Թուշի ,, . . | 35.000 ,, | 525.000 ,, |
| 3. Կարագ-յուղ . . . | 5.500 ,, | 192.500 ,, |
| 4. Կաթ . . . . . | 30.000 ,, | 90.000 ,, |
| 5. Հալած յուղ . . . . | 1.000 ,, | 30.000 ,, |
| 6. Ծխախոտ . . . . | 10.000 ,, | 150.000 ,, |
| 7. Ձու . . . . . | 500.000 հատ | 15.000 ,, |
| 8. Գինի . . . . . | 80.000 դույլ | 320.000 ,, |
| 9. Ողի . . . . . | 300.000 աստ. | 75.000 ,, |
| 10. Բուրդ . . . . | 2.250 փութ | 56.000 ,, |
| 11. Բոժոժ . . . . . | 2.400 ,, | 72.000 ,, |
| 12. Գրենա . . . . . | 61.500 տուփ | 123.000 ,, |
| 13. Խոտ . . . . . | 70.000 փութ | 38.000 ,, |
| 14. Գարի և վարսակ . . . | 16.000 ,, | 16.000 ,, |
| 15. Մեղր . . . . . | 2.200 ,, | 28.000 ,, |
| 16. Պահածո մրգեր . . . | 10.000 ,, | 80.000 ,, |
| 17. Տոմատ . . . . . | 3.000 ,, | 21.000 ,, |
| 18. Պյուրե . . . . . | 3.000 ,, | 12.000 ,, |
| 19. Վարունգ . . . . | 7.000 ,, | 14.000 ,, |
| 20. Բանջարեղենի պահածո . | 1.500 ,, | 15.000 ,, |
| | Ընդամենը . . . | 3.117.000 ,, |

Մթերումները կատարվելիս են յեղել սկզբնական ցանցի միջոցով, կոմիսիոն և կոոպերատիվ հիմունքներով։

Մթերած ապրանքների խոշոր տոկոսը սրտահանվել է Թիֆլիս և Ռուսաստան։

Մատակարարման աշխատանքներով Հայգյուղկոոպը միայն այս տարվանից է սկսել պարապել և, այդ նպատակի համար իր ունեցած միջոցներից վորոշ գումար հատկացնելով, ձեռք է բերել հետևյալ ապրանքները.

Աղյուսակ № 10

| | |
|---|---|
| Կաթնատնտեսական ինվենտար | 80.000 ռուբլի |
| Մեղվաբուծական ,, | 4.000 ,, |
| Գինեգործական ,, | 10.000 ,, |
| Սերմորայք . . . | 50.000 ,, |
| Տրակտորներ և խոշոր գործիքներ | 110.000 ,, |
| Հացամթերք . . . | 52.000 ,, |
| Կլյուկվա . . . . | 28.000 ,, |
| Ցերկաթեղեն . . . | 96.000 ,, |
| Բուժիչ նյութեր . . . | 21.000 ,, |
| Ցեմենտ . . . . | 4.000 ,, |
| Ընդամենը . . | 452.000 ,, |

Հայգյուղկոոպի տնտեսավարական, նրա ապրանքային և դրամական շրջանառության պատկերը տալիս է հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ № 11.

| 1925/26 տնտեսավարական տարում | Ապրանքի մուտքը ինքնարժեքով | | Ապրանքի ելքը վաճ. գներով | | Դրամարկղի մուտքը | | Դրամարկղի ելքը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Բացարձակ թվերով | Աճման տոկոս. | Բացարձակ թվերով | Աճման տոկոս. | Բացարձակ թվերով | Աճման տոկոս. | Բացարձակ թվերով | Աճման տոկոս. |
| 1 յեռամս. | 149.839 | 100 | 152.657 | 100,0 | 600.733 | — | 597.773 | — |
| 2 ,, | 349.984 | 233,5 | 373.316 | 244,5 | 590.637 | — | 594.362 | — |
| 3 ,, | 583.130 | 389,2 | 536.859 | 345,1 | 570.945 | - | 678.616 | — |
| 4 ,, | 309.298 | 206,4 | 291.808 | 181,2 | 820.486 | — | 820.796 | — |
| Ընդամենը | 1.392.221 | — | 1.354.640 | — | 2.681.991 | — | 2.691.747 | — |

Աղյուսակը ցույց է տալիս, որ ապրանքային վաճառքն, ըստ յեռամսյակների աճել է: Իջեցումը նկատվում է միայն վերջին յեռամսյակում: Այդ յերևույթը բացատրվում է նրանով, որ Հայգյուղկոոպը արդեն ռեալիզացիայի յե յենթարկել կատարված մթերումները և ձեռնարկել նոր մթերումներ, վորոնց վաճառահանումը կատարվել է հետևյալ տարում. հաշվետու շրջանի վաճառքի շրջանառությունը, համեմատելով անցյալ տարվա հետ, կտեսնենք աճում՝ 369,5 տոկոսով:

Նույն աճումը ցույց է տալիս Հայգուղկոոպի ֆինանսական դրությունը.

Աղյուսակ № 12

| | Հաշվեկշիռ | | Փոխառություն | | Սեփական դրամագլուխ | | Սեփական և փոխառնիկ միջոցների հարաբերությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Բացարձակ թվեր | Աճումը տոկ. | Բացարձակ թվեր | Աճումը տոկ. | Բացարձակ թվեր | Աճումը տոկ. | |
| Առ 1-ն հոկ. 25 թ. | 729.827 | 100,0 | 655.974 | 100,0 | 73.853 | 100,0 | 1 : 8,9 |
| Առ 1-ն հոկ. 26 թ. | 1.874.085 | 256,8 | 1.574.548 | 240,0 | 299.510 | 405,6 | 1 : 5,2 |

Հայգյուղկոոպի հաշվեկշիռը աճել է 156,8 տոկոսով, սեփական միջոցները՝ 305,6 տոկոսով և փոխառնիկ՝ 140,0 տոկոս: Չնայած, որ սեփական դրամագլուխների աճում է նկատվում, այնուամենայնիվ, սեփական և փոխառնիկ դրամագլուխների հարաբերությունը շատ աննորմալ է և վերջին յեռամսակում հավասար է 1 : 5,2: Մյուս կողմից՝ սեփական միջոցների մեծ տոկոսը գրավում է անշարժ կայքի մեջ, ինչպես հիմնական դրամագլուխ, որ թույլ չի տալիս շրջանառության մեջ գնել ամբողջ դրամագլուխը: Շրջանառության



դրամագլուխը, որ կազմվում է ընկերությունների մուծված փայավճարներից, շատ չնչին աճում է ցույց ավել, իսկ վերջում, շնորհիվ կաթնատնտեսական կոոպերացիայի առանձացման, այդ գումարն ավելի իջել է:

Փայավճարներ մուծված են՝

Աղյուսակ № 13

| Փայավճարներ | բացարձակ | Աճման տոկ. |
|---|---|---|
| Առ 1-ն հոկ. 25 թ. | 40.540 | 100,0 |
| Առ 1-ն հոկ. 26 թ. | 39.337 | 97,1 |

Փայավճարների նման դրությունը Հայգյուղկոոպի համար ֆինասական դժվարություններ է ստեղծում: Անհրաժեշտ է, որ ստորին ցանցը իր պարտականությունները լրիվ կատարի իր միության նկատմամբ, վորպեսզի վերջինս հնարավորություն ունենա հաջող կերպով գործելու.

Այս տարվա ընթացքում Հայգյուղկոոպը շահ և յեկամուտ է ունեցել 358.211 ռ., ծախս և վնաս՝ 274.316 ռ.: Այսպիսով, զուտ շահ է ստացվել 83.895 ռ. 66 կոպ:

Ա. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ.

Հաշվետու ժամանակաշրջանում սպառողական կոոպերացիայի ցանցն ավելի յե ձևավորվել և ամրապնդվել ու աճել: Աճման պրոցեսը հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 14

| ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐ | Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. սպ. ընկ. | Առ 1-ն հոկտեմբերի 26 թ. | |
|---|---|---|---|
| | | Սպառողական ընկ. | Տոկոսային հարաբերությունը |
| 1. Գյուղական սպառ. ընկ. | 57 | 69 | 121,0 |
| 2. Ֆաբ. Գործ. » » | 2 | 3 | 150,0 |
| 3. Գավ. կենտ. » » | 7 | 7 | 100,0 |
| 4. Խոշոր բանկոոպներ | 2 | 2 | 100,0 |
| Ամբողջ ցանցը | 68 | 81 | 119,1 |

Այդ աճումը տեղի յե ունեցել բացառապես գյուղսպառողական ընկերությունների խմբավորման հաշվին, վորոնց թիվը 57-ից բարձրացել է մինչև 69:

Սպառողական ընկերությունների քանակի աճման հետ միասին զարգացել է նաև սպառողական ընկերությունների խանութների ցանցը, որը հետևյալ պատկերն են ներկայացնում.

Աղյուսակ № 15

| ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐ | 1/10- 25 թ. խանութներ | 1 հոկտեմբերի 1926 թ. | |
|---|---|---|---|
| | | Խանութ | Տոկոս |
| 1. Գյուղատնտես. սպ. ընկ. | 176 | 201 | 114,2 |
| 2. Ֆաբ. գործ. » » | 14 | 18 | 128,6 |
| 3. Գավ. կենտ. » » | 51 | 57 | 111,7 |
| 4. Խոշոր բանկոոպներ | 35 | 33 | 94,6 |
| Ամբողջ ցանցը | 276 | 309 | 112,3 |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Խմբակ 1-ին՝ գյուղական վայրերի բոլոր կոոպերատիվները.
» 2-րդ՝ Ալլավերդու, Ղափանի և Անիի կոոպերատիվները.
» 3-րդ՝ Էջմիածնի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Նոր-Բայազետի, Բեշկիշքենդի, Գորիսի և Մեղրու կոոպերատիվները.
» 4-րդ՝ Յերևանի և Լենինականի բանկոոպները.

Մեկ սպառողական ընկերությանն ընկնում է 3,81 խանութ, վորը ցույց է տալիս, որ սպառողական ցանցը ձեզնում զարգանում է դեպի միախանութ սիստեմը, վորի հակառակ պատկերը գոյություն ուներ մինչև 1925/26 տ., յերբ մեկ միավորի վրա ընկնում եր 4,06։

Տնտեսությունների կոոպերացումը և անդամների քանակն առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. հետևյալ թվական արտահայտությունն է տալիս.

Աղյուսակ № 16

| ԳԱՎԱՌՆԵՐ | Տնտեսությունների քանակը | Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. | | Առ 1-ն հոկտեմբե- 1926 թ. | |
|---|---|---|---|---|---|
| | | Անդամների թիվը | Կոոպ. տոկ. | Անդամների թիվը | Կոոպ. տոկ. |
| Յերևանի գավառ . . | 37·356 | 14·481 | 38,8 | 19·826 | 53,1 |
| 1 Յերևան քաղ. . . | 11·068 | 6·852 | 61,9 | 8·003 | 72,3 |
| 2 Գյուղ. վայր. . . . | 26·288 | 7·629 | 29,0 | 11·823 | 45,0 |
| Լենինականի գավառ . | 34·643 | 5·660 | 16,3 | 7·167 | 20,7 |
| 1 Լենինական քաղ. . | 8·275 | 2·346 | 28,7 | 2·619 | 32,0 |
| 2 Գյուղ. վայր. . . . | 26·468 | 3·314 | 12,5 | 4·548 | 17,2 |
| Էջմիածնի գավառ . . | 27·317 | 7·272 | 26,6 | 10·140 | 37,1 |
| Լ.-Փամբակի » . . | 22·942 | 5·175 | 22,6 | 7·806 | 34,0 |
| Դիլիջանի » . | 14·425 | 4·772 | 33,1 | 7·662 | 53,1 |
| Ն.-Բայազետի » . . | 18·684 | 1·867 | 10,0 | 3·981 | 21,3 |
| Դարալագյազի » . . | 6·383 | 1·858 | 29,1 | 2·366 | 37,1 |
| Զանգեզուրի » . . | 14·048 | 4·242 | 30,0 | 6·031 | 42,9 |
| Մեղրու » . . | 1·853 | 576 | 31,1 | 771 | 41,6 |
| Ամբողջ Հայաստանում | 177·651 | 45·903 | 25,8 | 65·750 | 37,0 |



Ազգաբնակության կոոպերացման աճման մասին կարելի յե յեզրակացնել հետևյալ տվյալներից, վորոնք ապացուցում են անդամների միջին թվի աճումը մեկ սպառոկական ընկերության և մեկ խանութի վերաբերյալ.

Աղյուսակ № 17

| Կոոպերատիվ. խմբակ | Առ 1-ն հոկտեմ 1925 թ. | | | Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անդամների թիվը | Միջին թվով մեկ ս. ընկ. | միջին թվով մեկ խանութ | Անդամների թիվը | Միջին թվով 1 սպառ. ընկ. | | Միջին թվով մեկ խանութ | |
| | | | | | Բաց | Տոկ. | Բաց | Տոկ. |
| Գյուղ. ս. ընկ. | 27157 | 477 | 154 | 42149 | 611 | 127,2 | 209 | 135,7 |
| Ֆաբ.-գործ. » | 2483 | 1242 | 177 | 3852 | 1284 | 103,4 | 215 | 121,4 |
| Գավ. կեն. » » | 7065 | 1009 | 138 | 9127 | 1304 | 129,2 | 160 | 116,0 |
| Խոշ. բանկոոպ. | 9198 | 4599 | 266 | 10622 | 5311 | 113,4 | 322 | 121,0 |
| Ամբողջ ցանցը | 45908 | 675 | 166 | 65750 | 812 | 120,3 | 213 | 128,3 |

Սպառողական ընկերությունների կոոպերացված ազգաբնակության սոցիալական կազմը առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. յեղել է (տվյալներով ըստ 67 սպառողական ընկերությունների) գյուղացի—87,8%, բանվոր—4,3%, ծառայող—7,4% և այլ—0,5%։

Այսպիսով, անդամների կազմի մեջ գերակշռող տեղը բռնում են գյուղացիները, իսկ հետո՝ ծառայողները և բանվորները. կանայք կազմում են 6,6 տոկ.։

Կոոպերացիայի ֆինանսական դրության բարելավման գործում խոշոր նշանակություն է ունեցել փայատիրական դրամագլխի աճումը։ Անդամների, փայատիրական դրամագլխի և մեկ անդամի վրա ընկնող միջին փայի զարգացման համեմատական տվյալները ապացուցում են, վոր կոոպերացիան հետզհետե ուժեղացնում է իր ֆինանսական միջոցները, փայերի հաշվին։

Աղյուսակ № 18

| Սպառողական ընկերությունների խմբակներ | Առ 1-ն հոկտ. 1925 թ. | | | Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անդամների քանակը | Փայատիրական դրամագլուխ | Մեկ անդամի միջին փայը | Անդամների քանակը | | Փայատիրական դրամագլուխ | | Մեկ անդամին միջին փայը |
| | | | | Բաց. | Տոկ. | Բաց. | Տոկ. | |
| Գյուղական ս. ը. | 27157 | 77760 | 2—86 | 42149 | 155,2 | 141188 | 181,5 | 3—35 |
| Ֆաբ. գործ. » » | 2483 | 9651 | 3-89 | 3852 | 155,1 | 16551 | 171,4 | 4—30 |
| Գավ. կենտ. » » | 7065 | 25735 | 3—64 | 9127 | 121,1 | 34397 | 133,6 | 3—77 |
| Խոշոր բանկոոպ. | 9198 | 23708 | 2—58 | 10622 | 115,4 | 43130 | 181,9 | 4—06 |
| Ամբողջ ցանցը | 45908 | 136854 | 2—98 | 65750 | 143,2 | 235266 | 171,9 | 3—58 |

Հայաստանի սպառողական ստորին ցանցի վաճառքի շրջանառությունները 1825/26 թ. կազմում են 13.564 968 ռուբլի, վորը 1924/25 թ. համեմատությամբ (8.611.156 ռուբլու) տալիս է 57,5 տոկ. աճում։ Այդ թվից գյուղատնտեսական սպառողական ընկերություններին բաժին է ընկնում 40,9

տոկ., յերկու բանկոօպներին՝ 34,9 տոկ., գավկենտր. սպառողական ընկերություններին՝ 17,0 տոկ. և ֆաբրիկ. գործ. սպառողական ընկերություններին՝ 6,3 տոկ.։

Սպառողական սիստեմի առևտրական քաղաքականության հրատապ խնդիրներից մեկը հանդիսանում է նրա ապրանքային բեռնավորումը։ Միջին թվով, մեկ խանութը բեռնավորված է յեղել․

Աղյուսակ № 19

| Տարիներ | Ապրանքային ընդհանուր շրջանառութ. | | Խանութների միջին թիվը մեկ տարում | | Մեկ խանութի միջին բեռնավորումը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Գումար | Տոկոս | Քանակ | Տոկոս | Գումար | Տոկոս |
| 1924/25 թ. | 8612156 | 100,0 | 218,0 | 100,0 | 39482 | 100,0 |
| 1925/26 թ. | 13564968 | 157,5 | 295,6 | 135,2 | 45889 | 116,2 |

Այս տվյալներից յերևում է, վոր մեկ խանութի բեռնավորման աճումը (16,2 տոկ.) կատարվում է ավելի դանդաղ, քան նրա ապրանքային շրջանառությունը (57,5 տոկ.) և նույնիսկ խանութային ցանցը (35,2 տոկ.)։ Ապրանքային վոչ լրիվ բեռնավորումը պատճառ է նախ՝ առևտրական ծախսերի ավելանալուն և ապա՝ խանգարում է ազգաբնակության կոոպերացմանը և, ուրեմն, սպառողական ցանցի շուկաների ընդարձակմանը։

Սպառողական կոոպերացիային հաջողվել է ուժեղացնել իր մասնակցությունը ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ վոչ միայն բացարձակ, այլ և համեմատական չափով։ 1925/26 թ. սպառողական կոոպերացիայի շրջանառությունը, անցյալի համեմատությամբ, աճել է 57,4 տոկ., մինչդեռ Հայաստանի ամբողջ մանրածախ շրջանառությունը աճել է 40 տոկոսով։ 1925/26 թ. սպառողական ցանցը բռնում է ամբողջ շրջանառության 39,5 տոկ.—ի դիմաց 1924/25 թ. 35,1 տոկ., այսինքն, սպառցանցի շրջանառությունն աճել է 4,4 տոկ. ի հաշիվ մասնավոր առևտրի մասնակցության նվազման։

Միջին թվով ապրանքային վերադիրը սպառողական ցանցում կազմել է 14,3 տոկ., վորը ըստ խմբակների դասավորվում է հետևյալ կերպով՝ գյուղատնտեսական սպառողական ընկերություններ—15,3 տոկ., ֆաբրիկա-գործարանային սպառողական ընկերություններ—17,9 տոկ., գավառային կենտ. սպառողական ընկերություններ—14,9 տոկ., բանկոօպներ—12,3 տոկ.։

Առևտրա-կազմակերպչական ծախսերը կազմել են 11,9 տոկ. ընդդեմ 1924/25 թ. 14,5 տոկոսի։

Սպառողական կոոպերացիայի 1925/26 թ. առևտրական գործունեությունը փակվել է 291.300 ռ. ոգուտով (նախնական թվերով), վորը կազմում է շրջանառության ինքնարժեքի 2,4 տոկ., ընդդեմ 1924/25 թվի 3,6 տոկ.։

Հայաստանի Սպառցանցի Ֆինանսական դրությունը ունեցել է հետևյալ պատկերը.



Աղյուսակ № 20

| Սպառողական ընկերությունների խմբակներ | Առ 1-ն նոյեմբ. 1925 թ. | | Առ 1-ն նոյեմբերի 1926 թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Սեփական միջոցներ | Փոխառու միջոցներ | Սեփական միջոցներ | | Փոխառիկ միջոցներ | |
| | | | Գումար | Աճման տոկոս | Գումար | Աճման տոկոս |
| Գյուղական ս. ը. | 295.409 | 408.705 | 519.680 | 176,0 | 471.220 | 115,3 |
| Ֆաբ. գործ. ,, ,, | 46.425 | 77.103 | 77.647 | 167,2 | 110,870 | 143,7 |
| Գավ կենտ. ,, ,, | 121.594 | 273.964 | 195.990 | 161,1 | 302.829 | 110,5 |
| Խոշոր բանկոօպներ | 65.252 | 651.263 | 137.371 | 210,5 | 803.852 | 123,4 |
| Ամբողջ ցանցը . . . | 528.680 | 1 411.035 | 930.688 | 176.0 | 1.688.771 | 119,6 |

Թվերը ցույց են տալիս, վոր մեկ տարվա ընթացքում սպառցանցի սեփական միջոցները բարձրացել են 528.680 ռուբլուց մինչև 930.688 ռուբլի, կամ 76 տոկոսով, ինչպես փայատիրական դրամագլխի գումարի ավելացման, նույնպես և 1925/26 թվի ոգուտների հաշվին։

Առ 1-ն նոյեմբերի 1925 թ. սպառցանցի հաշվեկշռի մեջ սեփական միջոցների 1 ռուբլուն ընկնում եր 2 ռ. 60 կ. փոխառություն, վորը առ 1-ն նոյեմբերի 1926 թ. դարձավ 1 ռ. 80 կ.։ Իսկ շրջանառության մեջ առ 1-ն նոյեմբերի 1925 թ. սեփական միջոցների 1 ռուբլուն ընկնում եր փոխառիկ 4 ռ. 30 կ., վորը առ 1-ն նոյեմբերի 1926 թ. դարձավ 2 ռ. 60 կ.։ Բանկոօպները հակառակ պատկերն են տալիս։

Սպառողական կոոպերացիայի շրջանառու միջոցների շրջանառությունը հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 21

| Սպառողական ընկերությունների խմբակներ | Միջոցների շրջանառությունը առևտրում | | | | Արտադրված շրջանառությունը | Բոլոր շրջանառու միջոցների շրջանառությունը |
|---|---|---|---|---|---|---|
| | Ապրանքային շրջան. (որերով) | Դանդաղեցնում են շրջանառությունը (որերով) | | Ընդամենը շրջանառու (որեր) | | |
| | | Դեբիտորները | Դանձարկղը | | | |
| Գյուղական ս. ը. | 43,3 | 8,6 | 5,4 | 57,3 | 13,4 | 56,8 |
| Ֆաբ. գործ. » » | 48,1 | 14,7 | 3,9 | 66,7 | 24,1 | 63,9 |
| Գավ. կենտ. » » | 47,1 | 10,8 | 5,4 | 63,3 | 16,0 | 61,9 |
| Խոշոր կոոպերատ. | 40,6 | 10,4 | 1,4 | 52,4 | 18,8 | 49,3 |
| Ամբողջ ցանցը | 43 3 | 10,0 | 3,8 | 57,1 | 18,1 | 55,3 |

Սպառողական կոոպերացիայի կենտրոնի՝ Հայկոոպի գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում կայացել է ա) սպառողական կոոպերացիայի ստորին ցանցին ապրանքներ մատակարարելու, բ) ստորին ցանցի ապարատը կանոնավորելու, գ) կոոպերացիայի ասպարեզում առաջացող վտանումների և զեղծումների դեմ պայքարելու և դ) չքավորության կոոպերացման յենթարկելու մեջ։

Հայկոոպի 1925/26 թ. առևտրական շրջանառությունը ծրագրված է յեղել 6.000.000 ռուբլու, իսկ փաստորեն նա արտահայտվել է 6.698.165 ռ. գումարով։ Այսպիսով, 1925/26 թ. շրջանառությունը 24/25 թ. դիմաց աճել է 110,3 տոկոսով, իսկ ծրագիրը իրագործված է 111,6 տոկոսով։ Այդ գումարից կոոպերատիվ կազմակերպությունների մասն է կազմում 75,9 տոկոս, կամ բացարձակ գումարով՝ 5.593.620 ռուբլի, պետական և հասարակական կազմակերպությունների՝ 16,8 տոկոս և միմիայն 7,3 տոկոս ընկնում է մասնավորների հաշվին։

Հայկոոպի ապրանքաշրջանառության մեջ հիմնական ապրանքներ յեղել են՝ մանուֆակտուրա—31,8 տոկ., հացամթերքներ—13,0 տոկ., շաքար—13 տոկ., աղ—3,2 տոկ., նավթամթերքներ և վառելիք—10,5 տոկ., լուցկի—1,6 տոկ., ոճառ—1,9 տոկ., ծխախոտ—4,6 տոկ., սիլիկատներ—1,42 տոկ., յերկաթեղեն—1,3 տոկ.։ Այսպիսով, մասսայական գործածության ապրանքները կազմել են շրջանառության 85 տոկոսը, իսկ մնացած 15 տոկոսը ընկել է մյուս ապրանքների վրա։ Ապրանքների գլխավոր մատակարարողները յեղել են պետական և կոոպերատիվ կազմակերպությունները, վորոնք ամբողջ մատակարարման մեջ բռնել են 97,2 տոկոս, իսկ մնացած 2,8 տոկոսը ընկնում է մասնավորների վրա։

Հայկոոպի առ 1-ն հոկտեմբերի 26 թ. հաշվեկշիռը, նրա 1925 թ. նույն ժամանակաշրջանի հաշվեկշռի համեմատությամբ, աճել է 53,3 տոկ.։

Հաշվեկշռի ուսումնասիրությունից պարզվում է, վոր սեփական և յերկարատև ոգտագործության մեջ գտնվող գումարների ու կարճատև փոխառությունների հարաբերությունը արտահայտվում է 1։ 2,62, մինչդեռ, առ 1-ն հոկտեմբերի 1925 թ., նույն հարաբերությունը արտահայտվում է 1։ 8,80։ Այդ ապացույց է, վոր Հայկոոպի հաշվեկշիռը աճել է գերազանցորեն ի հաշիվ սեփական միջոցների։ Անշարժ միջոցները, ըստ հաշվեկշռի, կազմում են 8,5 տոկ. ամբողջ ունեցվածքի։

**Գ. ՏՆԱՅՆԱԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ**

Տնայնագործների և արհեստավորների ընդհանուր թիվը կազմում է 7.613 հոգի, վորոնցից քաղաքում զբաղված են. 2.439, իսկ գյուղերում՝ 5120։

Տնայնագործների կազմակերպումը սկսվել է 1925 թ. հուլիսից, յերբ ընտրված էր Տնայնագործական Կոմիտեն, վորը 1926 թ. վերակազմվեց և անվանվեց «Հայտնարկոոպ»։

Ներկայումս տնայնագործական արդյունաբերության միայն հետևյալ ճյուղերն ունեն պետական նշանակություն՝ մետաղագործությունը, փայտագործությունը, բրուտագործությունը, գորգագործությունը, կաշեգործությունը և վոսկերչությունը։



Մինչև 1927 թ. փետրվարի 1-ը կոոպերացված են 29 արտել, 365 անդամով և 17360 ռուբլի փայական դրամագլխով։ Այսպիսով, տնայնագործների ընդհանուր թվից կոոպերացման է յենթարկված առ 1-ն փետրվարի 1927 թ. արհեստավորների և տնայնագործների միայն 4,80 տոկոսը, իսկ 95,20 տոկոսը դեռևս մնում է կոոպերացիայի ղեկավարումից դուրս։

Տնայնագործական Կոմիտեյին հատկացված է վարկի ձևով 42.800 ռուբ. և անվերադարձ՝ 5.000 ռուբլի, աշխատանքները կազմակերպելու համար։

---

### ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՍՏՈՐԻՆ ՑԱՆՑԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

Աղյուսակ № 14

| Ա Կ Տ Ի Վ | Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. Սեփական միջոցներ | Փոխառիկ միջոցներ | Բալանս | Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. Սեփական միջոցներ | Փոխառիկ միջոցներ | Բալանս | Հոկտեմբ. 1925 թ. տոկոս. | Հոկտեմբ. 1926 թ. տոկոս. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շրջանառու դրամագլուխ, կապիտալ, արժեքները . . . . . | 323·447 | 1·411·035 | 1·734·482 | 643·230 | 1·688·771 | 2·332·001 | 89,5 | 89,1 |
| Դրամարկղ և ընթացիկ հաշիվ . | — | 92·372 | 92·372 | — | 184·858 | 184·858 | 4,8 | 7,2 |
| Ապրանքներ . . . . | — | 1·244·920 | 1·244·929 | 55·682 | 1·503·913 | 1·559.595 | 64,2 | 59,5 |
| Դեբիտորներ . . . . | 267·527 | 73·734 | 341·261 | 483·621 | — | 483·621 | 17,6 | 18,5 |
| Ձեռնարկությոններ . . | 55·920 | — | 55·920 | 103·927 | — | 103·927 | 2,9 | 3,9 |
| Հիմնադրամը կազմող արժեքներ . | 205·233 | — | 205·233 | 287·458 | — | 287·458 | 10,5 | 10,9 |
| Գույք . . . . . | 138·332 | — | 138·332 | 187·146 | — | 187·146 | 7,1 | 7,1 |
| Փայեր, արժեթղթեր . . . | 66·901 | — | 66·901 | 100·312 | — | 100·312 | 3,4 | 3,8 |
| Հաշվեկշիռ . . . . | 528·680 | 1·411·035 | 1·939·715 | 930·688 | 1·688·771 | 2·619·459 | — | — |
| Տոկոսներով . , . | 27,2 | 72,8 | 100,0 | 35,5 | 64,5 | 100,0 | — | — |

# V. ՖԻՆԱՆՍՆԵՐ

## Ա. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՅԵՎ ՆՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1925/26 թ. բյուջեն տարբերվում է նախընթաց տարիների բյուջեներից նախ՝ նրանով, որ ուղենշային չէ, այլ կայուն բյուջե յէ. յերկրորդ՝ գոյություն ունեցող օրենսդրությամբ պարզ բնորոշվում են բյուջեյական իրավունքներն ու վերջապես՝ բյուջեյի կառուցվածքի մեջ կոնստրուկտիվ փոփոխություններ են կատարված։

Կայուն բյուջե ունենալուն նպաստել են նախ՝ ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքը, ապա՝ նախընթաց տարիների փորձը, յերբ մենք սկզբում յեռամսյա և հետո՝ վեցամսյա կայուն բյուջեներ ունեցանք։

1925/26 թ. պետբյուջեյի հաշվեկշիռը 6.425.282 ռ. յե կազմում։

Բյուջեյի յեկամտային մասն ըստ առանձին հոդվածների բաղկացած է

Աղյուսակ № 1

| | 1925/26 թ. | Տոկոսներ |
|---|---|---|
| Ուղղակի հարկեր . . . | 1.582.648 | 67,1 |
| Վոչ հարկային յեկամուտներ . . . . . | 753.985 | 32,0 |
| Այլ յեկամուտներ . . . | 21.850 | 0,9 |
| Ընդամենը . | 2.358.483 | 100 |

Ինչպես տեսնում ենք, ուղղակի հարկերը յեկամուտների ընդհանուր գումարի 67,1 տոկոսն են կազմում, իսկ վոչ հարկային և այլ յեկամուտները՝ 32,9 տոկ.։ Նախընթաց տարվա համեմատությամբ, յեկամուտները մի հայտարարի բերելով, նրանց հետևյալ տեսակարար կշիռը կը ստանանք.

Աղյուսակ № 2

| | Տեսակարար կշիռ 24/25 թ. | 25/26 թ. |
|---|---|---|
| Հարկային յեկամուտներ . | 79,4 | 67,1 |
| Վոչ հարկային և այլ յեկամուտներ . . . . | 20,6 | 32,9 |
| Ընդամենը . | 100 | 100 |

Հարկային յեկամուտներ (1.582.648 ռ.) կազմվում են՝ գյուղատնտեսական, արհեստագործական, յեկամտային ու ժառանգական հարկերից, վորոնց տեսակարար կշիռն առանձին-առանձին հետևյալ պատկերն ե տալիս.

Աղյուսակ № 3

| Հ Ա Ր Կ Ե Ր | Գումարները բացարձակ թվերով | Տոկոսային հարաբերություն |
|---|---|---|
| 1. Գյուղատնտեսակ. հարկ | 819.260 | 51,75⁰/₀ |
| 2. Արհեստագործակ. » | 514.694 | 32,42⁰/₀ |
| 3. Յեկամտային » | 245.694 | 15,55⁰/₀ |
| 4. Ժառանգական »*) | 3.000 | 0,28⁰/₀ |
| Ընդամենը . | 1.582.648 | 100⁰/₀ |

1925/26 թ. բյուջեյի մեջ գյուղատնտեսական հարկը թե իր սիստեմով և թե կազմակերպչական ձևերով, նախորդ տարիների հարկի համեմատությամբ, ավելի կատարելագործված եր, բայց մի շարք թերություններ ուներ, վորոնցից ամենախոշորը գյուղացիության խավերի և տարբեր շրջանների միջև հարկի անհամաչափ բաշխումն եր։

Հարկի եյական կողմն այն եր, վոր գումարը 1924/25 թ հարկի գումարի համեմատությամբ, խոշոր չափով իջեցված եր, վորը յերևում ե հետևյալ աղյուսակից.

Աղյուսակ № 4

| ՏԱՐԻՆԵՐ | Գյուղացիության առաջադրած հարկը | Բոլոր զեղջումներից հետո պահանջվող հարկը | Առաջադրված հարկի գումարը: Յուրաքանչ. տնտ. վրա | Առաջադրված հարկի գումարը: Յուրաքանչ. շնչի վրա |
|---|---|---|---|---|
| 1924/25 թ. | 2.286.477—97 | 1.710.280—22 | 11—39 | 2—38 |
| 1925/26 թ. | 1.001.759—— | 928.687—— | 6—64 | 1—37 |

Վորպես չքավոր, տնտեսություններ, հարկից ազատված ե 46.073 տնտեսություն, այսինքն տնտեսությունների ընդհանուր թվի 30,5 տոկ.: Չքավորության տրված արտոնությունների գումարը 113.431 ռ. յե, այսինքն, առաջադրված գումարի 11,3 տոկ.:

Փաստորեն 1925/26 թվին գանձվել ե 840.140 ռ. հարկ, վորը կազմում ե պահանջվող գումարի 90,5 տոկոսը:

Նախորդ տարիների հարկային սիստեմի հիմնական թերությունները լրաց-

*) Գանձված ե միայն 74 ռ.:



նելու և գյուղատնտեսական հարկը յեկամտային հարկին մոտեցնելու նպատակով, 1926 թ. սկզբին գյուղհարկի սիստեմը բարեփոխվեց. բարեփոխման հիմունքները հետևյալներն են.

1. Հաշվի առնել և տուրքագրել գյուղացու տնտեսության ինչպես գյուղատնտեսական, նույնպես և վոչ գյուղատնտեսական, կողմնակի յեկամուտները և, այսպիսով, գյուղհարկի մեջ միացնել գյուղացու բոլոր տեսակի յեկամուտների տուրքագրումը:

2. Հարկի չափերն այն ձևով սահմանել, վոր գյուղացիության զանազան խավերի վրա ընկնող հարկի գումարը նրանց տնտեսական ունակությանը ավելի համապատասխանի:

Հարկի սիստեմի բարեփոխման հետ միասին, փոփոխություններ են կատարվել նաև ապարատի մեջ: Գյուղհարկի ապարատը գյուղացիական մասսային մոտեցնելու և նրա հետ կապելու նպատակով, գյուղերում կազմակերպվել են հարկային հանձնաժողովներ, վորոնց կազմի մեջ մտնում են իբրև նախագահ՝ գյուղխորհրդի նախագահը և անդամներ՝ գյուղխորհրդի 3 անդամը և փոխգկոմի նախագահը: Այդ հանձնաժողովի ֆունկցիաները վճռողական չեն, այլ խորհրդակցական-ոժանդակիչ բնույթ են կրում: Սակայն, յեթե այդ հանձնաժողովները ակտիվ և աշխատունակ լինեն, նրանք կարող են շատ խոշոր ազդեցություն ունենալ հարկային կամպանիայի բոլոր խնդիրների լուծման ընթացքում: 1926/27 թ. այդ հանձնաժողովների աշխատանքները, իբրև առաջին փորձ, ի հարկե, թույլ եյին:

Դեռ 1925 թվին, շրջաններում գոյություն ունեյին հարկային հանձնաժողովներ. նրանց ֆունկցիաները 1926 թ. ընդլայնվել են, և նրանց վճռական իրավունք ե տրվել:

Տուրքադրման օբյեկտների հաշվառումը, վոր կատարվել եր գյուղերում գյուղական հանձնաժողովների ղեկավարությամբ, ընդհանուր առմամբ, դրական հետևանքներ տվեց: Անցյալ 1925/26 տ. հաշվառման տվյալների համեմատությամբ, բոլոր գյուղատնտեսական կուլտուրաների տարածությունը (բացի բամբակից) և բոլոր տեսակի անասունների քանակը, նորմալ չափով աճել ե:

Աճումը յերևում ե հետևյալ աղյուսակից.

Աղյուսակ № 5

| Կուլտուրաների և անասունների անունները | 1925/26 թ. հաշվառման տվյալները | 1926/27 թ. հաշվառման տվյալները | Տարբերության տոկոսը |
|---|---|---|---|
| Վարելահող . . . . . | 411.503 դ. | 451.910,8 դ | + 9,83 |
| Հացահատիկի ցանքս . . | 167.034 ,, | 197.681,26 ,, | + 18,35 |
| Բամբակ . . . . . . | 11.632 ,, | 9.464,62 ,, | — 18,64 |
| Լծկաններ (յեզ և գոմեշ) . | 131.504 հատ | 160.584 ,, | + 22,11 |
| Կաթնատու խոշոր անասուններ (կով, մատակ) . . . | 212.135 ,, | 241.771 | + 13,97 |
| Մանր անասուններ (վոչխար, այծ) . . . . . . . | 695.124 ,, | 839.242 | + 20,73 |

Հաշվառումը պետք է բավարար համարել, որը հաստատվում է նաև նրանով, որ հաշվառման սխալների մասին գանգատների թիվն աննշան է։ Առ 1-ն հունվարի, տրված է ընդամենը 3.200 գանգատ, այսինքն, գանգատվել է տնտեսությունների ընդհանուր թվի 2 տոկոսը։

Ամբողջ Հանրապետության մեջ ոչ գյուղատնտեսական կողմնակի յեկամուտ հաշվի յե առնված 3.173.163 ռուբլի, որից տուրքադրվել է միայն 934.271 ռուբլի, այսինքն, 29,4 տոկ.։

Բոլոր ճյուղերից ստացված յեկամուտները, ըստ հաշվառման տվյալների, 28.966.921 ռուբլի յե։ Այդ գումարից տուրքադրված է միմիայն 21.855.751 ռուբլի, այսինքն, 75,5 տոկ.։ Մնացած գումարը՝ 7.111.170 ռ. չի տուրքադրված, չքավորությունը հարկից ազատելու և ոչ գյուղատնտեսական յեկամուտները լրիվ տուրքադրելու պատճառով։ Որպես չքավոր, չի տուրքադրված 57.079 տնտեսություն, այսինքն, տնտեսությունների 37,6 տոկոսը։

Հաշվի առած յեկամուտների գումարը, ըստ նրանց աղբյուրների, բաժանվում է հետևյալ ձևով.

Աղյուսակ № 6

| Յեկամուտի աղբյուրները | Գումարը | Տոկոսը՝ ընդհանուրի վերաբեր. |
|---|---|---|
| 1. Դաշտային կուլտուրաներ . | 13.386.423—74 | 46,2 |
| 2. Այգիներ և բանջարանոցներ | 2.706.528—78 | 9,3 |
| 3. Խոտհարքներ . . . . . | 1.029.551—99 | 3,6 |
| 4. Խոշոր անասուններ (բոլոր տեսակի) . . . . . . . | 6.241.892—65 | 21,5 |
| 5. Մանր անասուններ (բոլոր տեսակի) . . . . . . . | 2.226.733—40 | 7,7 |
| 6. Մեղվաբուծություն . . . | 202.627 | 0,7 |
| 7. Ոչ գյուղատնտ. աղբյուրներ | 3.173.163 | 11 |
| Ընդամենը . . . | 28.966.921—09 | 100 տոկ. |

1926/27 տ. գյուղացիությանն առաջադրված է 1.101.621 ռ. հարկ, այսինքն, յուրաքանչյուր տնտեսությանը միջին հաշվով ընկնում է 7 ռ. 12 կ., յուրաքանչյուր շնչին՝ 1 ռ. 43 կ.։ Բոլոր զեղչումների գումարը դուրս գալուց հետո, 1926/27 թ. պահանջվում է 1.028.526 ռ.։ Բյուջեյի մեջ գյուղհարկը մտել է 1.124.838 ռ. գումարով, որի մեջ, բացի 1926/27 տ. հարկից, մտել են նաև 25/26 թ. ապառիկները և մինչև 27 թ. հոկտեմբերի 1-ը գանձվելիք առաջիկա 1927/28 տ. հարկը։

Այսպիսով, 1926/27 տ. հարկի բացարձակ գումարը, նախորդ տարվա հարկի համեմատությամբ, ավելացել է 99.839 ռ.։

Սակայն, յեթե համեմատելու լինենք հարկի գումարը գյուղատնտեսության յեկամուտների գումարի հետ, կտեսնենք, որ այդ ավելացումը կատար-



վել է ոչ թե ի հաշիվ հարկի ծանրության, այլ գյուղատնտեսական յեկամուտների աճման և ոչ գյուղատնտեսական յեկամուտները տուրքադրելու պատճառով։

1925/26 թ. հարկի գումարը այդ տարում գյուղացու՝ հաշվի առած ամբողջ յեկամուտի 4,2 տոկոսն էր, իսկ 26/27 թ. հարկը՝ նույն թվին հաշվի առած յեկամուտների 3,8 տոկոսը։

Ուրեմն, թեև բացարձակ թվերով հարկի գումարն ավելացել է, սակայն, համեմատաբար նրա ծանրությունն իջել է։

Հարկի գանձումը, որ սկզբում շատ դանդաղ էր ընթանում, հունվար և փետրվար ամիսներում ուժեղացավ։ Առ 1-ն մարտի գանձված է 913.768 ռ., այսինքն, պահանջվող գումարի 88,8 տոկ.։ Նույն ժամկետի համար 1925/26 թ. գանձված էր հարկի 76 տոկ.։ Գանձումն ըստ առանձին գավառների՝ հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 7

| Գ Ա Վ Ա Ռ | Պահանջվող հարկի գումարը | Գանձված հարկի գումարը | Կատարման տոկոսը |
|---|---|---|---|
| 1 Յերևանի գավառ | 260.540—16 | 216.567 | 83,1 |
| 2 Էջմիածնի » | 174.621—46 | 155.308 | 88,9 |
| 3 Լենինականի » | 125.418—17 | 120.304 | 95,9 |
| 4 Լ-Փամբակի » | 209.113—30 | 186.525 | 89,2 |
| 5 Դիլիջանի » | 70.825—04 | 67.152 | 94,8 |
| 6 Ն.-Բայազետի » | 78.665—35 | 71.557 | 91,0 |
| 7 Զանգեզուրի » | 65.240—85 | 54.309 | 83,2 |
| 8 Դարալագյազի » | 35.476—29 | 33.524 | 94,5 |
| 9 Մեղրու » | 8.625—42 | 8.522 | 98,8 |
| Ընդամենը | 1.028.526—04 կ. | 913.768 ռ. | 88,8 |

1925/26 թ. արհեստագործական հարկ նշանակված էր 514.694 ռուբլի (99 տոկ.), գանձված էր 763.499 ռ., այսինքն 140,2 տոկ. ընդդեմ նախատեսվածի, իսկ 1924/25 թ. մուտք է յեղել 426.377 ռ.։ Առևտրական ձեռնարկությունների ընդգրկումը արհեստագործական հարկով՝ հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 8

| | 1924/25 թ. 2-րդ կիսամ | 1925/26 թ. 1-ին կիսամ. | 1925/26 թ. 2-րդ կիսամ. |
|---|---|---|---|
| Պետական և կոմունալ | 116 | 81 | 113 |
| Կոոպերատիվ . . | 233 | 282 | 330 |
| Մասնավոր . . . | 2.313 | 2.411 | 2.826 |
| Ընդամենը . | 2.662 | 2.774 | 3.269 |

Հիշված ձեռնարկությունների՝ հարկի յենթարկվող շրջանառությունների չափը ընդհանուր հարկի յենթարկվող շրջանառության մեջ նույն կիսամյակներում հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 9

| | 1924/25 թ. 2-րդ կիսամ. | 1925/26 թ. 1-ին կիսամ. | 1925/26 թ. 1-ին կիսամ |
|---|---|---|---|
| Պետական և կոմունալ | 52,31 տ. | 44,83 տ. | 51,99 տ. |
| Կոոպերատիվ . . | 21,09 » | 21,22 » | 17,36 » |
| Մասնավոր . . . | 26,6 » | 33,95 » | 30,65 » |
| Ընդամենը . | 100 » | 100 » | 100 » |

Ինչպես յերևում է աղյուսակից, պետական առևտրի տուրքադրման յենթակա շրջանառության գումարը գերազանցում է կոոպերատիվ և մասնավոր առևտրի շրջանառության գումարից. յերկրորդ տեղը գրավում է մասնավորը և յերրորդ տեղը՝ կոոպերատիվը։

Ցեկամտային հարկ՝ նշանակված եր 245.694 ռուբլի, իսկ գանձված՝ 295.290 ռ., այսինքն՝ 118,17 տոկ.։

Հարկ ժառանգությունից՝ նշանակված եր 3.000 ռուբլի, իսկ գանձված՝ 74 ռուբլի, այսինքն՝ 2,5 տոկ.։

Բոլոր տեսակի պետական վոչ հարկային յեկամուտների մեջ աչքի ընկնող տեղ են բռնում հետևյալ յեկամուտները (տոկոսներով).



Աղյուսակ № 10

| | 1924/25 թ. | 1925/26 թ. |
|---|---|---|
| Առևտրա-արդյունաբերական | 42 7 | 44,5 |
| Պետական հողային գույքեր | 25,7 | 28,0 |
| Անտառային յեկամուտներ | 18,9 | 23,5 |
| Այլ յեկամուտներ . . . | 12,7 | 11,2 |

Անցնելով նախահաշվով յեկամուտների կատարման և համեմատելով 1924/25 տ. հետ, ստանում ենք հետևյալ պատկերը.

Աղյուսակ № 11

| | Նշանակված է 1924/25 թ. | Կատարված է | | Նշանակված է 1925/26թ. | Կատարված է | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Բացարձակ թվերով | Կատարման տոկ | | Բացարձակ թվերով | Կատարման տոկ. |
| Առևտրա-արդյունաբեր. . | 215.000 | 202.474 | 94,1 | 336.400 | 172.157 | 52,1 |
| Պետ. հող. գույքեր . . | 129.990 | 8.811*) | 6,2 | 156 500 | 289.605 | 193,6 |
| Անտառային . . . | 95.000 | 136 388 | 142,8 | 177.250 | 220.181 | 124,0 |
| Այլ յեկամուտներ . . | 63.520 | 45.294 | 71,0 | 84.685 | 75 958 | 89,0 |
| Ընդամենը . | 503.510 | 392.967 | 78,0 | 754.835 | 757.901 | 100,4 |

1925/26 թ. բյուջեն ծախսերի մասում, 6.425.282 ռուբլի յեր, այսինքն՝ 1924/25 թ. բյուջեյից 54,8 տոկ. ավելի։

Յեթե համեմատենք ժողկոմատների ծախսերը, կունենանք 65,3 տոկ. աճում, վորը, ըստ առանձին ժողկոմատների, բաշխվում է այսպես.

Աղյուսակ № 12

| ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐ | 1924/25 թ. | 1925/26 թ. | Աճման տոկ. | Տոկ. ընդհանուր գումարից |
|---|---|---|---|---|
| 1. Կենտգործկոմ . . . . . | 41.912 | 78.589 | 90,2 | 2,5 |
| 2. Ժողկոմխորհ . . . . . | 67.112 | 112.199 | 67,2 | 3,6 |
| 3. Պետպլան . . . . . | 22.898 | 56.312 | 27,3 | 1,8 |
| 4. Ներքգործժողկոմատ . . . | 14.789 | 197.720 | 47,0 | 6,4 |
| 5. Արդժողկոմատ . . . . . | 112.462 | 183.281 | 63,6 | 5,8 |
| 6. Լուսժողկոմատ . . . . . | 835.196 | 1.227.206 | 46,9 | 39,3 |
| 7. Առժողկոմատ . . . . . | 330.000 | 514.965 | 55,8 | 16,5 |
| 8. Սոցապժողկոմատ . . . . | 48.919 | 70.149 | 45,8 | 2,3 |
| 9. Հողժողկոմատ . . . . . | 293.720 | 679.530 | 131,7 | 21,9 |
| Ընդամենը . . . | 1.887.008 | 3.119.951 | 65,3 | 100 |

*).—1924/25 թ. պետական հողային գույքերից ստացվելիք յեկամուտների կատարման աննշան տոկոսը բացատրում է նրանով, վոր նրանք ամբողջովին տեղական բյուջեյին են հատկացվել։

Յեթե բաժանենք ժողկոմատներն ըստ վարչականի, տնտեսականի և կուլտուրականի, հետևյալ պատկերը կստանանք.

Աղյուսակ № 13

| Տարի | Վարչական | Տոկ. | Աճման տոկ. | Տնտեսական | Տոկ. | Աճման տոկ. | Կուլտուրական | Տոկ. | Աճման տոկ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1924/25 տ. | 379.173 | 20,1 | — | 293.720 | 15,6 | — | 1.214.115 | 64,3 | — |
| 1925/26 տ. | 628.101 | 20,1 | 65,7 | 679.530 | 21,8 | 131,4 | 1.812.320 | 58,1 | 49,3 |

Այս թվերից յերևում է, որ ծախքերն աճում են գլխավորապես տնտեսական ժողկոմատների գծով, նամանավանդ Հողժողկոմատի (131,4)։

Բաժանելով հիշված ծախսերը աշխատավարձի, վարչատնտեսականի ու գործառնականի վրա և համեմատելով 1924/25 տ. հետ, կստանանք.



## ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՅԵՎ ՎԱՐՉԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆԻ—ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆԻ

Աղյուսակ № 14.

| | Աշխատավարձ | | | | | Վարչա-տնտեսական և գործառնական | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1924—25 | | 1925—26 | | Աճման տոկ. | 1924—25 | | 1925—26 | | Աճման տոկ. |
| Կենտգործկոմ . | 20.450 | 2,3 | 27.124 | 1,8 | 35,0 | 21.462 | 2,2 | 51.465 | 3,1 | 172,9 |
| Ժողկոմխորհ . | 28.340 | 3,1 | 42.223 | 2,8 | 50,0 | 38.772 | 4,0 | 69.976 | 4,4 | 82,6 |
| Պետպլան . . | 12 088*) | 1,3 | 45.769 | 3,0 | 87,5 | 10.810 | 1,1 | 10.543 | 0,6 | 50,0 |
| Ներքգործժողկ. | 64.322 | 7,0 | 99.057 | 6,8 | 54,7 | 70.467 | 7,2 | 98.663 | 6,1 | 40.0 |
| Արդժողկոմատ . | 91.900 | 10,1 | 134.259 | 8,9 | 45,6 | 20.562 | 2,1 | 49.022 | 3,1 | 145,0 |
| Լուսժողկոմատ | 432.327 | 48,0 | 625.152 | 41,6 | 44,6 | 402.869 | 41,4 | 602.054 | 37,3 | 49,7 |
| Առժողկոմատ . | 117.739 | 13,1 | 232.995 | 15,4 | 98,3 | 212.261 | 21,8 | 281.970 | 17,4 | 32,5 |
| Սոցապժողկոմ. | 10.970 | 0,3 | 15.933 | 1,1 | 50,0 | 37.949 | 3,9 | 54.216 | 3,4 | 45,9 |
| Հողժողկոմատ . | 135.621 | 14,8 | 280.801 | 18,6 | 107,4 | 158.099 | 16,3 | 398.729 | 24,6 | 151,9 |
| Ընդամենը | 913.757 | 100 | 1.503.313 | 100 | 64,6 | 973.251 | 100 | 1.616.638 | 100 | 66,1 |

*) ԾԱՆՈԹ.—Պետպլանի ծախսերը 6 ամսվա յեն ցույց տրված։

Աղյուսակից յերևում է, որ աշխատավարձն 1925/26 թ. աճում է 64,6 տոկ., իսկ վարչա-տնտեսա-գործառնական ծախսերը՝ 66,1 տոկ.:

Աշխատավարձի աճումը 1925/26 թ. բացատրվում է, մի կողմից՝ հաստիքների աճումով՝ 1760-ից 24/25 տ. մինչև 2221—1925/26 տ., իսկ մյուս կողմից՝ աշխատավարձի ավելացումով՝ 1924/25 տ. միջին ամսական աշխատավարձը 43,8 ռուբլի յեր, իսկ 25/26 տ. հասնում է մինչև 61 ռուբլու, այսինքն, աճել է 39,4 տոկ.,

Հաստիքների աճումը բացատրվում է, մի կողմից՝ հիմնարկների ցանցի լայնացմամբ, իսկ մյուս կողմից՝ նրանով, որ 1924/25 տ. հաստիքները շատ պակաս եյին:

Դրամարկղի նախնական տվյալների համաձայն, կատարողական բյուջեն հետևյալ պատկերն է տալիս.

## ՅԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

Աղյուսակ № 15

| ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆ | Նշանակված եր | Տոկ. | Կատարված է | Տոկ. | Կատարման տոկ. |
|---|---|---|---|---|---|
| 1. Հարկեր . . . . . . . | 1.582.648 | 67,1 | 1,907.382 | 69.2 | 120,5 |
| 2. Տուրքեր . . . . . . . | 36.335 | 1,6 | 45,999 | 1,6 | 126,7 |
| 3. Պետական մենաշնորհ . . | 2.500 | 0,1 | 4.230 | 0,2 | 169,2 |
| 4. Յեկամուտներ պետական գույքերից . . . . . | 368.050 | 15,6 | 547.134 | 20,1 | 148,7 |
| 5. Պետական արդյունաբերությունից և առևտրից . . | 349.600 | 14,8 | 233.274 | 8,4 | 66,7 |
| 6. Պետական հաստատություններից | 5.000 | 0,2 | 82 | — | 1,6 |
| 7. Զանազան յեկամուտներ . | 14.350 | 0,6 | 10.821 | 0,5 | 75,4 |
| Ընդամենը զուտ յեկամուտ | 2.358.483 | 100 | 2.749.102 | 100 | 116,6 |

## ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍ

Ծախսերը կատարվել են հետևյալ կերպով,

Աղյուսակ № 16

| ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆ | Նշանակված է 1925/26 թ. | Կատարված է | Տոկոս |
|---|---|---|---|
| 1. Սովորական ծախսեր . . | 3 119.951 | 3.046.885 | 97,5 |
| 2. Ֆոնդեր . . . . . . . . | 2.553 600 | 2.501.251 | 98,0 |
| 3. Պետական հարկերից և յեկամուտներից մասնատրումներ տեղական բյուջեյին . | 751.731 | 896.230 | 119,2 |
| Ընդամենը . . . | 6.425.282 | 6.444.366 | 100,3 |

Դեֆիցիտի օգտագործումը յերևում է հետևյալ թվերից.—Նախատես-



ված եր 1925/26 թ. բյուջեյով 4.066.799 ռուբլի դեֆիցիտ: Շնորհիվ այն հանգամանքի, որ յեկամուտները գանձված են 16,6 տոկոսով ավելի քան նախատեսված եյին, 63,3 տոկ. դեֆիցիտի տեղ ընկնում է 56,7 տոկ., իսկ բացարձակ թվերով՝ 4.066.799 ռ.—3.639.703 ռ.:

Բացի մեր պետական բյուջեյով նախատեսած ծախքերից, ժողովրդական տնտեսությունը և մի շարք այլ կարիքներ ֆինանսավորվում են Միութենական յեվ Անդրկովկասի բյուջեներով:

1925/26 թ ժողովրդական տնտեսության ֆինանսավորումը Միութենական և Անդրկովկասյան բյուջեներով հետևյալ պատկերն ունի

Աղյուսակ № 17.

| | Միութենական բյուջեյով | Անդրկովկասի բյուջեյով | Ընդամենը |
|---|---|---|---|
| 1. Գյուղատնտեսություն . . | 200.000 | 612.000 | 812 000 |
| 2. Արդյունաբերություն . | 2.250.000 | 6000.00« | 2.850.000 |
| 3. Ջրատնտեսություն . . | 1.878.000 | 125.000 | 2.003.0C0 |
| 4. Ելեկտրոֆիկացիա . . | — | 275.000 | 275.000 |
| 5. Կոոպերացիա . . | 60.000 | 153 000 | 213.000 |
| 6. Կուլտուրային շինարար. . | 30.000 | — | 30.000 |
| 7. Կոմունալ տնտեսություն | 225.000 | — | 225.000 |
| 8. Բնակարանային շինարար. | 707.000 | — | [illegible]07.000 |
| 9. Պայքար գործազրկութ. դեմ | — | 45.000 | 45.000 |
| 10. Մամուլի ֆինանսավորում | — | 215.000 | 215.000 |
| 11. Ճանապարհների շինար. . | — | 374.000 | 374.000 |
| Ընդամենը . . | 5.350.000 | 2.399 000 | 7.749.000 |

Այսպիսով, բյուջեյի ընդհանուր գումարը կազմում եր 14.174.282 ռուբլի, այսինքն, նախորդ 24|25 տ. 119,6 տոկ. ավելի:

Վոչ վերջնական տվյալներով, 1926|27 տ. պետական բյուջեն կազմում է 18.315.000 ռուբլի, այսինքն, նախորդ տարվանից 29,3 տոկ. ավելի:

Յեթե այս բյուջեն բաժանենք ըստ Հայաստանի սեփական բյուջեյի և ժողովրդական տնտեսության ֆինանսավորման, նախընթաց տարվա համեմատությամբ կը ստանանք հետևյալ պատկերը.

Աղյուսակ № 18.

| | 1925/26 թ. | 1926/27 թ. | Աճման տոկոս |
|---|---|---|---|
| Հայաստանի պետական բյուջեն | 6.425.282 | 8.020.361 | 124,8 |
| Միութենական բյուջե . . | 5.350.000 | 4.890.000 | 90,1 |
| Ժողովրդական տնտեսության ֆինանսավորումը Անդրկովկասի բյուջեյով . . | 2.399.000 | 5.405.000 | 229,4 |
| Ընդամենը . . | 14.174.000 | 18.315.000 | 29.3 |

Ժողկոմատների ծախսերն աճում են այս տարի, նախորդ տարվա համեմատությամբ, 20,8 տոկ., իսկ ժողովրդական տնտեսության ֆինանսավորումը՝ 45,7 տոկ.

Ըստ առանձին ճյուղերի, ժողովրդական տնտեսության ֆինանսավորումը հետևյալ պատկերն ունի (հազարներով).

Աղյուսակ № 19.

| | 1925/26 թ. | | | 1926/27 թ. | | | Տոկոսային հարաբերությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Միութեն. | Անդրկով. | Ընդամենը | Միութեն. | Անդրկով. | Ընդամենը | |
| Գյուղատնտեսություն . | 200 | 612 | 812 | — | 783 | 783 | 96,4 |
| Արդյունաբերություն . | 2250 | 600 | 2850 | 1500 | 2960 | 3860 | 156,5 |
| Ջրատնտեսություն . | 1878 | 125 | 2003 | 1270 | 220 | 1490 | 74,4 |
| Ելեկտրոֆիկացիա . | — | 275 | 275 | — | 300 | 300 | 109,0 |
| Կոոպերացիա . . | 60 | 153 | 2 3 | — | 168 | 168 | 78,8 |
| Կուրորտային շինար. . | 30 | — | 30 | — | 100 | 100 | 333,3 |
| Կոմունալ տնտեսութ. . | 225 | — | 225 | 420 | — | 420 | 186,6 |
| Բնակարանային շինար. | 707 | — | 707 | 1700 | — | 1700 | 240,4 |
| Պայքար գործազրկ. դեմ | — | 45 | 45 | — | 75 | 75 | 166,6 |
| Մամուլի ֆինանսավոր. | — | 215 | 215 | — | 200 | 200 | 93,0 |
| Ճանապարհների շինար. | — | 374 | 374 | — | 374 | 374 | — |
| Ներքին առևտուր . | — | — | — | — | 150 | 150 | 100 |
| Ընդամենը . | 5350 | 2.399 | 7749 | 4890 | 5330 | 9.620 | 131,9 |

Խնայողական ռեժիմի դիրեկտիվները մեր այս տարվա բյուջեի կառուցվածքում գտել են իրենց տեղը։



Այսպես, մինչդեռ վարչական ժողկոմատների ծախքերն 1925/26 տ. ժողկոմատների ծախքերի ընդհանուր գումարի մեջ 20,1 տոկոս էյին կազմում, այս տարի նրանք 16,1 տոկոս են կազմում։ Նույն նվաճումը մենք ունենք և տնտեսա-կուլտուրական ծախքերի վերաբերմամբ՝ 79,9 տոկ. 1925/26 տ. հասնում է 83,9 տոկ.։

Բյուջեյի մյուս հատկանիշն այն է, որ այս տարի նա ավելի պակաս սպառողական է, որ յերևում է հետևյալ թվերից. աշխատավարձը 25/26 տ. կազմում եր բյուջեյի 48,1 տոկ., 1926/27 տ. 44,2 տոկ., տնտեսա-կուլտուրական ծախսերը 1925/26 տ. կազմում էյին 51,9 տոկ., իսկ 1926/27 տ.—55,8 տոկ.։

## Բ. ՏԵՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Տեղական ֆինանսներն սկզբունքորեն չեն տարբերվում պետական ֆինանսներից, ինչպես այդ գոյություն ունի բուրժուական յերկրներում, այլ, ինչպես այդ ձևակերպում է օրենսդիրը, «Տեղական ֆինանսները կազմում են միութենական միասնական ֆինանսների մի մասը և գտնվում են տեղական խորհուրդների ու նրանց գործադիր կոմիտեների իրավասության տակ»։ Այսպիսով, ամբողջ տարբերությունը հանրապետական և տեղական ֆինանսների մեջ՝ միայն իրավական անձերի տարբերության մեջ է, առաջին դեպքում, այդ՝ հանրապետությունն է, իսկ յերկրորդ դեպքում՝ տեղական խորհուրդները։

Տեղական բյուջեն սկիզբ է առել Հայաստանում խորհրդային իրավակարգի հաստատման օրից և, ուրեմն, պարզ է, թե ինչ դժվարին պայմաններում եր ընթանում նրա զարգացումը։ Մի կողմից՝ աշխատավոր լայն մասսաների անպատրաստականությունը նման աշխատանքների համար, իսկ մյուս կողմից՝ յերկրի տնտեսության անմխիթար դրությունը, վորը իմպերիալիստական և ապա ազգամիջյան պատերազմների պատճառով հասել եր ծայր աստիճանի քայքայման, խոչընդոտ էյին հանդիսանում այդ աշխատանքներին։ Թեպետ տեղական ֆինանսների սկիզբը, ձևականորեն, պետք է հաշվել 1922 թ., բայց փաստորեն նա բավականին ուշ է կազմակերպվել, վորովհետև միմիայն 1924 թ. 9-ամսյա բյուջեն կարելի յե առաջին բյուջե հաշվել, վորին տեղերը հարկ յեղած ուշադրությամբ վերաբերվեցին և վորով ղեկավարվեցին բյուջեյի կատարման պրոցեսում։

1924/25 տ. սկզբներին թե տեղերի և թե ղեկավար մարմինների առաջ մեծ դժվարություններ ծառացան, վորովհետև այս տարվա համար դիֆերենցիացիայի յենթարկված բյուջեներ պետք եր կազմել, այն է՝ ընդհանուր գավառային բյուջեյի փոխարեն, ունենալ գավառային, քաղաքային և շրջանային բյուջեներ, զատ-զատ։

1924/25 բյուջեյական տարվա ամենախոշոր նվաճումն այն է, վոր չնայած մի շարք անբարենպաստ պայմանների, դիֆերենցիացիայի խնդիրը բավարար լուծումն է ստանում։

1925/26 բյուջեյական տարին, ընդլայնելով և զարգացնելով նախընթաց 1924/25 սկսած աշխատանքները, մի շարք նվաճումներ ունեցավ, ինչ-

պես դիֆերենցիացիայի, նույնպես և յեկամուտների հայտնաբերման, տեղերի կարիքներն ավելի ընդգրկելու և բյուջեյի՝ ավելի բարձր չափով կատարման ասպարեզներում։ Այդ ուղղությամբ մեր ունեցած նվաճումների զարգացումը մոտավոր տարիների աշխատանքների բովանդակությունը պետք է կազմի, մինչև վոր հնարավորություն ունենանք կայուն բյուջեյի անցնելու։ Ստորև բերված տախտակները տեղական բյուջեյի ասպարեզում ունեցած նվաճումների լրիվ պատկերն են տալիս.

Աղյուսակ № 20

| ԿԱՏԵԳՈՐԻԱ | Նախատ. 1924/25 թ. | | Նախատ. 25/26 թ. | | Աճումը տոկոսներով |
|---|---|---|---|---|---|
| | Գումարը | Տոկ. | Գումարը | Տոկ | |
| Գավառներ . . | 1.695,1 | 43,6 | 2.800,7 | 37,0 | 65,2 |
| Քաղաքներ . . . | 1.703,6 | 43,8 | 3.338,0 | 44,2 | 95,9 |
| Շրջաններ . . . | 490,5 | 12,6 | 1.422,5 | 18,8 | 188,2 |
| Ընդամենը | 3.88[illegible],2 | 100 | 7.561,2 | 100 | 94,2 |

Այստեղից յերևում է, թե ինչպես է աճում մեր ստորին բյուջեների նշանակությունը տեղական տնտեսության մեջ։

## ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՅԻ ՄՈՒՏՔԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Աղյուսակ № 21

| ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐ | Յենթադրված է | Կատարված է | Կատարման տոկոսը |
|---|---|---|---|
| | Հազար ռուբլիներով | | |
| 1. Հարկային . . | 1.644,6 | 1.789,6 | 109,0 |
| 2. Վոչ հարկային | 1.833,1 | 1.508,0 | 82,2 |
| 3. Ոժանդ. պետ. միջ. | 2.313,5 | 2.364,1 | 102,1 |
| 4. Այլ տեսակի . . | 1.769,9 | 1.351,9 | 76,4 |
| Ընդամենը | 7.561,1 | 7.013,3 | 92,7 |

Ինչպես յերևում է բերված թվերից, բյուջեն, ընդհանուր առմամբ, բավարար է կատարված, սակայն, առանձին խմբակներում՝ վոչ հավասար կերպով։ Այս տեսակետից, առաջին տեղը բռնում են հարկային յեկամուտները (109 տոկ.), ապա, գալիս են ոժանդակությունները (102,1)։ Թույլ են կատարվել վոչ հարկային յեկամուտները, տալով 82,2 տոկ., և վերջին հաշվով այլ յեկամուտները, վորոնց կատարման տոկոսը հավասար է 76,4-ի։



**Տեղական բյուջեյի ծախքի մասի կատարումը.**

Աղյուսակ № 22

| Ծ ա խ ս ե ր | Յենթադրված է | Կատարված է | Կատարման տոկոսը |
|---|---|---|---|
| | Հազար ռուբլիներով | | |
| 1 Վարչա-դատական . . | 1.680,6 | 1.640,4 | 97,7 |
| 2 Կուլտ-սոցիալական . . | 3.005,0 | 2.714,1 | 90,5 |
| 3 Տնտեսա-արտադրական . | 1.608,1 | 1 478,3 | 91,9 |
| 4 Այլ տեսակի . . . . | 1.267,4 | 1.084,0 | 85,6 |
| Ընդամենը . | 7.561,1 | 6.916,8 | 91,5 |

Բյուջեյի ծախսերի մասը, ինչպես յերևում է աղյուսակից, ավելի համաչափ է կատարված, քան յեկամտայինը, բայց և այնպես, չորս խմբակներում էլ նախահաշվային յենթադրությունները լրիվ չեն կատարված յեվ 91,5 տոկոս են կազմում։ Մասնավորապես, հիշատակելի յե, վոր կուլտուր-սոցիալական և տնտեսա-արտադրական վարկերը լրիվ կերպով չեն օգտագործված։

**Տեղական բյուջեյի կատարումը յեվ հարաբերական աճումը 1924/25 թ. համեմատությամբ.**

Աղյուսակ № 23

| Յեկամուտների և ծախսերի խմբակներ | 1924/25 թ. | | 1925/26 թ. | | |
|---|---|---|---|---|---|
| | Հազար ռուբլիներով | Տոկոսներ | Հազար ռուբլիներով | Տոկոսներ | Տոկոսային աճում |
| **Յեկամուտներ** | | | | | |
| 1 Հարկային . . | 1.347,1 | 39,1 | 1.789,6 | 25,5 | 32,8 |
| 2 Վոչ հարկային . | 1.331,2 | 38,6 | 1.508,0 | 21,5 | 13,3 |
| 3 Ոժան. պետ. միջոց. | 436,3 | 12,6 | 2.364,1 | 33,7 | 441,8 |
| 4 Այլ տեսակի . . | 331,1 | 9,7 | 1.351,9 | 19,3 | 320,8 |
| Ընդամենը . | 3.447,1 | 100 | 7.013,3 | 100 | 103,4 |
| **Ծ ա խ ս ե ր** | | | | | |
| 1 Վարչա-դատական | 1.151,3 | 32,8 | 1.640,4 | 23,7 | 42,5 |
| 2 Կուլտ-սոցիալական | 1.431,8 | 40,8 | 2.714,1 | 39,2 | 90,0 |
| 3 Տնտեսա-արտադ. | 417,4 | 11,9 | 1.478,3 | 21,4 | 254,2 |
| 4 Այլ տեսակի . . | 510,8 | 14,5 | 1.084,0 | 15,7 | 112,1 |
| Ընդամենը . | 3.511,3 | 100 | 6.916,8 | 100 | 97,3 |

Թվերից յերևում է նախ՝ վոր 1925—26 թ. բյուջեն բացարձակ թվերով նախընթաց տարվա բյուջեյից գերազանցում է գրեթե յերկու անգամ։ Յեկամտային մասում հարկային յեկամուտների տոկոսը բյուջեյի մեջ թեպետ համեմատորեն նվազել է, սակայն, բացարձակ թվերով աճում է տալիս։ Հարկային մասում կազմում է 25,5 տոկ., իսկ վոչ հարկային մասում՝ 21,5 տոկ.։ Մնացած յերկու խմբակները, այն է՝ պետբյուջեյից ստացվող ոժանդակությունները և մյուս աղբյուրները, վորոնց մեջ են մտնում բյուջեյի մնացորդները, փոխառությունները և այլ յեկամուտները, զգալի աճել են, ընդհանուր բյուջեյի 53 տոկ. կազմելով։

Նմանապես և ծախսերի մասում աճել է տնտեսա-արտադրական և կուլտ-սոցիալական խմբակը, և խիստ կրճատվել են վարչա-դատական ծախսերը, գրեթե 10 տոկ.։

**Գ. ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐ.**

Առ 1-ն մարտի 1925 թ. Հայաստանում ընդամենը 23 խնայողական դրամարկղ կար, վորոնցից գործում եյին միմիայն 6-ը։ Ավանդների մնացորդը հավասար եր 4.020 74 կ.։ Հետագա ամիսների ընթացքում, մինչև հուլիսը, ավանդների մնացորդը համարյա անփոփոխ է մնում, իսկ մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը, դանդաղ զարգանալով, 9.343 ռ. 43 կ-ի յե հասնում։

Մինչ այդ, հատուկ կազմակերպչական և ագիտացիոն աշխատանք չի տարվել, և, առհասարակ, դրամարկղների վրա առանձին ուշադրություն չի դարձվել։

Հատուկ աշխատակիցների կազմ չունենալու պատճառով, դրամարկղի աշխատանքները տանում եյին Ֆինժողկոմատի յելևմտից դրամարկղի պաշտոնյաները, վորոնք խնայողական դրամարկղի աշխատանքների վրա նայում եյին իբրև մի յերկրորդական գործի։

Դրամարկղների զարգացումը փաստորեն սկսվում է 1925 թ. նոյեմբեր ամսից, յերբ Հայաստանի Կենտրոնական դրամարկղը իր մի քանի պաշտոնյաներով առանձնանում է և սկսում է լայն կազմակերպչական, ագիտացիոն և հրահանգչական աշխատանք տանել։

Միջոցների բացակայության պատճառով, հնարավոր չի յեղել գավառներում հրահանգչական ավելի լայն աշխատանք տանել՝ դրամարկղների աշխատակիցների վորակը բարձրացնելու, վորը անդրադարձել է գավառների դրամարկղների զարգացման վրա։ Գլխավորապես մինչև այժմ ուշադրություն է դարձվել միմիայն Յերևանի և, մասամբ, Լենինականի ու Ղարաքիլիսայի վրա։

1925 թ. հոկտեմբերի 1-ին մեր գանձարկղների ավանդների մնացորդը հավասար եր 9.343 ռ. 43 կ., իսկ ավանդատուների թիվը՝ 395։ 1927 թ. հունվարի 1-ին ավանդների մնացորդը հասնում է 147.764 ռ. 14 կ., ավանդատուների թիվը՝ 2.260, ուրեմն տվյալ ժամանակաշրջանում ավանդները զարգանում են մոտ 1.600 տոկ., իսկ ավանդատուների թիվը՝ 580 տոկ.։

Առ 1-ն մարտի 1927 թ. գանձարկղների զարգացումը շարունակվում է համարյա նույն թափով։ Ավանդների մնացորդն է 177.040 ռ. 68 կ., իսկ



ավանդատուների թիվը—2.652, այսինքն, յերկու ամսվա ընթացքում այդ թվերը զարգանում են մոտ 120 տոկ.։ Գործող դրամարկղների թիվը նույն ժամանակաշրջանում զարգացել է 825 տոկոսով։

**Դ. ՎԱՐԿ** Հաշվետու ժամանակաշրջանում, շնորհիվ կայուն վալյուտայի և ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի, բարենպաստ պայմաններ եյին ստեղծված վարկային գործի զարգացման համար, սակայն, վարկերի (նամանավանդ յերկարատև) սղությունը հնարավորություն չի տվել շրջանառությանն՝ ավելի արագ տեմպով զարգանալու։ Վարկային հիմնարկների տված վարկերը, մեծ մասամբ, կարճատև են յեղել. այս հանգամանքը, իր հերթին, խոչընդոտ է հանդիսացել շինարարական աշխատանքների ուժեղ ընթացքին։

Հայաստանում գործող բանկերից՝ Կոմունալ բանկը վարկավորել է գլխավորապես շինարարությունը (կոմունալ, բնակարանային և ուրիշ), ապա, պետարդյունաբերությունը, պետառևտուրը և կոոպերացիան։ Համկոոպբանկը՝ այն կոոպերատիվ կազմակերպությունները, վորոնք մասնակցել են նրա փայատիրական դրամագլուխը կազմելուն։ Այսպես՝ վարկ ստանալու համար, ամեն մի կազմակերպություն պիտի մուծեր 105 ռուբլու արժողությամբ փայ, վորի դիմաց կարող եր 500 ռուբլի վարկ ստանալ։ Գյուղբանկը, առաջին հերթին զբաղվել է գավառում վարկ. ընկերությունների ցանցը կազմակերպելու աշխատանքներով (վորոնց թիվը այժմս հասնում է 14-ի) և ապա, այդ աշխատանքներն ավարտելուց հետո, հնարավորություն է ունեցել անցնելու վարկավորման գործին։ Գյուղբանկի հիմնական նպատակն է՝ վարկավորել գյուղացիական տնտեսությունը ու սրա հետ կապված պետական և հասարակական կազմակերպությունները, ըստ վորում, այդ վարկավորումը տարվում է գյուղվարկի սիստեմի միջոցով։ Միութենական Պետբանկի գրասենյակը, վորը Հայաստանի ժողովրդական տնտեսության վարկավորման գործում խոշոր դեր է կատարել անցյալում, այժմս էլ ավելի մեծ չափով ծավալում է իր վարկային գործունեյությունը, ոժանդակելով գլխավորապես այն ձեռնարկություններին, վորոնք ծառայում են տնտեսության վերականգնման գործին ու, առաջի հերթին, արդյունաբերությանը։

Հիշված բանկերը հաշվետու ժամանակաշրջանում ցույց են տվել հետևյալ գործունեյությունը.

Պետբանկի գրասենյակին պարտ են յեղել՝

Աղյուսակ № 24

| | Առ 1-ն ապրիլի 1926 թ. | Առ 1-ն մարտի 1927 թ. | Աճման տոկոսը |
|---|---|---|---|
| Պետարդյունաբերութ. . . | 1.362 հազար | 1.786 հազար | 32 տոկ. |
| Պետառևտուր . . . . . | 400 ,, | 440 ,, | 10 ,, |
| Կոոպերացիա . . . . . | 490 ,, | 640 ,, | 30 ,, |
| Վարկ հիմնարկություն . . | 300 ,, | 333 ,, | 10 ,, |
| Մասնավոր կազմակերպ. . . | 90 ,, | — | — |
| Ընդամենը . . | 2.632 ,, | 3.199 ,, | — |

Այսպիսով, չնայած վարկերի կրճատմանը, գրասենյակի ծախսերն աճել են 567.000 ռուբլով։

Պետարդյունաբերությանը զարկ տալու համար վարկավորված են՝ գինեգործությունը («Արարատ»)—600.000 ռ., պղնձարդյունաբերությունը —550.000 ռ., կաշվարդյունաբերությունը («Կաշվարդ»)—150.000 ռ., կոոպերացիան՝ սպառողականը («Հայկոոպ»)—350.000 ռ. և գյուղատնտեսականը —200.000 ռ.։

Գործունեյությունը ընդլայնելու նպատակով, գրասենյակը ուժեղացրել Լենինականում և Ղարաքիլիսայում յեղած գործակալությունների աշխատանքները։

Բանկի տարեկան շրջանառությունը յեղել է՝

| | | | |
|---|---|---|---|
| Գրասենյակինը՝ . . . . | 264 | միլ | ռուբլի |
| Գործակալություններինը՝ . | 96 | ,, | ,, |
| Ընդամենը՝ . . . . | 360 | ,, | ,, |

Հաշվետու ժամանակաշրջանում Կոմունալ բանկը տվել է՝ պետական արդյունաբերությանը, պետական առևտրին, կոոպերացիային և պետական հիմնարկություններին՝ մուրհակների դեմ—9.770.573 ռուբլի, հատուկ ընթացիկ հաշիվներով (ապահովված մուրհակներով, ապառքներով)—851.281 ռ., փոխատվություններ ապառքների, արժեթղթերի և թանգարժեքների դեմ—436.321 ռ. Նպատակային վարկավորման՝ 867.338 ռ. և բաց հաշիվներով՝ 2.206.599 ռ.։ Շինարարության համար բաց է թողնվել կարճատև և յերկարատև վարկերով՝ 1.080.369 ռ., ընդամենը—15.212.481 ռ.։

Բացի հիշված գումարներից, Միութենական Կենտրոնական Կոմունալ բանկը տրամադրել է Կոմունալ բանկին, շինարարական աշխատանքներին Հայաստանում զարկ տալու համար՝ 1.218 512 ռուբլի 28 կ., այդ գումարը Կոմունալ բանկը լրիվին տվել է Յերևանի, Լենինականի, Նոր-Բայազետի, Եջմիածնի, Զանգեզուրի, Դիլիջանի և Լոռու-Փամբակի գավգործկոմներին, «Պղինձ Պետտրեստին»՝ բանվորական տներ կառուցելու, ելեկտրոֆիկացիայի համար և այլն։



Առ 1-ն փետրվարի 1927 թ. Կոմունալ բանկին պարտ եյին 2.765.568 ռ. վորից՝

| | |
|---|---|
| Պետարդյունաբերությունը | 827.700 ռ. |
| Պետառևտուրը . . | 592.400 » |
| Պետհիմնարկները . . | 538.800 » |
| Կոոպերացիան . . | 437.200 » |
| Վարկային հիմնարկները . | 37.600 » |
| Հասարակական հիմնարկները | 22.200 » |
| Գյուղական դպրոցները . | 36.100 » |
| Մասնավոր առևտրականները, տնայնագործները և արհեստավորները . . | 55.400 » |
| Լենինականի վերաշինությանը | 97.700 » |
| Յեվ բաց հաշիվներով . | 120.468 » |
| Ընդամենը . . | 2.765.568 ռ. |

Այս գումարի մեջ մտնում են շինարարությանը տրված 506.744 ռ.,
վորից կարճատև՝ 186.103 ռ.
» յերկարատև՝ 320.641 ռ.

Կամ ըստ հիմնարկների՝

| | |
|---|---|
| Լենինականի վերաշինությանը | 97.700 ռ. |
| Պետհիմնարկներին . . . | 113.261 » |
| Գյուղդպրոցներին . . . | 36.100 » |
| Հասարակական կազմակերպ. . | 38.000 » |
| Գավգործկոմներին . . . | 172.108 » |
| Մասնավոր տների վերանորոգ. | 49.575 » |

1925 թ. մարտի 1-ից մինչև 1927 թ. փետրվարի 1-ը Կոմունալ բանկի ընդհանուր շրջանառությունն է—125.000.000 ռուբլի, իսկ թղթակցական փոխհարաբերությունները հավասար են 23.432.000 ռուբլու. Լենինանի բաժանմունքի հետ ունեցած շրջանառության գումարը կազմում է 2.156.000 ռուբլի։

Շինարարությանը զարկ տալու համար, Կոմունալ բանկը համախուռթենական խոշոր գործարանների հետ անտառանյութեր գնելու պայման է կնքել, որը հնարավորություն կտա մատչելի գներով և լավ որակի անտառանյութեր ստանալու։ Այդ ասպարեզում Կոմունալ բանկի շրջանառությունը հասնում է 2.166.000 ռուբլու։

Բանկը ստացել է զուտ արդյունք՝ 1924 թ. մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը . . . . 79.362 ռ.—24 կ.

1924/25 տ. 180.370 »—28 »

1925/26 տ. 160.591 »—33 »

Գյուղբանկի գործունեյության ընդհանուր պատկերը, հաշվետու ժամանակաշրջանում, պարզում է նրա հաշվեկշռի հետևյալ աճումը՝ 1925 թ. հոկտեմբերի 1-ին բանկի հաշվեկշիռը հավասար է յեղել 3.130.880 ռ. 54 կ., իսկ 1926 թ. հոկտեմբերին նա հասել է 4.826.120 ռ. 83 կ., այսինքն, ավել է 54 տոկոսով աճում։

Առ 1-ն փետրվարի 1927 թ. հաշվեկշիռը հավասար է 4.814.271 ռուբլի 42 կ.։

Գյուղբանկի հիմնական դրամագլուխը ներկայումս կրկնապատկվել է, հասնելով 1.500.000 ռուբլու։

Հաշվետու ժամանակաշրջանում Գյուղբանկի միջոցների հիմնական աղբյուրը կազմել են՝ փոխառությունները, ավանդները և ընթացիկ հաշիվները, ըստ որում, կնքված փոխառությունների մնացորդն առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. կազմում է 1.389.842 ռուբլի 93 կ., առ 1-ն փետրվարի 1927 թ.— 2.310.115 ռ. 41 կ.։

Ավանդների և ընթացիկ հաշիվների մնացորդն առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. կազմում է 208.758 ռուբլի 78 կ., իսկ առ 1-ն փետրվարի 1927 թ.՝ 294.797 ռուբլի 03 կ.։

Գյուղբանկի զեղչ-փոխատվական գործառնությունները հետևյալ պատկերն ունեն.

Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. 2.396.487 ռ. 23 կ.

Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. 3.716.100 ռ. 50 կ.

Գյուղվարկի սիստեմի ստորին ցանցը առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. ընդգրկում է 34 միավոր, 17.934 անդամով, որից յուրաքանչյուր ընկերությանը միջին հաշվով 527 անդամ է հասնում։

Վարկային ընկերությունների հաշվեկշիռը առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. կազմում է 1.252.268 ռուբլի 29 կ. և առ 1-ն հոկտեմբերի 1926 թ.՝ 2.937.078 ռուբլի 34 կ., այսինքն, մեկ տարում ստորին ցանցի հաշվեկշիռն աճում է ավելի քան յերկու անգամ։

Վարկային ստորին ցանցի կողմից գյուղացիությանը տրված փոխառությունների մնացորդն առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. կազմում է 1.282.188 ռուբլի 40 կ ։ Ավանդների և ընթացիկ հաշիվների մնացորդն առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. կազմում է ընդամենը 43.755 ռուբլի 19 կ ։



1925/26 թ. ընթացքում Գյուղբանկի կողմից տրված և գյուղվարկային ընկերությունների միջոցով, ըստ բոլոր զեղչ-փոխատվական գործառնությունների, 4.205.542 ռ., որոնք բաշխված են հետևյալ ձևով. Աղյուսակ № 25

| ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ | Գումարը | Ընդհանուրի %-ը |
|---|---|---|
| 1. Գյուղացիական տնտեսությունների հիմնական դրամագլուխների և գյուղատնտեսության հիմնական ծախսերի վարկավորում. | | |
| Ա. 1. Լծկաններ . . . . . | 185.024—98 | 4,4 |
| 2. Գյուղատնտ. մեքենաների և ինվենտարի | 363.290—27 | 8,6 |
| 3. Տրակտորների և այլ շարժիչների . | 194.082—- | 4,6 |
| 4. Վարձու կայանների, սերմազտիչ կայանների և արտադրական նշանակություն ունեցող գյուղատնտեսական կառուցվածքների . . . . . | 114 945—- | 2,7 |
| Ընդամենը . . | 858 072—25 | 20,3 |
| Բ. 1. Հողաշինարարության . . . | 7.000—- | 0,1 |
| 2. Մելիորիացիային . . . . | 24.183—- | 0,6 |
| Ընդամենը . . | 31.183—- | 0,7 |
| Գ. 1. Վնասատուների դեմ պայքար. միջոցներ | 12.349—89 | 0,3 |
| Ընդամենը . . | 901.605—14 | 21,[illegible] |
| 2. Տնտեսությունների արտադրապաշտան գործառնութ. վարկավորման. | | |
| Ա. Բուսաբուծության . . . | 611.816—12 | 14,6 |
| Բ. Կենդանաբուծության . . . | 195.696—13 | 4,7 |
| Ընդամենը . . | 807.522—25 | 19,3 |
| 3 Գյուղատնտեսական արդյունաբերութ. . | 503.397—16 | 11,9 |
| Անտառագործության . . . . | 2.648—95 | 0,1 |
| Ընդամենը . . | 2.648—95 | 0,1 |
| 4 Գյուղ. վարկ. սիստեմի և գյուղ. տնտ. կոոպերացիայի վարկավորում. | | |
| 1. Գյուղվարկ. կոոպերատիվների հիմնական դրամագլուխների . . | 73.750—- | 1,7 |
| 2. Շրջանառու միջոցների ուժեղացման | 693.271—38 | 16,5 |
| Ընդամենը . . | 767.021—38 | 18,2 |
| 5. Պահեստի միջոցներ (առանց նպատակային նշանակումների . . . . | 1.223.357—79 | 29,2 |
| Ընդամենը . . | 4.205.542—17 | 100% |

Համկոոպբանկի շրջանառությունն այսպես է աճել.

| | հազար ռուբլիներով | տոկոսներով |
|---|---|---|
| 1 եռամսյակում | 9.888,3 | 100 |
| 2 » | 9.619,2 | 98 |
| 3 » | 9.211,6 | 93 |
| 4 » | 10.561,7 | 107 |

Համկոոպբանկի Հայկական գրասենյակի ընդհանուր շրջանառությունը 1925—26 տ. յեղել է 39.280,9 հազար ռ. ընդդեմ նախընթաց տարվա 21.321,3 հազար ռ., այսինքն, գրեթե կրկնակի աճել է։

Շրջանառության աճման հետ միասին, աճել է և գրասենյակի հաշվեկըշիռը, վորը 1925—26 տ. աճել է 266,2 հազար ռուբլով, կամ 51 տոկոսով։ Յերկու տարվա ընթացքում, գրասենյակի հաշվեկշիռն աճել է չորս անգամից ավելի։ Առ 1-ն փետրվարի 1927 թ. գրասենյակն ունեցել է միջոցներ (ավանդներ, ընթացիկ հաշիվ, լիմիտ և այլն)—781,7 հազար ռ.։

Գրասենյակի փայատիրական դրամագլխի աճումը յեղել է ավելի նշանակալից, քան նախընթաց տարին։ Դրամագլխի կազմակերպմանը մասնակցել են ինչպես միութենական կազմակերպությունները, այնպես և ստորին կոոպերացիան, նույն թվում և սկզբնական կոոպերատիվները։ 1925 թ. հոկտեմբերից փայերի մուծումները բարձրացել են մինչև 82,9 հազար ռուբ. կամ կրկնակի։

Իր հերթին փայատերերի քանակությունը բարձրացել է 48-ից 84, այսինքն, 75 տոկոսով։

Փայատերերի քանակի աճման հետ միասին բարձրացել է և փայական մուծման միջին գումարը, վորը ամեն մեկ փայատերի վրա ընկել է՝

| | |
|---|---|
| 1925 թ. հոկտեմբեր 1 | 1,6 հազար |
| 1926 թ. հոկտեմբեր 1 | 1,7 հազար |
| 1927 թ. փետրվար 1 | 1,8 հազար |

Կոոպերատիվների պարտքերը, ըստ գեղջ-փոխատվական գործառնությունների, տալիս են հետևյալ թվերը.

| | | |
|---|---|---|
| Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. | 467,1 | 100 |
| Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. | 674,5 | 144 |
| Առ 1-ն փետրվարի 1927 թ. | 708,2 | 152 |

Ինչպես յերևում է այս թվերից, կոոպերացիայի պարտքը Համկոոպբանկին, 1925 թ. հոկտեմբերի 1-ից մինչև փետրվարի 1-ը, աճել է 467,1 հազար ռուբլուց մինչև 708,2 հազար ռուբլի, այսինքն, 1,5 անգամ։

1925/26 տ. գրասենյակը 21.828 ռ. 53 կ. ոգուտ է ստացել։

### Յե. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1924/25 տ. Հայաստանում կոպարային պարտադիր ապահովագրության յենթակա եյին՝ 1) խոշոր յեղջյուրավոր անասունները և գյուղի ու քաղաքի ցանքսերը. 2) ձիերը և քաղաքի շենքերը։ 1924/25 տարում ապահովա-



գրված եր 379.359 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն, վորից սատկել է 9,573 գլուխ (2,5 տոկ.), վճարված է ապահովագրական վարձատրություն՝ 89.458 ռուբլի։ Քաղաքներում ապահովագրված եր 1356 ձի, վորից սատկել է 103-ը (8 տոկոս), վճարված եր ապահովագրական վարձատրություն 3860 ռ.։ Ապահովագրված եր 181.789,75 դեսյատին ցանքս, վորից կարկտահար է յեղել 15.293,75 դեսյատին և վճարված է վնասը 103.170 ռ. (8,4 տոկ.)։ Հաշվետու ժամանակաշրջանում շենքերի վնասը հասնում եր ընդամենը 258 ռուբլու։

Ընդամենը, 1924/25 տարում, ըստ կոպարային պարտադիր ապահովագրության, վճարված է ապահովագրական վարձատրություն 196.488 ռ., գանձված է ապահովագին՝ 247.000 ռուբլի։

1925/26 տարում պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա եյին ամենուրեք, ամբողջ Հայաստանում, անասունները, ձիերը և ցանքսերը։ Այդ տարում խոշոր յեղջյուրավոր անասուն ապահովագրված եր 479.834 գլուխ (27 տոկոսով ավելի, քան նախորդ տարում), վորից սատկել է 37.330 գլուխ (7,8 տոկոս), վճարված է ապահովագրական վարձատրություն 655.000 ռ.։ Ապահովագրված եր 16.674 ձի, վորից սատկել է 1121 գլուխ (7 տոկոս), վճարված է 43.331 ռ.։ Ցանքսեր ապահովագրված եյին 199.279,80 դեսյատին, վորից կարկտահար է յեղել 15.977,96 դեսյատին (7,5 տոկոս), վճարված է ապահովագրական վարձատրություն՝ 219.377 ռ.։

Ընդամենը, 1925/26 տարում, վնասը, ըստ կոպարային ապահովագրության, հասնում եր **897.650** ռ., իսկ ստացված եր ապահովագին՝ **496.725** ռ.։ Ընթացիկ 1926/27 տ. կոպարային պարտադիր ապահովագրության յենթակա յեն, բացի անասուններից, ձիերից և ցանքսերից, նաև ավանակները և ուղտերը։ Գործառնական տարվա սկզբին հաշվառված եր 524.348 գլուխ յեղջյուրավոր անասուն, 17.656 ձի, 18.874 ավանակ և 199 ուղտ, վորոնցից առաջին քառամսյակում սատկել են 24.925 գլուխ յեղջյուրավոր անասուն (4,7 տոկոս), ձի՝ 467 գլուխ, (2, 7 տոկոս), ավանակ՝ 180 (0,6 տոկոս)։ Այս բոլորի համար գրասենյակը վճարել է ապահովական վարձատրություն՝ **519,340** ռուբլի։

1926/27 տարվա սկզբին կոպար հաշվարկված եր 782.490 ռ.։ Այդ գումարից առ 1-ն հունվարի 1927 թ. գանձված է 338.011 ռ. (43.2 տոկոս), հետևապես, գրասենյակը վճարել է ապահովագրական վարձատրություն այդ ժամանակաշրջանի համար **181,329** ռ. ավելի, քան գանձված ապահովագինը։

1924/25 գործառնական տարում կամավոր ապահովագրության կարգով ապահովագրված եյին՝ 1) խոշոր յեղջյուրավոր անասուն՝ 2107 գլուխ, վորից սատկել է 32 գլուխ և վճարված է վնաս՝ 1810 ռ., 2) ձի ապահովագրված եր 194 գլուխ, վորից սատկել եր 5-ը և վճարված է 270 ռ., 3) ցանքս 14.808 դեսյատին, վորից կարկտահարված է 100 դեսյատին և վճարված է 3213 ռ.։

1925/26 տարում յեղջյուրավոր անասունների, ձիերի և ցանքսերի կամավոր ապահովագրության թիվը պակասեց, ապահովագների նորմայի բարձ-

բացման հետևանքով. 1) անասուն ապահովագրված էր՝ 621 գլուխ, որից սատկել է 107 և վճարված է՝ 2126 ռ., 2) ձի ապահովագրված էր 170 գլուխ, որից սատկել է 8-ը յեվ վճարված է՝ 635 ռ., 3) ցանքս ապահովագրված էր 351,54 դեսյատին, կարկտահարված է 8,92 դեսյատին և վճարված է 784 ռ.։

1926/27 տ. առաջին քառամսյակում, կամավոր ապահովագրության կարգով, ապահովագրված է 157 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն և 22 ձի, որից սատկել է մեկ ձի, և վաճարված է միայն՝ 100 ռուբլի։

Գյուղերը, վոչ կոպարային յեվ կամավոր ապահովագրությունը կրակից՝ հետևյալ պատկերն է տալիս։

Աղյուսակ № 26

| Ապահովագրության տեսակները | 1924/25 տ. Թիվ | 1924/25 տ. Ապահովա-գումար | 1924/25 տ. Ապահո-վավճար | 1925/26 տ. Թիվ | 1925/26 տ. Ապահովա-գումար | 1925/26 տ. Ապահո-վավճար |
|---|---|---|---|---|---|---|
| 1 Վոչ կոպարային ապահովագրություն՝ կրակից | 1·104 | 3·231·000 | 4·599 | 712 | 2,280·000 | 4·120 |
| 2 Կամավոր ապահովագրություն կրակից | | | | | | |
| ա) Շենքերի | 37 | 381·000 | 2·465 | 82 | 1·759·000 | 3·655 |
| բ) Շարժական իրերի | 1 | 4·000 | 10 | 10 | 101·000 | 402 |
| գ) Ապրանքների | 306 | 7·085·000 | 19·840 | 518 | 12·750·000 | 21·335 |
| դ) Գործարանների | 15 | 1·591·000 | 18·336 | 34 | 6·270·000 | 37·592 |
| Ընդամենը՝ կամավոր ապահովագրություն՝ կրակից | 359 | 9·061·000 | 40·651 | 644 | 20·880·000 | 62·984 |
| Կամավոր՝ վոչ կոպարային ապահովագրություն կրակից | 1·463 | 12·292·000 | 45·250 | 1·356 | 29·160·000 | 67·104 |
| 3 Փոխադրություն | 187 | 887·000 | 4·543 | 435 | 4·383·000 | 9·481 |
| 4 Վնասներ կրակից | 7 | — | 258 | 11 | — | 417 |

Ըստ հիշյալ ապահովագրությունների տախտակի, 1924/25 տ. գանձված է ապահովագին՝ 45250 ռ., 1925/26 տ. 67104 ռ., վոր ավելի յե նախընթաց տարվանից՝ 46,3 տոկոսով։

# VI. ԿԱՊ ՅԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ա. ԿԱՊ Մինչև 1925—26 տ. կապի ասպարեզում աշխատանքները տարվում եյին պատերազմների ընթացքում գերազանցորեն քայքայված փոստ-հեռագրական հիմնարկների ու գծերի վերականգնման ուղիով, և միմիայն 25—26 տ. հնարավոր յեղավ նոր հիմնարկների ու գծերի կառուցման անցնելու։ Ուշադրության գլխավոր կենտրոնն է յեղել գյուղական վայրերում փոստ-հեռագրական հիմնարկներ բանալու խնդիրը։ Մի շարք գյուղերում բացված են հիմնական տիպի փոստային գործակալություններ՝ բոլոր տեսակի փոստային գործառնություններով։ Ներկայումս գործում են 40 հիմնական փոստ-հեռագրային և փոստային հիմնարկություն և 16 գործակալություն։ Խոշոր նշանակություն ունեցան ավառային և գյուղական նամակատարները, վորոնց թիվը հասնում է 31 ձիավորի և 23 հետևակի, և վորոնք շրջում են 99 գյուղ, սպասարկելով 41.500 բնակիչների։ Փոստի փոխանակման համար գործում են 9 հիմնական պետական տրակտ և 13-ը՝ կապալառուների միջոցով։ Հիմնական ուղղություններով փոստը փոխանակվում է ամեն օր, իսկ մյուսներում՝ շաբաթական 3 անգամ։ Փոստ-հեռագրական հիմնարկների աշխատանքների մեջ պարզեցում է մտցված ու կիրառված է լեզվի ազգայնացումը՝ ծանուցագրերը, բացիկները, հեռագրերը և այլն կազմված են պետական լեզվով։

Կատարված է վերանորոգում բոլոր խոշոր փոստ-հեռագրական շենքերի յեվ 1600 կիլոմետր տարածությամբ հեռագրագծերի, վորի ընթացքում դրված են նոր սյուներ՝ 1839 հատ։

Ստորև բերված աղյուսակները պարզում են փոստ-հեռագրական հիմնարկությունների գործառնությունները ու նրանց բեռնավորման աստիճանը։

Փոստային փոխանակումը

Աղյուսակ № 1

| Առաքումների տեսակը | Ստացված է ընդամենը | Ընդհանուրի մեջ կազմում է % | Ուղարկված է ընդամենը | Ընդհանուրի մեջ կազմում է % |
|---|---|---|---|---|
| Հասարակ նամակ., բացիկներ և փաթ. | 1.442.424 | 32,9 | 1.298.425 | 33,6 |
| Պարբերական հրատարակութ. քանակը | 1.956.856 | 44,6 | 1.681.960 | 43,5 |
| Պատվիրված նամակներ | 182.495 | 4,2 | 172.330 | 4,5 |
| Ծրարներ հայտարարված արժեք. | 4.469 | 0,1 | 2.666 | 0,05 |
| Դրամական փոխադրություններ | 63.618 | 1,4 | 65.740 | 1,7 |
| Ծանրոցներ՝ գնահատված | 8.571 | 0,2 | 2.988 | 0,05 |
| Ծանրոցներ՝ չգնահատված և լրագ. | 24.905 | 0,6 | 12.960 | 0,3 |
| Լրացուցիչ վճարով նամակներ | 90.024 | 2— | 171.582 | 4,4 |
| Պաշտոնական առաքումներ | 45.818 | 1— | 45.861 | 1,2 |
| Ձրի » | 570.648 | 13— | 415.033 | 10,7 |
| Ընդամենը | 4.389.828 | 100 | 3.869.845 | 100 |

**Հեռագրային փոխանակումը**

Աղյուսակ № 3

| ՀԵՌԱԳՐԵՐԻ ՏԵՍԱԿԸ | Հեռագրերի քանակը | Ընդհանուրի վրա տոկոսն է կազմում | Բառերի քանակը | Ընդհանուրի վրա տոկոսն է կազմում |
|---|---|---|---|---|
| Ելից . . . . . | 154.319 | 30,4 | 2.610.200 | 27,1 |
| Մտից . . . . | 170.590 | 33,6 | 4.094.878 | 42,6 |
| Փոխանցական . . | 183.570 | 36 | 2.915.264 | 30,3 |
| Ընդամենը . | 508.479 | 100 | 9.620.342 | 100 |

Թվերն ապացուցում են, որ փոստային հիմնարկությունների նշանակությունը բնակչության, նամանավանդ գյուղացիության աչքում, բարձրացել է։

Արտադրության բարձրացման խնդիրներից կարևոր է մատնանշել Մորզեյի սիստեմի մեքենաների փոխարինումը Կլոպֆերի սիստեմի մեքենաներով, որոնց վրա աշխատանքները տարվում են լսողությամբ, ու դրա շնորհիվ տնտեսվում է թե ժապավենը և թե տպագրական ներկը։

Գոյություն ունեցող հեռախոսային ցանցերից այժմ կանոնավոր պիտի համարել Երևանի ցանցը, որը ունի նոր սարքավորում և մինչև 400 բաժանորդ։ Լենինականի, Էջմիածնի, Դիլիջանի, Դարալագյազի և Փամբակ-Լոռու հեռախոսային ցանցերը վերակառուցման կարիք են զգում, որի համար կենտրոնից միջոցներ են պահանջված։

Հերթական խնդիր է հանդիսանում բոլոր բնակավայրերի հեռախոսայնացումը։ 212 կիլոմետր տարածության հեռախոսայնացման համար պատրաստված են բոլոր անհրաժեշտ նյութերը, բացի սյուներից, որը պիտի տրամադրեն գործկոմները։

Կապի ասպարեզում խոշոր դեր ունի կատարելու ռադիոն։ Կառուցված է Երևանում լայնահաղորդ ռադիո-կայարան, որը հնարավորություն կտա Երևանից դեկուցումներ, դասախոսություններ, համերգներ հաղորդելու թե Հայաստանի սահմաններում—բոլոր բնակավայրերին և թե Հայաստանից դուրս՝ 1800 կիլոմետր շառավիղով տարածության վրա։ Հայաստանի ռադիոֆիկացիայի գործում խոշոր դեր ունին կատարելու տեղական իշխանությունը և ռադիո-բարեկամների ընկերությունը։

1925/26 տ. ընթացքում փոստ-հեռագրատան հիմնարկություններն ունեցել են մուտք—401.663 ռ., իսկ ծախս—243.766 ռ.։

**Բ. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ.** Հայաստանի սայլատար ճանապարհների ընդհանուր տարածությունը հավասար է 4392 կիլոմետրի, որից՝ միութենական միջոցներով պահպանվում են 892 կիլոմետր, դրանից՝ 623 կիլոմետր խճուղային, և հանրապետական միջոցներով՝ 833 կիլոմետր,



իսկ մնացած 2667 կիլոմետրը զուտ տեղական նշանակություն ունեն։ Ճանապարհների ընդհանուր տարածությունից միայն 879,5 կիլոմետր տարածություն է խճուղացված։

Հաշվետու ժամանակաշրջանում ծախսված է միութենական միջոցներից՝ միութենական նշանակություն ունեցող ճանապարհների պահպանման համար—663.198 ռ., իսկ հանրապետական միջոցներից՝ հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհների համար—440.000 ռ. որի մեջ մտնում են Բեշիշքենդ-Բազարչայ 60 վերստ տարածությամբ ճանապարհի կառուցման և Շիրագլու-Բ. Վեդի-Այնազոր կառուցվելիք ճանապարհի հետազոտության աշխատանքները։

# VII. ԱՇԽԱՏԱՆՔ

Ա. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ  Աշխատավարձի կանոնավորման քաղաքականությունը հիմնականում արտահայտվել է նախ՝ աշխատավարձը հետամնաց ճյուղերում և խմբակներում բարձրացնելու ուղղությամբ, նպատակ ունենալով հավասարեցնելու այն ավելի առաջ անցած խմբակներին և ապա՝ աշխատավարձի ընդհանուր բարձրացումը՝ համահավասար աշխատանքի արտադրողականության աճմանը։

Աշխատավարձի աճման պրոցեսը առաջին կարգի դրույքի վերաբերյալ՝ հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 1

| ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐ | 1-ին կարգի դրույքը ռուբլիներով | |
|---|---|---|
| | Հոկտեմբեր 1925 թ. | Սեպտեմբեր 1926 թ. |
| Հանքագործարանային . . | 13 ռուբ. | 13 ռ. 50. |
| Մետաղների մշակման . . | 18 » | 18 » — |
| Սպիրտ, գինի, կոնյակ . . | 18 » | 18 » — |
| Հացի արտադրություն . . | 14 » | 16 » — |
| Ծխախոտագործություն . . | 16 » | 16 » — |
| Կաշեգործություն . . . . | 18 » | 18 » — |
| Բամբակազտման . . . . | 18 » | 18 » — |
| Տեքստիլ . . . . . . | 12 » | 14 » — |
| Պոլիգրաֆիկ . . . . . . | 18 » | 18 » — |
| Ֆիզիկական ուժերի . . . . | 18 » | 18 » — |

Այս աղյուսակից յերևում է, որ մինիմումի բարձրացումը տեղի յե ունեցել արդյունաբերության հետամնաց ճյուղերում, բստ որում, առանձին մինիմումները մոտեցել են ընդհանուր միջինին։



Միջին աշխատավարձի ընթացքը 1925/26 թ. տնտեսական տարում հետևյալ կերպ է ներկայանում.

Աղյուսակ № 2

| ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ | Մեկ բանվորի միջին աշխատավարձը. | |
|---|---|---|
| | Առաջին կիսամյակ | 2-րդ կիսամյակ |
| Հանքագործարանային . . | 218 — 44 | 241 — 42 |
| Մետաղամշակման . . . . | 331 — 21 | 290 — 53 |
| Սպիրտ-գինի-կոնյակ . . . | 366 — 08 | 370 — 82 |
| Հացի արտադրություն . . | 224 — 39 | 282 — 25 |
| Ծխախոտագործություն . . | 256 — 36 | 226 — 79 |
| Կաշեգործություն . . . . | 293 — 18 | 395 — 55 |
| Բամբակազտում . . . . | 400 — 25 | 443 — 50 |
| Պոլիգրաֆիկ . . . . . | 326 — 04 | 329 — 93 |
| Ֆիզիկական ուժերի . . . | 298 — 48 | 298 — 56 |
| Տեքստիլ *) . . . . . . | 135 — 26 | 143 — 03 |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1 Մետաղամշակության բանվորների աշխատավարձի անկումը բացատրվում է նրանով, որ 1925/26 տնտեսական տարվա 2-րդ կիսամյակում հաշվի յն առնվել նաև Լենինականի մեխանիկական գործարանը, ուր բանվորության աշխատավարձն ընդհանուրից հետամնաց է։

2. Աշխատավարձի անկումը ծխախոտի արտադրության մեջ՝ բացատրվում է ծխախոտագործարանի բանվորության որակային կազմի փոփոխմամբ և փաստորեն աշխատած օրերի թվի նվազումով։

Ինչպես տեսնում ենք, աշխատավարձն աճել է արդյունաբերության համարյա բոլոր ճյուղերում, սակայն, անհամաչափ կերպով։ Աճումն ավելի ուժեղ կերպով է արտահայտվել արտադրական այն ճյուղերում, ուր աշխատավարձն ամենից ցածր է յեղել, որա հետևանքով, արդյունաբերության ճյուղերի մեծամասնության աշխատավարձն ընդհանուր միջին չափերին է մոտենում։ Ճիշտ է, 1925/26 տնտ. տարվա 2-րդ կիսամյակում, ինչպես և առաջ, ամենաբարձր աշխատավարձ ունեն գինի-սպիրտ-կոնյակի, բամբակազտման. պոլիգրաֆիկ արտադրության մեջ զբաղված բանվորները, սակայն, դրա հետ միասին կիսամյակում, ընդհանուր միջին աշխատավարձին զգալի չափով հավասարվել է, իսկ մի քանի դեպքերում եվ նույնիսկ առաջ է անցել կաշեգործության ու հացի արտադրության մեջ աշխատող բանվորների աշխատավարձը։ Սակայն, մինչդեռ արդյունաբերության ճյուղերի մեծամասնության նկատմամբ տեղի յե ունենում աշխատավարձի հավասարեցում, վերածնվող (հանքագործարանային) և նոր առաջացող (տեքստիլ, ծխախոտի) արդյունաբերության ճյուղերի նկատմամբ դարձյալ պիտի նշել գոյություն ունեցող ցածր աշխատավարձը, որ զգալի չափերով հետ է մնում առաջ անցած խմբակներից, թեպետ և այստեղ ես ամսե-ամիս և կիսամյակում միջին աշխատավարձն, ընդհանուր առմամբ, աճման գծով է ընթանում։

Ստորև մեջ բերված աղյուսակը ցույց է տալիս աշխատավարձի աճումը, ծառայողների նկատմամբ։

*) Տեքստիլ ճյուղի վերաբերյալ տվյալները մոտավոր են։

Աղյուսակ № 4

| Ծառայողների խմբավորումը | Ամսական աշխատավարձը 1925/26 տարվա առաջին յեռամսյակում | Ամսական աշխատավարձը 1925/26 տարվա 4-րդ յեռամսյակում | 4-րդ յեռամս. տոկոսը՝ առաջին յեռամսյակի համեմատությամբ |
|---|---|---|---|
| | Ռ. Կ. | Ռ. Կ. | |
| 1. Ժողկոմատներ | 69—34 | 86—39 | 124,6 |
| 2. Դատական և արդարադատության հիմնարկներ | 80—49 | 93—84 | 116,6 |
| 3. Հասարակական ապահովության և կարգի պահպանման հիմնարկ. | 31—50 | 36—45 | 115,7 |
| 4. Ժող. լուսավորություն և սոցիալական դաստիարակություն | 52—85 | 60—25 | 114,0 |
| 5. Բժշկասանիտարական | 38—42 | 48—74 | 126,8 |
| 6. Արդյունաբերության, տրանսպորտի և առևտրի աջակցող հիմնարկ. | 110—58 | 120 | 108,5 |
| 7. Կապակցության հիմնարկներ | 51—28 | 62—31 | 121,5 |
| 8. Վարկային հիմնարկներ | 102—87 | 108—02 | 105,0 |
| 9. Պետ. ապահովագրություն | 96—22 | 88—33 | 92,8 |
| 10. Կոմունալ հիմնարկների վարչություն | 43—19 | 55—20 | 127,8 |
| 11. Առևտրի և առևտրա-արդյունաբերական ձեռնարկների վարչ. | 90—47 | 99—58 | 110,3 |
| 12. Առևտրական հիմնարկներ | 50—24 | 49—22 | 98,0 |
| 13. Գրականություն, գեղարվեստ | 90—37 | 92—71 | 102,6 |
| 14. Հասարակական սնունդ, մաքրություն և հանրակացան | 46—09 | 53—49 | 116,0 |
| Ընդհանուր միջինը | 63—06 | 70—99 | 112,6 |

Այստեղից մենք տեսնում ենք, վոր աշխատավարձն 1925/26 տնտեսական տարվա ընթացքում աճել է հետամնաց խմբակների նկատմամբ (պետական վարչություն, դատական ու արդարադատության մարմիններում, միլիցիա, ժող. լուսավորություն, բժշկա-սանիտարական, հասարակական սննդի հիմնարկներում և այլն), սակայն, մինչդեռ ըստ խմբակների աշխատավարձի աճումն առանձին տատանումներ չի տալիս, դրա փոխարեն, աշխատավորների առանձին կատեգորիաների նկատմամբ, տեղի ունի աշխատավարձի զգալի բարձրացում, վորը յերևում է հետևյալ տախտակից·

Աղյուսակ № 5

| Աշխատավորների կատեգորիաները | Մի աշխատավորի միջին ամս. դրույքը | | | |
|---|---|---|---|---|
| | 1925/26 տարում | | 1926/27 տարում | |
| | Պետական | Տեղական | Պետական | Տեղական |
| | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. |
| Ստորին բուժ. ապարատի կազմը | 17—11 | 16—73 | 23 — | 25 |
| Սանիտարներ և մայրապետներ | 22—73 | 22—51 | 25 — | 28 |
| Գթության քույրեր | 29—68 | 31—95 | 32—25 | 40 |
| Մանկաբարձներ | 31—56 | 43—12 | 40—45 | — |
| Բուժակներ | 42—00 | 43—50 | 40—45 | — |
| Անտառային ավագ շրջագայողներ | 27—40 | — — | 31—50 | — |
| » կրտսեր » | 25—00 | — — | 27—90 | — |
| Կրտսեր միլիցիոներներ | — — | 27—90 | 31—50 | — |
| Ավագ միլիցիոներներ Յերևանում և Լենինականում | — — | 31—50 | 40 — | — |
| Ավագ միլիցիոներներ այլ գավառներում | — — | 39.50 | 35 — | — |
| Ստորին հսկիչներ (կլյուչնիկ) ուղղիչ տներում | 27—90 | — — | 31—50 | — |
| Հսկիչներ | 31—50 | — — | 35 — | — |



**Բ. ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Արդյունաբերության վերջին տարիների զարգացումն ու առանձին ձեռնարկություններում տեղի ունեցած դժբախտ պատահարները կարևոր դարձրին զբաղված բանվորության աշխատանքի պաշտպանության խնդիրը, վորը հիմք ծառայեց Ժողկոմխորհի 1926 թ. դեկտեմբերի 17-ին «Արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման ժամանակ նախազգուշական տեխնիքա-սանիտարական հսկողության անցկացնելու մասին» և 1927 թ. փետրվարի 4-ին «Արդյունաբերության մեջ տեղի ունեցող դժբախտ պատահարների դեմ պայքարելու մասին» վորոշումներին:

1925 թ. խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում կատարած մի շարք հետազոտությունները դժբախտ պատահարների հետևյալ պատկերն են տվել.

| | | |
|---|---|---|
| Լեռնային արդյունաբերությունը | 66,6 | տոկ. |
| Բամբակամշակման արդյունաբեր. | 7,5 | » |
| Փայտամշակման արդյունաբերութ. | 2 | » |
| Շինարարություն | 9,1 | » |
| Այլ տեսակի | 13 | » |

Հետազոտությունները պարզել են, վոր այդ պատահարների հիմնական պատճառը պետք է փնտրել հնուց մնացած արդյունաբերական շենքերի և սարքավորման թերությունների ու նոր պահանջներին չհամապատասխանելու մեջ: Դրան նպաստում է նաև արդյունաբերության մեջ զբաղված բանվորության ցածր վորակը:

Այսպես, 1925 թ. դժբախտ պատահարները հետևյալ պատճառներն են ունեցել.

Աղյուսակ № 6

| Մեկուսացման պակաս. | Պահանջված միջոցների պակաս. | Հսկողության պակաս. | Արտահագուստի բացակայութ. | Լույսի պակասութ. | Մեքենաների մաշվածութ. | Բանվորների փորձի պակասութ. | Անզգուշություն. | Այլ տեսակի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 39 | 8 | 36 | 30 | 6 | 5 | 15 | 75 | 32 | 248 |

Թվերից յերևում է, վոր պատահարների մոտ կեսը առաջացել է անզգուշությունից, ապա՝ անտարբեր վերաբերմունքից ու հսկողության բացակայությունից:

Պատահարների պատճառները վերացնելու նպատակով, հրատարակված է հատուկ որենսդրություն թե նոր կառուցվող արդյունաբերական շենքերի և թե սարքավորման մասին: Որենսդրության կիրառմանը հետևելու համար կազմակերպվել են տեսչություններ՝ տեխնիքական, սանիտարական և գյուղատնտեսական, վորոնց միջոցով կատարված է աշխատանքի վայրերի ու պայմանների 543 հետազոտություն: Հնարավոր է յեղել աշխատանքի այդ ճյուղը ընդլայնել և ուսումնասիրության նյութ դարձնել նաև գյուղական վայրերում աշխատող բանվորների (հովիվների, բատրակների, գյուղատնտեսական բանվորների և այլն) աշխատանքի պայմանները:

Աշխատանքի պաշտպանության բնագավառում խոշոր նշանակություն ունին նաև կոնֆլիկտային մարմինների կատարած աշխատանքները, վորոնք մոտեցնում են կոնֆլիկտների լուծման աշխատանքը աշխատավորական մասսաներին ու վերացնում ավելորդ ձգձգումները: Առաջացած կոնֆլիկտները քննության են առնվել Հաշտարար ատյաններում ու Միջնորդ դատարաններում և աշխատանքի դատարանում: Ստորև բերված աղյուսակները ցույց են տալիս, թե քանի գործ է լուծվել 1925/26 տ. ընթացքում Հաշտարար ատյանների և քանիսը՝ Աշխատանքի դատարանի միջոցով ու նրանց արդյունքները:

## ՀԱՇՏԱՐԱՐ ԱՏՅԱՆՆԵՐԻ ՔՆՆԱԾ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ 1926 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

*(Համարիչը—կոնֆլիկտ. թվերը,—հայտարարը—ընդգրկած բանվոր. թիվը).*

Աղյուսակ № 7

| ՀԻՄՆԱՐԿ-ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ | Քննված կոնֆլ. | ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱՌԻԹԸ: Աշխատավարձի հետ կապ ունեցող | Հեռացման | Աշխատաժամանակի վերաբերյալ | Աշխ. պաշտ. վերաբեր. | Այլ պատճառներ | ՔՆՆՎԱԾ ԿՈՆՖԼԻԿ. ՀԵՏԵՎԱՆՔԸ: Հօգուտ բանվորի | Փոխադարձ զիջումներով | Ընդդեմ բանվորի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պետ. մատակ. | 27 / 147 | 23 / 87 | 1 / 1 | — | 2 / 58 | 1 / 1 | 21 / 113 | 4 / 4 | 2 / 30 |
| Տնտեսավարակ. | 79 / 694 | 58 / 492 | 2 / 2 | 2 / 7 | 8 / 68 | 9 / 125 | 60 / 529 | 16 / 162 | 3 / 3 |
| Մասնավոր | 78 / 173 | 69 / 163 | 8 / 9 | — | — | 1 / 1 | 65 / 103 | 11 / 68 | 2 / 2 |
| Հասարակակ. | 2 / 64 | 1 / 1 | — | — | 1 / 63 | — | — | 2 / 64 | — |
| Կոոպերատիվ | 4 / 28 | 4 / 28 | — | — | — | — | — | 4 / 28 | — |
| Ընդամենը | 190 / 1106 | 155 / 771 | 11 / 12 | 2 / 7 | 11 / 189 | 11 / 127 | 146 / 745 | 37 / 326 | 7 / 35 |

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՔՆՆՎԱԾ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ 1926 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

*(Համարիչը—կոնֆլիկտ. թիվը—հայտարարը—ընդգրկած բանվոր. թիվը)*

Աղյուսակ № 8

| ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ | Քննված կոնֆ. թիվը | ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱՌԻԹԸ: Աշխ-վարձի հետ կապված | Հեռացման | Աշխ. ժամանակի վերաբեր. | Աշխ. պաշտ. վերաբեր. | Այլ պատ. | ՔՆՆՎԱԾ ԿՈՆՖԼԻԿՏ. ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ: Հօգուտ բանվորի | Փոխ. զիջումներով | Ընդդեմ բանվորի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պետ մատակ. | 60 / 159 | 42 / 90 | 13 / 23 | 2 / 32 | 1 / 12 | 2 / 2 | 41 / 111 | 9 / 35 | 10 / 13 |
| Տնտեսավար. | 153 / 894 | 122 / 758 | 19 / 25 | 1 / 1 | 7 / 34 | 4 / 76 | 118 / 767 | 16 / 24 | 19 / 1υ3 |
| Հասարակական | 17 / 23 | 11 / 11 | 3 / 3 | — | 2 / 8 | 1 / 1 | 14 / 20 | 1 / 1 | 2 / 2 |
| Կոոպերատիվ | 14 / 29 | 11 / 21 | 1 / 1 | 2 / 7 | — | — | 11 / 21 | 2 / 7 | ! / 1 |
| Մասնավոր | 215 / 391 | 183 / 322 | 13 / 18 | 2 / 12 | 4 / 5 | 13 / 34 | 168 / 286 | 25 / 76 | 22 / 29 |
| Ընդամենը | 459 / 1496 | 369 / 1202 | 49 / 70 | 7 / 52 | 14 / 59 | 20 / 113 | 352 / 1205 | 53 / 143 | 54 / 148 |

Վերոհիշյալ աղյուսակներից յերևում է, վոր թե հաշտարար ատյաններում և թե աշխատանքի դատարաններում քննվել են գլխավորապես աշխատարարձի հետ կապ ունեցող գործեր, վորոնք թվով ավելի շատ բանվոր են ընդգրկում: Քննված կոնֆլիկտների 76,9 տոկոսը լուծվել է հօգուտ բանվորների, 19,5 տոկոսը՝ փոխադարձ զիջումներով, միայն 3,6 տոկոսը՝ ընդդեմ բանվորների:



**Գ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Սոցիալական ապահովագրական միջոցները կազմվում են հիմնարկ—ձեռնարկությունների տոկոսային մուծումներից: Բոլոր գոյություն ունեցող հիմնարկությունները, ըստ վտանգավորության և վնասակարության, բաժանված են 4 կարգի, ըստ վորում, առաջին կարգում գտնվածները սոցապվճարները մուծում են իրենց աշխատակիցներին տրվող աշխատավարձի 16 տոկ. չափով, յերկրորդ կարգում գտնվածները՝ 18, յերորդինը՝ 20 և չորրորդինը՝ 22 տոկ.:

Սոցիալական ապահովագրությունը, համաձայն գործող օրենսդրության, տարածվում է բոլոր վարձու աշխատանքով զբաղվող անձանց վրա: Բայց սկզբնական շրջանում, շնորհիվ վարձու աշխատանքով զբաղվածների խիստ ցրվածության, հնարավոր չի յեղել դրանց բոլորին ապահովագրմամբ ընդգրկել և միմիայն 25/26 տ. սկզբներում հնարավոր յեղավ այդ աշխատանքները տարածել նաև գյուղական վայրերում աշխատող բանվորների վրա: Ներկայումս ապահովագրությունը պարտադիր է բոլոր այն գյուղական տնտեսությունների համար, վորոնք յերեք և ավելի բանվոր ունեն: Տնային ծառայողներն ապահովագրվում են առայժմ միմիայն Յերևանում:

Սոցապահովագրվածների և ապահովադիրների քանակը և աճումը յերևում է հետևյալ աղյուսակից:

Աղյուսակ № 9.

| Յեռամսյակներ | 1924—25 թ.: Ապահովադրողների թիվը | 1924—25 թ.: Ապահովադրվածների թիվը | Աճումը տոկ. համեմ. 1923—24 թ. նկատ. | Ապահովադրվածն. աճում. տոկ. համեմ. 24—25 թ. նկատ. | 1925/26 թ.: Ապահովադրողների թիվը | 1925/26 թ.: Ապահովադրվածների թիվը | Տոկոսային հարաբեր. 24/25 թ. նկատմամբ: Ապահովադրողների թիվը | Տոկոսային հարաբեր. 24/25 թ. նկատմամբ: Ապահովադրվածների թիվը | 1926/27 թ. 1-ին յեռամսյակի: Ապահովադրողների թիվը | 1926/27 թ. 1-ին յեռամսյակի: Ապահովադրվածների թիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1) 1/X—1/I | 789 | 16.828 | 2,5 | 57,2 | 1.123 | 21.892 | 42,3 | 30,1 | 1.784 | 26.824 |
| 2) 1/I—1/IV | 788 | 15 995 | 42,2 | 37,7 | 1.352 | 21.888 | 71,6 | 36,8 | — | — |
| 3) 1/III—1/VII | 921 | 16.696 | 32,1 | 40,9 | 1.519 | 24.994 | 118,0 | 49,8 | — | — |
| 4) 1/VII—1/X | 965 | 24.797 | 40,3 | 94,3 | 1.595 | 27.217 | 146,4 | 91,7 | — | — |

Սոցապմուծումներից գոյացած ամբողջ մուտքից, համաձայն ֆոնդերի կանոնադրության, կազմվում է յերկու հիմնական ֆոնդ—մեկը՝ սոցապգանձարկղի ֆոնդ (մուտքի 72 տոկ.), վորը գտնվում է սոցապմարմինների տրամադրության տակ, իսկ մյուսը՝ բուժօգնության նախկին «Գ» ֆոնդը (մուտքի 28 տոկ.), վորը հանձնվում է Առողջապահության մարմիններին:

Սոցապահովումներ հաշվետու ժամանակաշրջանում յեղել են՝ ընդամենը 2.626.147 ռուբլու, վորը ըստ ֆոնդերի բաշխված է հետևյալ կերպով.

Աղյուսակ № 10.

| Ֆ ո ն դ ե ր | 1924/25 տ. Գումարը Ռուբ. | կ. | 1925/26 տ. Գումարը Ռուբ. | կ. | 1-ին 2 ամիսը 1926/27 տ. Գումարը Ռուբ. | կ. |
|---|---|---|---|---|---|---|
| I. Ապգանձարկղների կամ գործառնական | | | | | | |
| 1. Համամիութենական | 54.359 | 31 | 107.397 | 35 | 15.431 | 55 |
| 2. Հանրապ. գործառ. | 52.061 | 13 | 108.842 | 70 | 10.394 | 60 |
| 3. Գործառնական կամ նպաստ թոշակների | 489.386 | 03 | 983.260 | 10 | 145.290 | 02 |
| Գումարը | 595.806 | 47 | 1.199.500 | 15 | 171.116 | 17 |
| II. Բուժօգնության | | | | | | |
| 1. Հանր. բուժ. օգ. պահեստի | 22.906 | 09 | 37.783 | 90 | 5.482 | 46 |
| 2. Բան. բուժ. օգնութ. | 205.222 | 83 | 337.660 | 80 | 50.869 | 73 |
| Գումարը | 228.127 | 92 | 375.444 | 70 | 56.152 | 19 |
| Ընդամենը | 82.3935 | 39 | 1.574.944 | 85 | 227.268 | 36 |

Նպաստներ և թոշակների դրությունը յեղել է՝

Աղյուսակ № 11

| Տարիֆներ | Ս ա յ լ դ ո Ռուբ. | կ. | Մ ո ւ տ ք Ռուբ. | կ. | Ե լ ք Ռուբ. | կ. | Մնացորդ Ռուբ. | կ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1924/25 տ. | 1.872 | 12 | 437.094 | 98 | 415.124 | 16 | 23.842 | 94 |
| 1925/26 տ. | 23.842 | 94 | 988.860 | 94 | 971.852 | 98 | 40.850 | 90 |
| 1926/27 տ. 2 ամիս | 40.850 | 90 | 145.290 | 02 | 193.619 | 32 | 7.478 | 40 |



**Այդ Փոնդերից տրված է**

Աղյուսակ № 12

| Ծախքերի տեսակները | 1924/25 տ. Դեպքերի թիվը | Վարձատրության օրերի թիվը | Վճարված գումարը | 1925/26 տ. Դեպքերի թիվը | Վարձատրության օրերի թիվը | Վճարված գումարը | 1926/27 տ. Դեպքերի թիվը | Վարձատր. օրերի թիվը | Վճարված գումարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Կենսաթոշակ** | | | | | | | | | |
| Աշխանկարներ . . | 1. 44 | — | 23.721—11 | 1.763 | — | 350.099—20 | — | — | - 7 |
| Աշխխեղանդամ . | — | — | — — | 157 | — | 4567—39 | — | — | - |
| Ընտանիքի մահացած նեցուկ . . | 1.100 | — | 11.995—19 | 2.108 | — | 35.572—74 | — | — | 1 454- 3 |
| Լուսավ. աշխ. . . | — | — | — — | 839 | — | 9 697—50 | — | — | 852—50 |
| **Նպաստ** | | | | | | | | | |
| Գործազուրկն. . . | 4,684 | — | 31 221—60 | 6.361 | — | 57 397 -68 | — | — | 14.140—89 |
| Ծննդաբերութ. համար մանկ. օժիտ | 3,645 | — | 52.193—38 | 5.666 | — | 115.062—32 | — | — | — |
| Մանկական սնընդադրամ . . . . | 24.232 | — | 89.888 -88 | 31.038 | 1.022.620 | 195 598—88 | — | — | 68 792—20 |
| Թաղման համար . | 915 | — | 14.843—80 | 1.823 | — | 50,951—15 | — | — | — |
| Ժամանակ. անաշխ. համար . . . . . | 6 593 | 125448 | 169.946 - 03 | 14.160 | 179.793 | 342 692—61 | — | — | 58.414—34 |
| Գումարը | — | — | 393.909—99 | — | — | 846.639—47 | — | — | 167 575—83 |
| Գանձարկղի կազմ. ծախսեր . . . . | | | — — | — | — | 92,774 - 90 | — | — | 21.496—86 |
| Փոխադրության և այլ. . . . . | — | — | 21 214—17 | — | — | 32.438—61 | — | — | 4.548—63 |
| Ընդամենը . . . | — | — | 415 124—16 | — | — | 971.852—98 | — | — | 193.619—32 |

Աղյուսակից յերևում է, վոր նպաստ-թոշակների ֆոնդից կատարվող ծախքերը տարեց-տարի և անընդհատ ավելանում են: Ընդունելով 1924/25 տ. տրված նպաստների և թոշակների գումարը՝ 393.909 ռ. վորպես հարյուր տոկոս, կը ստանանք 1925/26 տ. նույն ծախսերի համար 215 տոկ.:

Թոշակների ու նպաստների նվազագույն չափը հավասար է 6 ռ. 05 կ., իսկ առավելագույնը՝ 52 ռ .70 կ.:

**Բուժօգնության Փոնդն ունեցել է հետեվյալ պատկերը.**

Աղյուսակ № 13.

| Տարիներ | Սայլդո առ 1-ն դեկտեմբերի | Մուտք | ե ք | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| 1924/25 տ. | 10.197—86 | 135.816 -75 | 118.636—35 | 27.378—26 |
| 1925/26 տ. | 27.378—26 | 339.040—05 | 294.732—31 | 71.686—00 |
| 1926/27 տ. 2 ամսում | 71.686—00 | 50 669—73 | 50.669—73 | 71.686—00 |

*Սանիտարա-կուրորտային բուժման և ուղարկված՝*

Աղյուսակ № 14

| ՏԱՐԻ | Դիլի-ջան | Արզնի | Ախտա-լա | Սևաս-տոպոլ | Կիսլո-վոդսկ | Պյատի-գորսկ | Եսենտու-կի | Ժելեզնո-վոդսկ | Բորժոմ | Ալուպ-կա | Աբաս-թուման |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1924/25 տ. | 194 | 29 | 89 | 6 | 63 | 24 | 33 | 14 | 26 | 12 | 45 |
| 1925/26 տ. | 457 | 328 | 116 | 59 | 121 | 29 | 69 | 35 | 49 | 5 | 28 |

| ՏԱՐԻ | Գագրի | Եվպա-տորիա | Ղրիմ | Սու-խում | Ցաղվե-րի | Սու-րամ | Յալթա | Սոչի | Ցեմի | Աբաս-թուման | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1924/25 տ. | — | 16 | — | — | 15 | 4 | 3 | 2 | 2 | 5 | 582 |
| 1925/26 տ. | 25 | 15 | 14 | — | — | — | — | — | — | -- | 1352 |

*Բուժման ուղարկվածների սոցիալական կազմը յեղել է՝*

Աղյուսակ № 15

| 1924/25 տ. | | | | | 1935/26 տ. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բանվոր | Ծառա-յող | Գործա-զուրկն. և ուրիշ | Ընտա-նիքի անդամ | Ընդա-մենը | Բանվոր | Ծառա-յող | Գործա-զուրկ և ուրիշ | Ընտա-նիքի անդամ | Ընդա-մենը |
| 190 | 320 | 21 | 43 | 582 | 262 | 327 | 6 | 18 | 610 |

Սանատորա-կուրորտային կամպանիայի համար 1924/25 տ. ծախսված է յեղել ընդամենը 86.074 ռ. 29 կ., իսկ 1925/26 տ. նրա գումարը հավասար եր 157.780 ռ., վորի մեջ մտնում է 240 ձրի ստացված տեղերի և 370 լրացուցիչ գնված մահճակալների արժեքը։ Վերջին 370 մահճակալի համար վճարված է 49.403 ռ. 54 կ.։

1924/25 տ. ունեցել ենք 3 հանգստի տուն՝ Ծաղկաձորում—40 մահճակալով, Ղարաքիլիսայում—50, և Ջանգեզուրում—15, ընդհանուր առմամբ՝ 105 մահճակալ։ Մահճակալների այդ քանակը չեր բավարարում յեղած կարիքը, ուստի և 1925/26 տ. նրանց թիվը ավելացվեց՝ Ծաղկաձորում և Ղարաքիլիսայում 20-ական, իսկ Ջանգեզուրում—3 մահճակալով, և այսպիսով ստացվեց ընդամենը 148 մահճակալ, վորոնք ոգտագործվել են հետևյալ կերպով.

Աղյուսակ № 16

| ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ | 1924/25 թ. | 1925/26 թ. | Տոկոսային հարաբերություն |
|---|---|---|---|
| | Հանգստացողն. թիվը | | |
| Ծաղկաձորի . . . | 340 | 404 | 118,8 |
| Ղարաքիլիսայի . . | 358 | 520 | 145,2 |
| Ջանգեզուրի . . . | 68 | 96 | 141,2 |
| Ընդամենը՝ . | 766 | 1020 | 133,5 |



**Հանգստացողների թիվը ըստ սոցիալական դրության.**

Աղյուսակ № 17

| 1924/25 տ. | | | | | 1925/26 տ. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | Բանվոր | Տոկոս | Ծառայող | Տոկոս | Ընդամենը | Բանվոր | Տոկոս | Ծառայող | Տոկոս |
| 766 | 448 | 58,5 | 318 | 41,5 | 1.020 | 538 | 52,7 | 482 | 47,3 |

Հանգստի տները պահպանելու համար ծախսվել է 24/25 տ. 47.468 ռ. 5 կ., իսկ 25/26 տ. 134.410 ռ. 17 կ.։

Դ. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ

Չնայած այն հանգամանքին, վոր արդյունաբերության մեջ զբաղված բանվորական ուժը տարեց-տարի աճում է, այնուամենայնիվ, գործազրկությունը խոշոր չափերի յե հասնում։

Գործազուրկների ուսումնասիրությունը պարզում է, վոր գործազրկությունը կրում է ավելի շուտ սեզոնային քան վորակային բնույթ և բացատրվում է նրանով, վոր գյուղական վայրերում բանվորական ուժը՝ պահանջից ավելի լինելու պատճառով՝ ուժեղ հոսանք է գալիս դեպի քաղաք, և վոր մանկատներից յուրաքանչյուր տարի հասակավոր վորբերը կրճատվում են և անցնում գործ փնտրողների շարքերը։ Գործազուրկների թիվն ավելացնում է նաև խոշոր քանակով աշխատավորության ներգաղթը։

Հիմնարկ ձեռնարկներում զբաղված բանվորական ուժի քանակի աճումը տալիս է հետևյալ պատկերը.

Աղյուսակ № 18

| | Առ 1-ն հոկտեմբերի 1924 թ | Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. | Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. | Աճումը 1924 թ. համեմատութ. |
|---|---|---|---|---|
| Զբաղված բանվորական ուժի քանակը | 17.610 | 32.226 | 39.718 | 225,49 տոկ. |

Գործազրկությունը հաշվետու ժամանակաշրջանում, Լենինականում և Յերևանում, ուր կենտրոնացած է յեղել հաշվառումը, ունեցել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ № 19

| Գործազուրկների թիվը | | | |
|---|---|---|---|
| Տարի | Տղամարդ | Կին | Ընդամենը |
| 1/10—24 թ. | 1.430 | 622 | 2.052 |
| 1/10—25 թ. | 3.302 | 1.702 | 5.004 |
| 1/10—26 թ. | 3.967 | 2.167 | 6.134 |
| 1/10—27 թ. | 5.693 | 2.710 | 8.403 |

Գործազուրկների քանակը վորակային խմբակների վերածած՝ ստանում ենք հետևյալը. 1) Գյուղատնտեսական—426. 2) Արդյունաբերական—2.467,

3) Փոխադրական—253, 4) Տնածառայողներ—1.401, 5) Առանց արհեստի, վոչ վորակյալ 2.788, 6) Վոչ արդյունաբերական—1.063: Արդյունաբերական խմբի մեջ հաշված են նաև նախկին տնայնագործներ, կոշկակարներ, հացթուխներ, արհեստավորներ և այլն ու կիսավորակյալ բանվորներ, բստ վորում, արդյունաբերական վորակյալ բանվորները չնչին տոկոս են կազմում:

Առ 1-ն փետրվարի 1926 թ. Լենինականում և Յերևանում կատարված ուսումնասիրությունը պարզել է, վոր 4.138 գործազուրկներից յեղել են՝ վարձու աշխատանքի ստաժ չունեցող—1.366, կամ ընդհանուրի 33 տոկ., 1-ից մինչև 3 տարվա ստաժ ունեցող—1.551, կամ 37,5 տոկ., 5—7 տարվա ստաժ ունեցող—175, կամ 4,2 տոկ., 7—10 տարվա ստաժ ունեցող—229, կամ 5,5 տոկ., 10—15 տարվա ստաժ ունեցող—141, կամ 3,4 տոկ., 15 տարուց բարձր ստաժ ունեցող—186, կամ 4,5 տոկ., առանց ստաժի—38, կամ 0,9 տոկ.:

Վերոհիշյալ թվական տվյալներից յերևում է, վոր գործազուրկների մեծամասնությունը կազմում են առանց ստաժի, կամ քիչ ստաժ ունեցող, գործազուրկները:

Գործազրկության դեմ պայքարելու նպատակով, կազմակերպվել են հասարակական աշխատանքներ՝ սևագործ բանվորների և մտավոր գործազուրկների ու աշխկոլլեկտիվներ՝ այլ տեսակ գործազուրկների համար:

Յերկու տարվա ընթացքում ծախսված է հասարակական սև աշխատանքների համար—82.293 ռ., (109.843 բանվորական որ), իսկ մտավոր աշխատանքների—11,020 ռ. (9870 բանվորական որ):

Սև աշխատանք կատարողներին տրվել է աշխատավարձ՝ օրական միջին թվով 1 ռ. 5 կ.—1 ռ. 80 կ., իսկ մտավոր գործազուրկների միջին աշխատավարձը հավասար է յեղել 25—30 ռ.—ամսական:

Աշխկոլլեկտիվների և նրանց մեջ զբաղված բանվոր-ծառայողների պատկերը տալիս է հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ № 20

| Կոլլեկտիվ | 1 հոկտեմբերի 1925 թ. | | | 1 հոկտեմբերի 1927 թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Տղամարդ | Կին | Ընդամենը | Տղամարդ | Կին | Ընդամենը |
| 1 Կոշկակարների | 34 | 1 | 35 | 24 | 1 | 25 |
| 2 Կարուձևի | 53 | 41 | 94 | 66 | 71 | 137 |
| 3 Անուշեղենի | 7 | — | 7 | 5 | — | 5 |
| 4 Տուփ պատրաստ. | 3 | 6 | 9 | 9 | 2 | 11 |
| 5 Մետաղագործն. | 18 | — | 18 | 15 | — | 15 |
| 6 Հյուսագործների | 20 | — | 20 | 4 | — | 4 |
| 7 Ելեքտրոմոնտյոր | 13 | — | 13 | 20 | — | 20 |
| 8 Լվացարարների | 4 | — | 11 | 9 | 10 | 11 |
| 9 Հացավաճառների | 22 | — | 22 | 21 | — | 21 |
| 10 Վարսավիրների | 7 | 2 | 9 | 8 | 1 | 9 |
| 11 Կրպակատերերի | — | — | — | 12 | — | 12 |

ԾԱՆՈԹ.—Միջին աշխատավարձը կոլլեկտիվներում հաշվում են 1—38 կ.: Բացի կոլլեկտիվներից և հասարակական աշխատանքներից, աշխատանքային ստաժ ունեցող գործազուրկները ապահովագրվել են և համապատասխան նպաստ են ստացել:

# VIII. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

**Ա. ՈԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՔԱՎՈՐՆԵՐԻՆ**

Սոցիալական ապահովության գծով հաշվառման են յենթարկված 808 զինվորական հաշմանդամ և 2006 կույրեր, խուլ ու համր, վորոնց զգալի մասը, չքավորության պատճառով, կարոտ է նյութական ոժանդակության:

1925/26 տ. պետական և տեղական բյուջեյով ապահովվածների թիվը հավասար է յեղել 208 հոգու: Ապահովվածների միջին թոշակը (հաշվի առնված և տեղական բյուջեներով հատկացված գումարները) հավասար է յեղել 12 ռ.:

Հաշմանդամների տնտեսական դրությունը բարելավելու նպատակով, կազմակերպվել է Հաշմանդամային կոոպերատիվ Միություն, վորը ընդգրկում է 4 զանազան ճյուղերի արտելներ, ուր զբաղված են 46 հաշմանդամ:

Բացի վերոհիշյալ աշխատանքից, ապահովության են յենթարկվել նաև Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձերը: 1925/26 տ. թոշակավորված են 96 հոգի. ամսական թոշակի միջին չափը յեղել է 17 ռ. 60 կ.:

Չքավորացած և միանվագ ոգնության կարիք ունեցող անձանց, 2417 հոգու, պետական և տեղական բյուջեներով տրվել է 16.085 ռ. նպաստ:

Սոցապվարչության կատարողական նախահաշիվը 1925 թ. մարտից—1926 թ. դեկտեմբերը հետևյալ պատկերն է տալիս.

Աղյուսակ № 1

| Ծախսերի անունները | 1924/25 տ. | 1925/26 տ. | 1925/26 տ. հոկտեմբ.—դեկտեմբեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Սոցապի ծախսեր . . | 32.988 | 44.088 | 12.807 | 89.863 |
| Աշխատավորակ . . | 9.784 | 14.734 | 4.133 | 28.651 |
| Զանազան ծախսեր . . | 4.542 | 11.207 | 1.967 | 17.715 |
| Ընդամենը . | 47.314 | 69.949 | 18.967 | 136.299 |

Վարչա-տնտեսական ծախսերի չափը բացատրվում է նրանով, վոր այդ գումարների հաշվին պահպանվում է նաև Փոկերի համար անհրաժեշտ շտատը, ու կատարվում են նրանց կազմակերպչական և տնտեսական ծախսերը:

Բ. ՓՈԿԵՐ Փոխադարձ Ոգնության գյուղական կոմիտեները կազմակերպված են 955 վայրում, վորոնցից գյուղ-փոկեր՝ 908; շրջփոկեր՝ 38 և գավփոկեր՝ 9։ Փոխոգկոմների անդամների ընդհանուր թիվն է 395.538։ Իրենց 6.500 դեսյատին հողային ֆոնդից Փոկերը հերկել և ցանել են 2.529 դես. ու կապալային ձևով մշակել՝ 2.340 դես , ընդամենը — 4.877 դես.։ Բացի այդ, Փոկերի միջոցներով մշակված և ցանված են յեղել չքավոր և թույլ տնտեսությունների — 858 դես., կարմիր բանակայինների՝ 316, հաշմանդամների — 648 և դպրոցական ֆոնդերի — 210. — ընդամենը 2.042 դես. հողամաս։

Փոկերի հասարակական այլ աշխատանքներից պետք է հիշատակել նայեվ այն, վոր նրանց միջոցով կառուցված են 316 վերստ գյուղամիջյա ճանապարհներ և 345 վերստ առու։ Բացի այդ, կառուցվել և վերանորոգվել են դպրոցական շենքեր, խրճիթ-ընթերցարաններ, կարմիր բանակայինների և հաշմանդամների բնակարաններ, կամուրջներ և այլն։

Աշխատանքային ոգնություն է ցույց տրված 17.754 և իրավաբանական ոգնություն՝ 2.400 տնտեսությունների։

Հաշվետու ժամանակաշրջանում Փոկերը ոժանդակել են վարկով 28.500 չքավոր տնտեսությունների, վորոնք կազմում են ընկերությունների մեջ յեղած բոլոր տնտեսությունների (106.981) 27 տոկ.։

Սրա հետ միասին, Փոկերը ոժանդակել են նաև դպրոցական պիտույքներով և այլ ձևերով 1737 վորբի, 1578 չքավոր աշակերտի։

Փոկերի միջոցով 1926 թ. ընթացքում կոոպերացման է յենթարկված 3.673 թույլ տնտեսություն։

Փոկերի նյութական միջոցները կազմել են՝ անդամավճարները, իրենց ձեռնարկությունների յեկամուտները, հողային և լքյալ գույքերից ստացվող միջոցները։

Առ 1-ն հունվարի 1926 թ. Փոկերն ունեցել են հետևյալ հաշվեկշիռը.

| Ա Կ Տ Ի Վ | | Պ Ա Ս Ս Ի Վ | |
|---|---|---|---|
| Մնացորդ առ 1-ն հունվարի 1926 թ. | 264.970—28 | 1. Կոոպերացման | 6.800—60 |
| 1. Անդամավճարներից | 21.561—32 | 2. Ձեռնարկների վրա | 2.382—32 |
| 2. Ձեռնարկներից | 8.202—56 | 3. Նպաստների | 5.831—10 |
| 3. Հողոգտագործումից | 78.603—49 | 4. Շինարար ծախ. | 3.650— |
| 4. Լքյալ կայքերից | 5.861—82 | 5. կուլտ-կրթական | 3.870—60 |
| 5. Պետ. ոժանդակություն | 1.400— - | 6. Ապարատի պահպ. | 7.100— |
| 6. Տրված է վարկ | 39.708—46 | Ընդամենը | 29.634—62 |
| 7. Այլ յեկամուտներ | 2.707—72 | Մնացորդ առ 1/1 | |
| | | 1927 թ. | 393.381—03 |
| | 423.015—65 | Հաշվեկշիռ | 423.015—65 |

Ներկայումս ՓՈԿ-ի նյութական միջոցները (մթերք, գործիք, անասուն և դրամ) դրամի վերածած կազմում են ընդամենը 360.981—03 կ.։ Այդ գու-



մարից հաշվետու տարում տրված է վարկ — 39.708—46 կ. և ձեռք է բերված ինվենտար — 41.026—98 կ., հետևապես, Փոկերի շրջանառության մեջ տրվելիք կանխիկ միջոցներն են ընդամենը 280.245—59 կ., այսինքն, յուրաքանչյուր Գյուղփոկին միջին հաշվով ընկնում է 309 ռ.։

Ինչպես յերևում է վերոհիշյալ հաշվեկշռից, 1925/26 տարում փոխոգկոմները մուտք ունեցել են 118.336—91 կ.։ Այդ գումարից նույն ժամանակամիջոցում տրված է վարկ, փոխարինաբար, 39.708—45 կ., այսինքն, մեկ տարվա յեկամուտի 33,6 տոկոսը, գործադրված է չքավոր ընտանիքների կոոպերացման վրա՝ 6.800 ռ., այսինքն, 5,8 տոկոս, նպաստներ՝ 5.831 ռ. 10 կ., այսինքն, 5 տոկ. և կատարված է ՓՈԿ-ի ապարատի պահպանման ծախս — 7.100 ռ., այսինքն, 6,0 տոկոս։

# IX. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

**Ա. ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Մինչև վերջին տարիները Լուսավորության ասպարեզում ուշադրության հիմնական սեկտորն է յեղել մասսայական կրթության խնդիրը—քաղաքին և գյուղին ապահովել մասսայական դպրոցական հիմնարկներ, դասատուներ և դասագրքեր։ Այս ուղղությամբ տարված աշխատանքների արդյունքը իդեալական համարել չի կարելի, քանի վոր մասսայական դպրոցական հիմնարկներում դպրոցական հասակի յերեխաների 60—70 տոկոսն է ընդգրկվում։

Դպրոցական շենքերի 50 տոկոսը չի համապատասխանում իր կոչմանը և զուրկ է ինվենտարից։ Ուսուցչության մի ստվար մասը դեռ չի կարողանում ըմբռնել նոր դպրոցի հիմնական վոգին։ Գյուղական (վորոշ չափով նաև քաղաքի) աշակերտությունը, չքավորության պատճառով, անհրաժեշտ պիտույքներ չունի։ Մասսայական դպրոցի այս մեծ ու ակնառու բացերը լրացնելու գործը մի շարք տարիների մտահոգության առարկա պիտի լինի։ Միաժամանակ, ընդհանուր կրթության աստիճանական և պլանային իրագործման աշխատանքներն առաջիկա տարիներին մեծ ջանքեր և լուսավորության բյուջեյի խոշոր մասը պիտի խլեն. գյուղացիների և բանվորների լայն շերտերը, նոր միայն հաղորդակից լինելով գիտակից հասարակական—քաղաքական կյանքին, խորհրդային իշխանության շնորհիվ, կուլտուրական մեծ պահանջներ ունեն, վորոնց բավարարումը, քաղլուսհիմնարկների միջոցով, շատ կարևոր գործ է։ Բայց մինչ այժմ այդ գործին հնարավոր չի յեղել այնպիսի միջոցներ տրամադրել, վոր կարելի լիներ, գեթ համեստ չափերով, բավարարել յեղած մեծ կարիքը։ Վերջին տարիների ընթացքում քիչ կանոնավորվող՝ անգրագիտության վերացման և խրճիթ ընթերցարանների աշխատանքների խորացման գործն այժմ ավելի մեծ ուշադրություն և միջոցներ է պահանջում։

Բացի դրանից, Հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության բարձրացման ակտուալ խնդիրները շատ հրամայական են դարձրել պրոֆտեխնիքական կրթության գործը, վորի ասպարեզում մինչ խորհրդայնացումը Հայաստանը վոչինչ չի ունեցել։ Այս հասունացած խնդիրների բավարարմանն արդեն ձեռնարկված է, և հետզհետե ավելի ուժեղ թափով պիտի մասսայականացվի պրոֆտեխնիքական կրթությունը։

Ազգամիջյան սուր կռիվներ ապրած Հայաստանի համար ազգային փոքրամասնությունների կուլտուրական կրթության գործին հատուկ ուշադրություն նվիրելը յեղել է և մնում է կարևորագույն խնդիր և ապագայում նյութական մեծ հատկացումներ է պահանջում։



**Բ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Սոցդաստհիմնարկների ցանցը 1924/25 և 1925/26 ուս. տարիներում հետևյալ պատկերն է ներկայացնում.

Աղյուսակ № 1

| ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԻՊԸ | 1924/25 ու. | | 1925/26 ու. | |
|---|---|---|---|---|
| | Հիմնարկ. | Աշակերտ. | Հիմնարկ. | Աշակերտ. |
| Մանկապարտեզ . . | 12 | 777 | 15 | 1.060 |
| Ա. Աստիճանի . . | 688 | 58.611 | 704 | 62.370 |
| Յոթամյա . . . | 36 | 10.632 | 40 | 12.549 |
| Գյուղյերիտ . . . | — | — | 6 | 225 |
| Բ. Աստիճանի . . | 9 | 1.997 | 8 | 2.196 |
| Կենտ. փորձնական իննամյա դպրոց . | — | — | 1 | 222 |

Այդ ամբողջ ցանցի համար 1924/25 ու. յեղել է 2111 ուսուցիչ, իսկ 25/26 ու.՝ 2216։

Այսպիսով, 1924/25 ուս. տարվա սոցդաստհիմնարկների ընդհանուր թիվն է 745, 25/26 ուս. տարում՝ 768, աճում յեղել է 3,9 տոկոս։

Աշակերտության թիվը 1924/25 ուս. տարում՝ 72.017. 25/26 ուս. տարում՝ 78.622. աճում յեղել է 9,2 տոկոս., ուսուցչությունն աճել է 5 տոկոսով։

Այս 1926/27 ուս. տարում սոցդաստհիմնարկների թիվն է 786, աշակերտության թիվը՝ 82.276, բայց, տարվա դպրոցական վիճակագրությունը դեռ ավարտված չլինելու պատճառով, այս թվերը վերջնական չեն։

Բացի սրանից, Ամերկոմը յուր միջոցներով պահում է մանկապարտեզ 3, Ա. աստ.՝ 8 դպրոց—3701 աշակերտով, յոթամյա՝ 6—1920 աշակերտով և Բ. աստ.՝ 1—370 աշակերտով, վորոնց իդեական ղեկավարությունը Լուսժողկոմատին է վերապահված։

1925/26 ուս. տարում առաջին անգամ կազմակերպվեցին գյուղական յերիտասարդության դպրոցներ, վորոնք, աստիճանաբար ուժեղանալով, սկսում են բազմանալ և գյուղատնտեսական ու կոոպերատիվ թեքում ընդունել։ Գյուղական, յոթնամյա դպրոցներն աստիճանաբար պետք է վերածվեն գյուղյերիտ դպրոցների, վորովհետև միայն վերջիններս կարող են իրենց ծրագրով բավարարել գյուղի շինարարության, կուլտ-կրթական և տնտեսական պահանջները։ Գոյություն ունեցող յոթնամյա դպրոցներից 1926/27., ու. արդեն 18-ը վեր են ածված գյուղյերիտ դպրոցների, վորտեղ սովորում են 1093 աշակերտ։ Այս ուս. տարում գավառական կենտրոնների դպրոցներից 75-ը վերածվեցին, այսպես կոչված, բազային դպրոցների, վորոնք, հետզհետե ուժեղանալով, պետք է ցուցադրական դառնան, շրջանի մյուս դպրոցների համար։

1926 թ. սկզբից սկսվեցին աշխատանքներ ընդհանուր պարտադիր ուսման վերաբերյալ, վորը իրագործելու համար ծրագիր է մշակված։

1925 թ. ամառը յեղել են Վերապատրաստության կենտրոնական դասընթացներ լուսհրահանգիչների համար, Յերևանում, մեկ ամիս տևողությամբ, վորին մասնակցել են գավլուսբաժինների կողմից գործուղված 32 լուսհրահանգիչ և վորակյալ ուսուցիչներ, իսկ Լենինականում դասընթացներ են յեղել գյուղերի և յոթնամյա դպրոցների ուսուցիչների, մանկապարտեզների ղեկավարների և թուրք ուսուցիչների համար։ Բացի դրանից, գավառական կենտրոններում բացվել են միամյա դասընթացներ, գավառի ուսուցիչների համար։

1926 թ. ամռանը, մայիսի 25-ից մինչև հուլիսի 3-ը, Յերևանում բացվել են ուսուցչական վերապատրաստության դասընթացներ՝ գյուղերի և յոթամյա դպրոցների ուսուցիչների համար. այդ դասընթացներն ունեցել են յերեք ցիկլ—հասարակագիտական, տեխնիքական և կենսաբանական։ Սովորողների թիվը յեղել է 92։ Գավառներում նույնպես յեղել են միացյալ վերապատրաստության դասընթացներ։ Ընդամենը, կենտրոնական և գավառական դասընթացներում սովորել են 459 ուսուցիչ։ 1925/26 ուսման տարում յեղել են միամյա դասընթացներ՝ թուրք ուսուցիչների համար։ Սովորել են 20 կուրսանտ, վորոնք արդեն աշխատում են գյուղդպրոցներում։ Հույն, ռուս և ասորի ուսուցիչների համար Նիկիտինո գյուղում տեղի յե ունեցել ուսուցչական կոնֆերանս, յերկու շաբաթ տևողությամբ։

Գավլուսբաժիններին կից կազմակերպված են մանուկների հանցագործություններ ուսումնասիրող և նրանց դեմ պայքարող հանձնաժողովներ։ Յերևանում գոյություն ունի դեֆեկտիվ ու հանցագործ յերեխաների մի գաղութ՝ 75 հոգու համար։

Լուսժողկոմատին յենթակա 14 մանկատներում տեղավորված են 1097 յերեխա։ Բացի դրանից, գավգործկոմների խնամքի տակ գտնվում է յերկու մանկատուն. Կ. Գ. Կ.—1, Անգլկոմի—1, Ամերկոմի—13 և Կարմիր Խաչի—1, ընդամենը՝ 30 մանկատուն, 9639 սաներով։

Այս ուսումնական տարվա սկզբին Աշտարակի մանկատներն ու Յերևանի մանկատների մի մասը տեղափոխվեցին Ստեփանավան, այնպես վոր ներկայումս պետական մանկատները գտնվում են միայն յերկու վայրում՝ Յերևանում՝ 317 սանով և Ստեփանավանում՝ 1042։

Սաների առողջապահական դրությունը կարելի յե բավարար համարել. սնունդը՝ նույնպես։ Յուրաքանչյուրի համար նորմա սահմանվում է 8—10 ռուբլի։

**Գ. ԱՐՀԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

1924/25, 1925/26 և 1926/27 ուսման տարիներում Արհլուսավորության ցանցը հետևյալն եյեղել.

| | | |
|---|---|---|
| 1. | Համալսարան . . . . . . . | 1 (Յերևան) |
| 2. | Կոնսերվատորիա . . . . . | 1 (Յերևան) |
| 3. | Գյուղատնտեսական տեխնիկում . | 2 (Յերևան և Լենինական) |
| 4. | Ինդուստրիալ » | 2 (Յերևան և Լենինական) |
| 5. | Գյուղատնտեսական տեխնիկում . | 1 (Յերևան) |
| 6. | Մանկավարժական տեխ. հայկական | 4 (Յերևան, Լենինական, Վաղարշապատ, Ստեփանավան) |
| 7. | » » թուրքական | 1 |
| 8. | Կոոպերատիվ տեխնիկում . . . | 1 (Յերևան) |
| 9. | Բանֆակ . . . . . . . | 2 (Յերևան և Լենինական) |
| 10. | Գյուղատնտեսական ստորին տիպի դպրոց . . . . . . . | 10 |



Բացի այս դպրոցներից, գոյություն ունեն նաև մասնավոր անձանց կամ հիմնարկությունների ու հասարակական կազմակերպությունների կողմից բացված, Արհլուսվարչության հսկողության ու ղեկավարության տակ գտնվող, հետևյալ պրոֆդպրոցներն ու կուրսերը.

| | | |
|---|---|---|
| 1. | Հաշվապահական (մասնավոր) կուրսեր | 2 |
| 2. | Մեքենագրական » » | 1 |
| 3. | » Խորատ. Միութ. » | 1 |
| 4. | Ավտոկուրսեր . . . . . | 1 |
| 5. | Կալաչափների (Հողժողկոմատի) . . | 1 |
| 6 | Տրակտորիստների » . . | 1 |
| 7. | Յերևանի խորեոգրաֆիկ ստուդիա . | 1 |

Գործում են նաև մի շարք կարճատև դասընթացներ ու դպրոցներ Հայաստանի զանազան վայրերում, վորոնց ստույգ հաշվառումը դեռ չի կատարված։

Ստորին տիպի 90 գյուղատնտեսական դպրոցները գտնվում են՝ Ղուրդուղուլիում, Ոշականում, Ղամարլվում, Դիլիջանում, Ղարաքիլիսայում, Ստեփանավանում, Նոր-Բայազետում, Քեշիշքենդում և Գորիսում։

Դպրոցներին թեքում է տրված համապատասխան այն անտեսական գոտու, վորտեղ գտնվում է նրանցից յուրաքանչյուրը։

Գյուղատնտեսական տեխնիկումները գտնվում են Յերևանում և Լենինականում։

Արհլուսվարի հիմնարկների ցանցում ուսանում են.

| | | |
|---|---|---|
| 1. | Համալսարանում . . . . . . . | 1.186 հոգի |
| 2. | Կոնսերվատորիայում . . . . . . | 290 » |
| 3. | Մանկավարժական Տեխնիկումում . . | 569 » |
| 4. | Ինդուստրիալ Տեխնիկումում . . . | 429 » |
| 5. | Գյուղատնտեսական . . . . . | 100 » |
| 6. | Գյուղատնտեսական ստորին տիպի դըպրոցներում . . . . . . . . . . | 753 » |
| 7. | Բանֆակներում . . . . . . . . | 604 » |

Մյուս դպրոցներում և կուրսերում սովորողների ստույգ հաշվառումը դեռ չի կատարվել։

Համալսարանն ունի 5 ֆակուլտետ՝ գյուղատնտեսական—237 ուսանող, տեխնոլոգիական—205 ուսանող, բժշկական—240 ուսանող, մանկավարժա-

կան—337 ուսանող և սոցիալ-տնտեսական—167։

Այս ուսման տարվա սկզբում համալսարանի հասարակագիտական ֆակուլտետը վերածված է մանկավարժականի և սոցիալ-տնտեսականի։

Համալսարանի վերաբերյալ հերթական անելիքներն են՝ գյուղֆակի տնտեսության խնդրի լուծումը և բժշկական ու տեխնոլոգիական ֆակուլտետների անհրաժեշտ շենքերի կառուցումը։

Բանվորական կրթության ասպարեզում Արհլուսգլխվարչության հերթական խնդիրն է՝ Լենինականի տեքստիլ գործարանի և Ալլավերդու ու Ղափանի հանքերին կից գործառ (ֆաբզավուչ) կազմակերպելը։

Դ. ՔԱՂԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական լուսավորության ասպարեզում հետևյալ աշխատանքներն են տարված.— դպրոցների համար ծրագրեր են կազմվել, կանոնադրություններ են մշակվել վարչության և քաղլուսհիմնարկների համար, հրատարակվել են՝ պիեսներ, ժողովածուներ, դասագրքեր և այլն։

Քաղլուսհիմնարկների ցանցը հետևյալն է.

| | | | |
|---|---|---|---|
| 1. Լիկկայաններ | 476 | սովորող | 15.791 |
| 2. Կիսագրագետների խմբ. | 46 | » | 1.385 |
| 3. Նախագլն. լիկկայան | 59 | » | 1.648 |
| 4. Բարձր տիպի դպ. | 4 | » | 890 |
| 5. Կուս. դպրոցներ | 4 | » | 173 |
| 6. Քաղ. դպրոցներ | 33 | » | 843 |
| 7. Շրջիկ դպրոցներ | 80 | » | 2.241 |
| 8. Խրճիթ ընթերցարան | 328 | (40 օրինակելի) | |
| 9. Գրադարան | 207 | | |
| 10. Ակումբ | 37 | | |
| 11. Թատրոն | 13 | | |
| 12. Կինո | 16 | | |

Ե. ԳԻՏԱԿԱՆ-ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆՑԸ

Հաշվետու ժամանակաշրջանում գործել են հետևյալ գիտական-արվեստական հիմնարկությունները.

Պետական Հանրային՝ Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանն ունի մոտ 160.000 գիրք, որից հայերեն՝ 30.000, ռուսերեն՝ 120.000 և օտար լեզուների՝ 10.000։ Գրադարանին կից աշխատում է ընթերցարանը, որի հաճախորդների թիվը հասնում է օրական 500-ի։ Բացված են ընկ. ընկ. Լենինի և Մյասնիկյանի անվան առանձնասենյակներ։ Վերջինում տեղավորված է ընկ. Մյասնիկյանի 8.000 կտորից բաղկացած գրադարանը։ Ստացված է Լազարյան ճեմարանի գրադարանի մի մասը։

Գրապալատը ժամանակագրական կարգով պահում է բոլոր լույս տեսնող գրքերի, բրոշյուրների և պարբերական հրատարակությունների ցանկը. լույս է ընծայել 1924/25 թ. հրատարակությունների ցուցակը։



Գիտության յեվ Արվեստի Ինստիտուտն ունի բնապատմական և մաթեմատիքական, հասարակագիտական-պատմական և գեղարվեստական բաժիններ։ Մի շարք արշավախմբերի միջոցով ինստիտուտը կատարել է ազգագրական, հելմինտոլոգիական, ժողովրդական յերգերի և բուսաբանական հետազոտություններ, Հայաստանի զանազան վայրերում։

Էջմիածնի մատենադարանն ունի հարուստ ձեռագրատուն՝ մոտ 2.000 հայկական հնագույն ձեռագրերով։

Էջմիածնի թանգարանը բաղկացած է՝ հնագիտական, ազգագրական և գեղարվեստական բաժիններից։

Հնությունների պահպանության Կոմիտեն նույնպես արշավախմբերի միջոցով ուսումնասիրություններ է կատարել. Սևանա լճի ափերին հայտնաբերված են մի քանի հարյուր հնագույն հուշարձաններ, մեծ գիտական նշանակություն ունեցող հին շենքեր, նախապատմական մարդու կյանքին վերաբերող հարուստ նյութեր, նախապատմական մարդու բնակության կայաններ և նույնիսկ ամբողջովին անվնաս մնացած նախապատմական շրջանի բնակարաններ։

Յերևանի Պետական Թանգարանն ունի 6 բաժին, Գեղարվեստական պատկերասրահով,— հեղափոխական, հնագիտական, պատմագրական, տնայնագործական և ռազմական։ Վերջին տարիներս թանգարանը բավականաչափ հարստացել է գիտական, հեղափոխական և հնագիտական արժեք ունեցող զանազան իրերով։

Մանկավարժական թանգարանն ունի ֆիզիքական, քիմիական, բնախոսական, հասարակագիտական, հանքաբանական և աշխարհագրական բաժիններ։ Թանգարանին կից գոյություն ունի ինքնաշեն գործիքների ցուցադրական արհեստանոց. այնտեղ պատրաստված գործիքներն ու անոթները հետ չեն մնում գործարանային գործիքներից ու անոթներից և համեմատաբար ավելի աժան գներով են բաց թողնվում հիմնարկներին։ Թանգարանին կից կազմակերպված է ուսման պիտույքների բազա, դպրոցներին մատակարարելու համար։

Կենտրոնական գավառագիտական բյուրոն կազմակերպվել է 1925 թ. հոկտեմբերին։ Այժմ կազմակերպվում են ճյուղեր գավկենտրոններում. մշակված է եքսկուրսիաների մարշրուտ Հայաստանի սահմաններում։

Պետական Ակադեմիական Թատրոնը յուր գործունեությամբ խոշոր նվաճումներ է արել հայկական բեմական արվեստի զարգացման գործում։

Զ. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

Հատուկ ուշադրություն է դարձված ազգային փոքրամասնությունների լուս-կրթական գործի վրա։ Վերջին տարիներում հաջողվել է որոշ չափով լայնացնել ազգային փոքրամասնությունների լուսհիմնարկների ցանցը, հաղթահարելով այդ ասպարեզում յեղած մի շարք խոչընդոտներ, ինչպես, օրինակ, դասագրքերի, շենքերի և պատրաստված ուսուցիչների բացակայությունը և այլն։

Մայրենի լեզվի դասագրքերի պակասությունը մեծ չափով զգացվում է պարապմունքներին: Բոլոր առաջին խմբերում և լիկկայաններում պարտադիր կերպով գործադրվում է թուրքական նոր այբուբենը:

Միջոցներ են ձեռք առնված ասորական դասագիրք կազմելու: Մշակված է և ուղարկվում է Միութենական Գիտության Ճեմարանին քրդական այբուբեն կազմելու նախագիծը:

1925 թ. նոյեմբերին Երևանում բացված է թուրքական Մանկավարժական Տեխնիկում, ինտերնատով, 50 սովորողների համար: 1925/26 ուսում. տարում Տեխնիկումին կից կազմակերպվել են միմիայն ուսուցչական դասընթացներ, որոնք 20 շրջանավարտ ուսուցիչներ են տվել:

Դպրոցական ցանց

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ա. աստիճանի դպրոց — | | | | | | |
| Թուրքական | » | 116 | աշակերտ | 3.994 | ուսուցիչ | 216 |
| Ռուսական | » | 27 | » | 2.513 | » | 77 |
| Եզդիների | » | 10 | » | 316 | » | 11 |
| Ասորական | » | 4 | » | 217 | » | 6 |
| Հունական | » | 4 | » | 354 | » | 9 |
| Բ. աստ. ռուսակ. | » | 1 | » | 134 | » | 14 |
| Ընդամենը | » | 162 | » | 7.522 | » | 333 |

Երևանի բանֆակին և բարձր տիպի դպրոցին կից յերկուական թուրքական խմբեր կան:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Լուսհիմնարկների տնտեսական-ուսումնական ծախսերը գավգործկոմները և շրջգործկոմներն են հոգում տեղական միջոցներից: Դպրոցներն ունեն նաև իրենց հատուկ միջոցները, որոնք գլխավորապես հողամասերից և թոշակներից են գոյանում:

Թոշակները գանձվում են միայն քաղաքների և մի քանի քաղաքատիպ վայրերի ունևոր աշակերտներից:

Դպրոցների 80—85 տոկոսը բավարարված է 3—5 դեսյատին հողամասերով: Հողամաս չունեն այն գյուղերի դպրոցները, ուր մինչև այժմ հողաբաժանությունը դեռ չի ավարտվել:

Դպրոցների կահավորությունը միանգամայն անբավարար վիճակի մեջ է: Նրանց խոշորագույն մասը կարիք է զգում աշակերտական սեղան-նստարանների, գրատախտակների, պահարանների, աթոռների և այլն:

Դպրոցական շենքերը նույնպես անմխիթար դրության մեջ են՝ 671 դպրոցական շենք կա, որից 372-ը՝ սեփական: Սրանց մեծ մասը անհարմար է պարապմունքների համար: Հաճախ միևնույն շենքում տեղի յեն ունենում 2—3 նվագ պարապմունք, մանավանդ քաղաքներում:

Ը. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Պետհրատն ունի 36.000 ռ. հիմնական դրամագլուխ, 4 տպարան և 14 բաժանմունք՝ Հայաստանի գավառներում և հարևան հանրապետություններում: Յուր ուշադրության մեծ մասը



նա նվիրում է դասագրքերին: Մանկական և մասսայական գրականության մեծ կարիքը, նրա ձեռք առած միջոցներով հազիվ 50 տոկոսով է բավարարվում:

1926 թ. ընթացքում Պետհրատը լույս է ընծայել՝

Աղյուսակ № 2

| №№ | ՍԵՐԻԱ | Անուն | Տպագր. թերթ | Տիրաժ | Հանածո | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Դասագրքեր . . . | 32 | 550 1/4 | 568.500 | 7.382.500 | 642.250 |
| 2. | Քաղ. գրականություն | 35 | 315 | 128.000 | 1.937.900 | |
| 3. | Գրական գեղարվեստակ. | 21 | 230 | 55.200 | 733.200 | 56.285 |
| 4. | Լ. Կ. Յե. Մ. գրադարան | 26 | 131 1/4 | 102.000 | 39.700 | 40.050 |
| 5. | Մանկական և Մանկավ. | 21 | 53 | 77.000 | 212.000 | 18.400 |
| 6. | Լենինյան գրադ. . . | 10 | 177 1/2 | 52.000 | 414.000 | 26.600 |
| 7. | Բանվորա-գյուղացիակ. | 5 | 10 1/2 | 18.000 | 43.000 | 4.050 |
| 8. | Գիտական . . . . | 9 | 51 | 36.000 | 212.000 | 19.150 |
| 9. | Այլ տեսակի . . . | 3 | 48 | 51.000 | 181.500 | 4.000 |
| | Ընդամենը . . . | 162 | 1566 1/2 | 1.087.700 | 11.155.800 | 810.785 |

# X. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

**Ա. ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Առողջապահական մարմինների աշխատանքներն 1925/26 տ. ընթացել են, ինչպես և առաջ, յերկու գլխավոր ուղղությամբ՝ բուժական և սանիտարա—պրոֆիլակտիկ։

Բուժական աշխատանքները նպատակ են ունեցել աշխատավորությանը տրվող բուժական օգնությունն ավելի ևս խորացնելու ու ընդլայնելու, այդ օգնության վորակը բարձրացնելու, բարելավելու դեղերի մատակարարման գործը, լայնացնելու բուժական հիմնարկությունների ցանցը և անհրաժեշտ բժշկական պերսոնալ պատրաստելու ու վորակավորելու։

Սան—պրոֆիլակտիկ աշխատանքների նպատակն է՝ սոցիալական և եպիդեմիկ զանազան հիվանդությունների դեմ պայքարելը, ազգաբնակության սանիտարական դրության հետազոտությունը և նրա՝ աշխատանքի ու կյանքի առողջապահական տեսակետից վնասակար պայմանների վերացումը, քաղաքների ու գյուղերի սանիտարական դրության վրա հսկողություն կազմակերպելը, սան—լուսավորության տարածումը աշխատավորության լայն խավերում, վերջիններիս մասնակից դարձնելով առողջապահության գործին, մայրերի և մանուկների առողջության պահպանության հարցերը և այլն։

Բացի այդ, վերջին յերկու տարիների ընթացքում ձեռնարկվել է նաև մի նոր աշխատանք՝ կուրորտային շինարարություն, նպատակ ունենալով օգտագործելու յերկրի բնական հարստությունները, կլիմայական կայանների և հանքային ջրերի տեսակետից և հնարավորություն ստեղծելու տեղում՝ աշխատավորության կուրորտային, կլիմայական բուժօգնություն ստանալու հետզհետե աճող պահանջները բավարարելու։

**Բ. ԲԺՇԿԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ**

Բժշկա-սանիտարական ցանցը հաշվետու տարիների ընթացքում զգալի աճել է։

Ցանցի ընդարձակումը նկատելի յե համարյա բոլոր տեսակի հիմնարկությունների վերաբերյալ։Միաժամանակ պակասել է գյուղերի բուժակայանների թիվը (1925 թ.—12, 1926 թ.—6), այդ յերևույթը դրական նշանակություն ունի, քանի վոր բուժակայանները փոխարինվել են բժշկակայաններով (1925 թ.—29, 1926 թ.—38), վորտեղ ավելի մասնագիտական և վորակյալ բժշկական օգնություն է ցույց տրվում։

Աճել է և բժշկա-սանիտարական պերսոնալի թիվը թե գյուղերում և թե քաղաքներում։ Սակայն, վորակյալ ազատ աշխատակիցների (բժիշկներ, մանկաբարձուհիներ և այլն) սակավության պատճառով, դեռ հնարավոր չի յեղել լրիվ կերպով բավարարել գյուղերի բուժօգնության պահանջը։



Այդ խնդրի լուծումը զգալիորեն կը դյուրանա, յերբ Յերևանի համալսարանը պատրաստի բժիշկներ կտա, և յերբ լիովին կը կիրառվի Ժողկոմխորհի վորոշումը՝ շրջաններում աշխատող պերսոնալի արտոնությունների վերաբերյալ։

1925/26 տ. բժշկա—սանիտարական հիմնարկների և պերսոնալի թիվը յեղել է հետևյալը.

**Բուժական հիմնարկներ**

Աղյուսակ № 1

| Թ ի վ | Հիվանդանոց | Սանատորիաներ | Տրոպկայաններ | Վեն. դիսպանսեր | Մանկ. կոնսուլտաց. | Դեղատներ ինքնամատ. | Բժշկակայաններ | Բուժակայաններ | Բուժարան ինքնուրույն և հիվանդ. | Լաբորատորիա ինքնուրույն և հիվանդան. | Ռենտգենյան կաբինետ | Ֆիզիկոթերապեվտիկ կաբինետ | Մանկատնային | Ատամի կաբինետ | Մահճակալների թիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1925 | 22 | 2 | 8 | 1 | 6 | 12 | 29 | 4 | 12 | 19 | 1 | 1 | — | 8 | 960 |
| 1926 | 26 | 2 | 10 | 1 | 7 | 17 | 38 | 6 | 22 | 25 | 1 | 1 | 1 | 11 | 1.068 |
| **Դրանցից 1926 թ. քաղաքներում յեվ գյուղերում** | | | | | | | | | | | | | | | |
| Քաղաք. | 16 | 1 | 3 | 1 | 6 | 11 | 1 | — | 16 | 18 | 1 | 1 | — | 8 | 798 |
| Գյուղական վ. | 10 | 1 | 7 | — | 1 | 6 | 37 | 6 | 6 | 7 | — | — | 1 | 3 | 270 |

**Բժշկա—սանիտարական պերսոնալ**

Աղյուսակ № 2

| Թ ի վ | | Բժիշկներ | Ատամնաբուժներ և տեխնիկներ | Մանկաբարձներ | Դեղագործներ | Միջին պերսոնալ | Այլ աշխատակիցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1925 | 146 | 12 | 53 | 23 | 164 | 507 | 905 |
| | 1926 | 210 | 23 | 70 | 56 | 250 | 708 | 1.317 |
| **Դրանցից քաղաքներում յեվ գյուղերում** | | | | | | | | |
| Քաղաքներում | 1925 | 102 | 10 | 31 | 19 | 107 | 424 | 693 |
| | 1926 | 152 | 20 | 38 | 46 | 149 | 522 | 927 |
| Գյուղերում | 1925 | 44 | 2 | 22 | 4 | 57 | 83 | 212 |
| | 1926 | 58 | 3 | 32 | 10 | 101 | 186 | 390 |

Հաշվետու տարիների ընթացքում ավելանում է՝ զանազան հիվանդություններով թե առաջին անգամ դիմողների և թե հաճախողների թիվը:

Առաջին թվի, այսինքն՝ դիմողների, աճումը պետք է վերագրել վոչ թե հիվանդությունների աճման, այլ այն հանգամանքին, վոր ընդարձակվել է բժշկա-սանիտարական ցանցը, և աճել բժշկական պերսոնալի թիվը, յեվ, այսպիսով, լայն խավերը հնարավորություն են ստացել դիմելու բժշկական ոգնության:

Այստեղ նշանակալից է նաև այն, վոր համեմատած 1925 թ. հետ, 1926 թվին գյուղական վայրերում ցույց տված ոգնությունն ավելի մեծ չափով է աճել. 1926 թ. դիմումների ընդհանուր թվից գյուղերին 60 տոկոս է ընկնում, իսկ հաճախումներից՝ 41,1 տոկոս. 1926 թվին, համապատասխան թվերը հավասար են 61,4 տոկոսի և 51,0 տոկոսի:

Իհարկե, այդ դեռ բավական չէ, և գյուղական վայրերի ոգնությունը հետագայում ավելի ևս պետք է լայնացնել:

Բուժոգնության գործի բարելավման նշաններից մեկն էլ ստացիոնար հիվանդների մահացության տոկոսի իջեցումն է, վորը 1925 թ. հավասար էր 4,1 տոկոսի, իսկ 1926 թ.—3,5 տոկոսի:

1925/26 տ. հիվանդությունների շարժումը տալիս է հետևյալ պատկերը.

Աղյուսակ № 3.

| | Թիվ | Դիմողների թիվը | Այցելումներ | 1000 բնակչի վրա դիմող | Այցելություններ 1 դիմողի վրա | Հիվանդանոց. ընդ. թիվը | Հիվանդանոց. մահացութ. տոկ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1925 | 470 019 | 1.310.369 | 508,1 | 2,7 | 13·985 | 4,1 |
| Քաղաքում . . . . . . | | 187 996 | 704.983 | 1·220 | 3,1 | 11·137 | 4,0 |
| Տոկ. ընդ. թվից . . . . | | 40,0 | 54,0 | | | 79,6 | |
| Գյուղ. վայր. . . . . . | | 282·023 | 605 386 | 365 | 2,1 | 2·848 | 4,3 |
| Տոկ. ընդհ. թվից . . . | | 60,0 | 46,1 | | | 20,4 | |
| Ընդամենը . . . . | 1926 | 611.349 | 1.649.626 | 672 | 2,7 | 17.882 | 3,5 |
| Քաղաքում . . . . . . | | 234.843 | 801·318 | 1·524 | 3,3 | 13·528 | 3,6 |
| Տոկ. ընդ. թվից . . . . | | 38,5 | 49,0 | | | 75,9 | |
| Գյուղ. վայր. . . . . . | | 376 506 | 848·308 | 485 | 2,2 | 4·354 | 2,9 |
| Տոկ. ընդ. թվից . . . . | | 61,4 | 51,0 | | | 24,2 | |

Ապահովագրվածների բուժոգնության գործը զգալի լայնացել է, կանոնավորվել և վորակավորվել է ապահովագրվածներին և նրանց ընտանիքի անդամներին տրվող բուժոգնությունը: Հետևյալ № 4 աղյուսակը ցույց է տալիս ապահովագրվածներին ու նրանց ընտանիքների անդամներին տրված բուժոգնության չափը.



**Ապահովագրվածների ու նրանց ընտանիքների բուժոգնության չափը.**

Աղյուսակ № 4.

| Թիվ | Ամբուլատորական տներում | | | | Միջին այցելություն 1 դիմողի վրա | Ստացիոնար | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Դիմողների թիվը | Այցելությունների թիվը | Դիմողների թիվը | Այցելությունների թիվը | | Հիվանդանոց ընդունվածների թիվը | Հիվանդանոց ընդունված. մահացութ. տոկ. |
| 1925 | 89·576 | 309·048 | 12·213 | 21·324 | 3,2 | 5·254 | 1,8 |
| 1926 | 141·652 | 489.173 | 25·582 | 42·936 | 3,2 | 8,223 | 2 |

Ապահովագրվածների բուժոգնության հետ է կապված գլխավորապես սանատորա-կուրորտային ոգնության հարցը: Դիլիջանի և Արզնու սանատորիաները կարգավորելուց հետո, ավելացել է՝ սանատորիաները բուժվելու համար ուղարկված ապահովագրվածների թիվը, վորը 1924/25 տ. հավասար էր 580-ի, իսկ 1925/26 տ.—610-ի:

Սոցիալական հիվանդությունների ուղղությամբ նոր է հնարավորություն ստեղծվել յերկրում բավականաչափ տարածված վեներական հիվանդությունների և պալարախտի դեմ պայքարելու համար:

Մինչև հիմա Հայաստանում գոյություն ունի միայն մեկ վեներական դիսպանսեր (Յերևանում), Լենինականի և Լոռու-Փամբակի գավառները, վորոնք վեներական ախտերի տեսակետից ամենավարակված վայրերն են, հատուկ դիսպանսերներ դեռ չունեն:

Դրությունն ավելի վատ է պալարախտի տեսակետից:

Պալարախտավորների և պալարախտին տրամադիրների թիվը խիստ մեծ
է և տարեց-տարի ավելի աճում է (այդ հանգամանքը բացատրվում է նաև
նրանով, վոր, ցանցի լայնացնելու և ոգնության վորակի բարձրացման հետևանքով, յերկրում յեղած հիվանդներն ավելի շատ են հայտնաբերվում)
և, օրինակ, աշակերտների բժշկական քննությունը ցույց է տալիս, վոր
նրանց մեջ հիվանդների և տրամադիրների տոկոսը 25–30-ի յէ հասնում:

Անհրաժեշտ է ավելի կտրուկ միջոցներ ձեռք առնել և յերկրի մի քանի խիստ վարակված վայրերում պալարախտային հատուկ դիսպանսեր կազմակերպել:

Վեներական հիվանդությունների, պալարախտի ու ավելի տարածված վարակիչ հիվանդությունների շարժման պատկերը հետևյալ աղյուսակն է տալիս.

Աղյուսակ № 5

| Թիվ | Կանիճ | | [illegible] | | Սիֆիլիս 1,2 | | Տրախոմա | | Մալարիա | | Քոս | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | 1000 բնակ. | Ընդամենը | 1000 բնակ. | Ընդամենը | 1000 բնակ. | Ընդամենը | 1000 բնակ | Ընդամենը | 1000 բնակ. | Ընդամենը | 1000 բնակ. |
| 1925 | 4.636 | 5,1 | 5.107 | 5,6 | 2.701 | 2,9 | 11.664 | 12,8 | 80.271 | 88,0 | 12.473 | 13,8 |
| 1926 | 7.359 | 7,6 | 7.422 | 8,0 | 1.970 | 2,1 | 13.131 | 14,0 | 83.592 | 92,0 | 15.362 | 16,6 |

Վարակիչ հիվանդությունների շարքում մալարիան առաջին տեղն է բռնում: Շնորհիվ տնտեսական պայմանների բարելավման և ձեռք առած հատուկ միջոցների, այն ե՝ տրոպկայանների թվի ավելացման, չալթուկե ցանքսերի արգելման, ճահիճների չորացման, առուների վերանորոգման և այլն, մալարիան Հայաստանում նվազման տենդենց է ցուցաբերում:

Սակայն, այդ միայն ժամանակավոր բնույթ կարող է ունենալ, ուստի անհրաժեշտ է ապագայում պայքարը մալարիայի դեմ ավելի յևս ուժեղացնել, տրոպկայանների ցանցը լայնացնել և այլն:

Մալարիայի շարժումը 1925/26 տ. ընթացքում յերևում է հետևյալ աղյուսակից:

Աղյուսակ № 6.

| Թիվ | Ամբուլատորիա | | | | | Ստացիոնար | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Դիմումների թիվը | Այցելումների թիվը | Մալ. դիմող. տոկ. բոլոր հիվանդ. դիմող. թվի նկատ. | 1000 բնակ. վրա ընկ. դիմող | Այցելումների թիվը մալ. 1 դիմ. | Հիվանդանոց ընդ. թիվը | Հիվանդ. ընդուն. մահացության տոկոսը |
| 1925 | 80.271 | 292.641 | 17,1 | 88 | 3,6 | 2.175 | 1,6 |
| 1926 | 83.592 | 334.990 | 13,6 | 92 | 4,0 | 2.373 | 1,0 |

Անհրաժեշտ է շեշտել, վոր տրոպիքական կայանները, վորոնց կազմակերպելու հարցում մեծ մասնակցություն է ունեցել և Կարմիր Խաչը (Նրա միջոցներով են պահվում Էջմիածնի, Արփայի և Մեղրու տրոպ-կայանները) հանդիսանում են վոչ միայն բուժական հիմնարկություններ, այլ և տանում են լայն մասսայական սանիտարա-պրոֆիլակտիկ, սան-լուս. աշխատանքներ, կիրառելով այդպիսով կյանքում խորհրդային առողջապահության ամենագլխավոր պահանջներից մեկը: Այսպես, յերկու տարվա ընթացքում, տրոպկայանները կազմակերպել են 2516 դասախոսություն, վորոնց հաճախել են 144. 293 ունկնդիր:

Մյուս վարակիչ հիվանդություններից ուշադրություն է գրավում կանճը, վորի հայտնաբերած դեպքերը տարեց-տարի ավելանում են: Դրա գլխավոր պատճառը աշխատավորության նիստ ու կացի հակասանիտարական պայմաններն են, խմելու լավորակ ջրի (մանավանդ դաշտավայրերում գտնվող գյուղերում) բացակայությունը և այլն:

Կանճի դեմ պայքարելու հարցը հետզհետե ավելի լուրջ խնդիր է դառնում առողջապահական մարմինների համար, և այդ խնդիրը կարելի կը լինի աստիճանաբար լուծել՝ բնակավայրի սանիտարական դրության բարձրացման զուգընթաց:

Ազգաբնակության մեջ լայն չափով տարածված է (նամանավանդ գյուղերում) նաև աչքի տրախոմա հիվանդությունը, վորը հաճախ պատճառ է դառնում կուրության: Մինչև այժմս նման հիվանդներին հնարավոր է յեղել վորակյալ մասնագիտական ոգնություն ցույց տալ միայն մի քանի



քաղաքներում, վորտեղ մասնագետ ակնաբույժներ կային: Իսկ գյուղական վայրերում այդ ոգնությունը տրվել է ընդհանուր բուժհիմնարկների (բուժակայանների և այլն) կողմից, և միայն ամառները Կարմիր Խաչը հատուկ բժշկական թռուցիկ խումբ է կազմակերպել այս կամ այն շրջանում աշխատելու համար:

Տրախոմայի դեմ կռվելու համար, անհրաժեշտ է շրջաններում համապատասխան թռուցիկ խմբեր կազմակերպել ակնաբույժների ղեկավարությամբ, վորոնք հիվանդներին մասնագիտական տերապեվտիկ և վիրաբուժական ոգնություն կարողանան ցույց տալ:

Ինչ վերաբերում է յերեխաների սուր-վարակիչ հիվանդություններին, այդ տեսակետից, Հայաստանը համեմատաբար ավելի բարենպաստ դրության մեջ է յեղել: 1925 թ. տարածված եր կարմրուկ հիվանդությունը, վորը, սակայն, ընդհանուր առմամբ թեթև եր անցնում, իսկ 26 թ. մի քանի գավառներում և, գլխավորապես, Յերևան քաղաքում տարածվեց քութեշ հիվանդությունը: Նա նույնպես թեթև բնույթ ունեցավ և ներկայումս արդեն վերանալու վրա յե, հավանորեն, գլխավորապես ձեռք առած միջոցների, այն ե՝ հակաքութեշային պատվաստումների, հետևանքով, վոր կատարված է մի քանի հազար յերեխաների վրա՝ Յերևանում և սահմանափակ թվով Դիլիջանում:

**Գ. ՍԱՆԻՏԱՐԱ-ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

Հայաստանի սանիտարական կազմակերպությունը դեռ շատ յերիտասարդ է և յուր գոյությունը միայն վերջին տարիներս է սկսել:

Սանիտարա-պրոֆիլակտիկ աշխատանքներն արդյունավետության տեսակետից պահանջում են՝ առանձին սանիտարական պերսոնալ, հատուկ հիմնարկություններ, առանց վորոնց հնարավոր չե կանոնավոր և սիստեմատիկորեն տանել այդ աշխատանքները: Այնինչ, ամբողջ Հանրապետության մեջ 1925/26 բյուջեյական տարվա համար կային՝ շտատով—13, փաստորեն—10 սանիտարական բժիշկներ, իսկ 1926 թ. համար նրանց թիվն ավելի իջավ (շտատով—10, փաստորեն—9):

Այդ քանակի սանբժիշկների միջոցով, ի հարկե, հնարավոր չեր բոլոր աշխատանքները բավարար տանել: Բայց, այնուամենայնիվ, 1925/26 տ. ընթացքում վորոշ աշխատանքներ են տարվել, մասնավորապես, բնակարանների, ճաշարանների և այլ ձեռնարկությունների վրա հսկողություն հաստատելու իմաստով:

Անհրաժեշտ է կազմակերպել սանիտարա-գիգիենիկ լաբորատորիաներ, ախտահան-կամերներ, սան-լուսավորության տներ, առանց վորոնց սանիտարա-պրոֆիլակտիկ՝ աշխատանքները անհայտագործական բնույթ պիտի կրեն և ցանկալի հետևանքներ չեն տա:

Մայրության յեվ մանկության պաշտպանության ուղղությամբ նկատելի յե վորոշ հառաջադիմություն: Ավելացել է կոնսուլտացիաների և նրանց հաճախողների թիվը, ու խորացել են այդ հիմնարկությունների աշխատանքները: Այսպես, որինակ, 1925 թ. կոնսուլտացիաներ հաճախողների թիվը

հավասար եր 23.472 հոգու, իսկ 1926 թ.—28.592-ի: Ծրագրվում է ընդարձակել կոնսուլտացիաների ցանցը գյուղական վայրերում, կազմակերպել գյուղերում և խոշոր արտադրական հիմնարկությունների կից՝ մսուրներ:

Աշխուժացել են վորոշ չափով և աշխատանքները դպրոցներում, սակայն, դպրոցա-սանիտարական բժիշկների սակավության պատճառով, այդ ասպարեզում դեռ շատ բան է մնում անելու: Ուշադրություն է դարձված նաև ֆիզկուլտուրայի վրա, նպատակ ունենալով սանիտարական տեսակետից կանոնավորելու պարապմունքները ու խուսափելու վնասակար թեքումներից:

**Դ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Առողջապահության համար գումարներ են ծախսվում գլխավորապես 4 հիմնական աղբյուրներից՝ Առժողկոմատի նախահաշվով (պետական բյուջե), տեղական բյուջեյով, Կարմիր Խաչի գծով և Ապահովագրական բուժական ֆոնդից*):

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե ծախսված միջոցներն ինչպես են բաշխվում ըստ աղբյուրների:

Աղյուսակ № 7

| ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | 1925 թ. | 1926 թ. | Տոկոս |
|---|---|---|---|
| Առժողկոմատի բյուջեյով . | 398.509 — 63—35,6% | 549.685 — 83 | 32 տոկ. |
| Տեղական բյուջեյով . . . | 515.369 — 46,1% | 627.177 — | 37 ,, |
| «Գ» ֆոնդի հաշվին . . . | 110.685 — 28—10 % | 420.717 — 51 | 24 ,, |
| Կարմիր Խաչի հաշվին . . | 92.797 — 8,3% | 117.204 — | 7 ,, |
| Ընդամենը՝ . . . . | 1.117.360 — 91 | 1.714.784 — 34 | |

ԾԱՆՈԹՈՒԹ. Բացի այս բոլորից, շինարարության վրա ծախսված է 145.000 ռուբլի, նախահաշվից դուրս, վարկի կարգով:

Նկատի ունենալով, վոր բժշկա-սանիտարական ցանցի դանդաղ աճելու պատճառներից մեկն էլ համապատասխան շենքերի բացակայությունն է, վերջին տարիների ընթացքում մի քանի բժշկական շենքերի կառուցում է ձեռնարկվել:

Սկսված շենքերից արդեն ավարտված են՝ Արզնու Ջրաբուժական ժամանակավոր շենքը և սանատորիումը, Դեղատնային վարչության 2 շենքը: Կիսավարտ են՝ Յերևանում-Պալարախտային Դիսպանսերի, Գինեկոլոգիական կլինիկայի և Ռենտգենյան կայանի շենքերը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.*) Այստեղ, ինչպես և բոլոր աշխատանքներում, նկատի չեն առնված Զորասանիտարական, Յերկաթուղային և Ամերկոմի հիմնարկությունները:

# XI ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

**Ա. ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Դատական ապարատի բարելավման աշխատանքներից կարևորագույնը պիտի համարել, հեղափոխական օրինականության կիրառման անհրաժեշտությունից բղխող, կազմակերպչական աշխատանքները, վորոնք տարվել են 1925 թ. սկզբներից:

Վորպես հանրապետության բոլոր դատարանների վերահսկողության բարձրագույն մարմին և միակ վճռաբեկ ինստանցիա Հանրապետության բոլոր դատարանների համար, հիմնվել է Գերագույն Դատարանը, վորը կոչված է օրենքների միօրինակ մեկնաբանություն տալու ու հսկում է դասակարգային գծի ճշտիվ կիրառման վրա: Գերագույն դատարանի այդ ֆունկցիաները տարածվում են նաև հատուկ դատարանների վրա, այն է՝ Աշխատանքի դատարանի, Արբիտրաժ, Հողային և Անչափահասների գործերը քննող հանձնաժողովների վրա: Գերագույն Դատարանի Դատական Կոլլեգիային յենթակա գործերը քննելու համար կազմվում է ժողատենակալների ցուցակ իսկ մշտական դատավորների կազմի մեջ մտցվել են՝ մեկ բանվոր և մեկ թուրք դատավոր: Սահմանվել է Գերագույն Դատարանի հատուկ դատախազություն, ընդհանուր և աշխատավորական գործերի համար:

Գերագույն Դատարանի հիմնվելու շնորհիվ, վորին անցնում են վճռաբեկ ատյանի ֆունկցիաները, Գլխավոր դատարանը, ազատվելով վերջիններից, հնարավորություն ունեցավ ամբողջովին զբաղվելու ավելի կարևոր նշանակություն ունեցող և բարդ քաղաքացիական ու քրեական գործերով, բոլոր մանր, կենցաղային և, ընդհանրապես, տեղական բնույթ կրող գործերը ժողդատարանների իրավասությանը թողնելով:

Նույն ժամանակաշրջանում կազմակերպվում են՝ Աշխատանքի, Գլխավոր դատարանի և Պետքաղվարչության դատախազություններ, վորոնք գտնըվում են Դատախազական Բաժնի ընդհանուր ղեկավարության ներքո:

Մասսաներին ավելի մոտիկ և արդարադատությունն անմիջապես կիրառող հանդիսանում են ժողդատարանները: 1925 թ. ժողդատարանների ընդհանուր թիվը հասնում եր 22-ի: Նույն ժամանակ բացվել են յերկու աշխատանքի դատարան՝ արդյունաբերական կենտրոններում — Յերևանում և Լենինականում: Սրանից հետո ժողդատարանների թիվը հետզհետե աճել է և 1926 թ. վերջերում հասել 28-ի (նույն թվում յերկու դատարան՝ Վեդի-Բասարում և Աղբաբայում, թուրք ազգային փոքրամասնության համար և յերկու աշխատանքի դատարան, ընդամենը՝ 30 ժողդատարան: Ժողդատարանները կազմակերպել են նստաշրջաններ, ուր 1925 թ. քննվել է բոլոր

գործերի 18%-ը և 1926 թ.—28,5%-ը: Միջին թվով, մեկ գործը լուծվել է առաջին ինստանցիայում, մի ամսվա, իսկ աշխատանքի վերաբերյալ գործերը, 14 որվա ընթացքում: Յերկրի իրական պահանջների համեմատ ժողդատարանների թիվը բավական չպիտի համարել: Ժողդատարանների վերաբերյալ կազմակերպչական փոփոխություններից անհրաժեշտ է նշել գավգործկոմների իրավասության ընդարձակումը, նրանց ընտրելու խնդրում:

Արդարադատությունը մասսայականացնելու նպատակով, ժողատենակալների քանակը, վորոնք ընտրվում են անմիջապես մասսաների կողմից, գավհանձնաժողովների ղեկավարությամբ, հաշվետու ժամանակաշրջանում ավելացել է: Միաժամանակ, նրանց ընտրելու կարգի մեջ մացված է այն փոփոխությունը, վոր ընտրության բոլոր մոմենտները, նաև բողոքարկումը, կենտրոնացված է այդ հանձնաժողովներում:

Ստորև բերված թվական տվյալներն ապացուցում են մասսաների մասնակցությունը դատավարության գործում.

Աղյուսակ № 1

| Թ ի վ | Ընդհանուր քանակը | Տղամարդ %% | Կին %% | Սոցիալական դրությունը %% Բանվոր | Գյուղացի | Կարմիր բանակ | Ծառայող | Այլ սոց. դրութ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1925 թ. | 5.600 | 91% | 9 % | 22 % | 40 % | 1 % | 35 % | 2 % |
| 1926 թ. | 6.600 | 92% | 8 % | 13 % | 44 % | 11 % | 31 % | 1 % |

Դրա հետ միասին, պիտի շեշտել, վոր դատարանը ազգաբնակության լայն զանգվածներին մոտենալով հանդերձ, նրանց աչքում հեղինակություն է ձեռք բերել, վորը կարելի յե յեզրակացնել այն բանից, վոր ազգաբնակությունը բոլոր, նույնիսկ չնչին հայցերով, դիմում է դատարանին: Դատարանում հարուցված գործերի թիվը յեղել է 1924 թ.—27,000, 1925 թ. —38.000, իսկ 1926 թ.—50.000:

Հետևյալ, № 2 աղյուսակը ցույց է տալիս, թե ինչ չափով ժողդատարանները ճիշտ են կիրառել դասակարգային գիծը և հեղափոխական օրինականությունը.

Աղյուսակ № 2

| ՀԱՅՑԵՐԻ ՏԵՍԱԿԸ | Քննված ժողդատ. կողմից ըստ եյութ. | Դրանցից բողոքարկված | Քննված Գերագույն դատարան. կողմից | Հաստատված | Կարճված | Ընդամենը՝ բեկանված |
|---|---|---|---|---|---|---|
| Քրեական 19²5 թ. | 100 % 16.487 | 6,4 % 1063 | 6,3 % 1029 | 4,3 % 716 | 1,1 % 187 | 0,9 % 126 |
| Քաղաքացիակ. 192⁵ թ. | 100 % 20.279 | 4,9 % 996 | 3,8 % 764 | 2,3 % 475 | 0,2 % 26 | 1,3 % 263 |
| Քրեական 1926 թ. | 100 % 17.540 | 7,1 1254 | 6 1066 | 4,6 809 | 0,5 98 | 0,9 159 |
| Քաղաքացիակ. 1926 թ. | 100 % 31.689 | 6,2 1972 | 6,1 1941 | 4 1287 | 0,2 65 | 1,9 589 |



**Բ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հեղափոխական օրինականության ամրապնդման պահանջը հետևանք է՝

1. Պետական արդյունաբերության և ժողովրդական տնտեսության զարգացման և քաղաքի ու գյուղի միջև աճող ապրանքաշրջանառության, վորոնք անխուսափելի յեն դարձնում կայուն իրավական ռեժիմը և ազգաբնակության իրավունքների պաշտպանությունը:

2. Գյուղացիական լայն խավերի իրավունքների ապահովումը, առանց վորի անհնարին է այդ մասսաների մասնակցությունը տնտեսության վերականգման գործին:

3. Գյուղի արտադրական ուժերի զարգացման հետևանքով առաջացող դասակարգային շերտավորման:

Գործնականում հեղափոխական օրինականությունը՝ հաշվետու ժամանակաշրջանում կիրառվել է՝

1) ժողովրդական լայն մասսաները դատական մարմինների աշխատանքներին մասնակից դարձնելու միջոցով:

2) դատարանը ազգաբնակությանը մոտեցնելու վերջինի բոլոր խավերը ընդգրկելու և ծագող գործերին արագ լուծում տալու ուղղությամբ և

3) հանցագործությունների դեմ դատախազության վերահսկողության մարմինների միջոցով պայքարը ուժեղացնելու կարգով:

Հեղափոխական օրինականությունը դատախազության կողմից անց է կացված յերկու ուղղությամբ՝ քննչական, հետաքննության մարմինների աշխատանքների ղեկավարությամբ և պետության շահերը դատարաններում պաշտպանելու միջոցով, նաև իշխանության բոլոր ներկայացուցիչների գործունեությունների օրինականության վրա հսկելու ուղիներով (գավգործկոմների նիստերին մասնակցելու, պարտադիր վորոշումների հետ նախապես ծանոթանալու, բողոքարկելու և այլն):

1926 թ. կատարվել են գավառային գործուղումներ, ուր ազգաբնակությունից զանազան բողոքներ են ընդունվել: Ընդունված բողոքների մեծամասնությունը կրում եր հետևյալ բնույթը-վարչական մարմինների վերաբերյալ (բյուրոկրատիզմ, հարկադրում և այլն) բնակարանային խնդիրների քննչական և դատական մարմինների դեմ և զանազան քրեական պատահարների վերաբերյալ:

Այդ բողոքների թիվը յեղել է՝ 1924 թ.—1064, 1 25 թ.—2055 և 1926 թ.—2658: 1926 թ. ընթացքում ընդունված բողոքների միմիայն 238 (8,5 տոկ.) թողնվել է առանց հետևանքի, իսկ 2.420 (91,5 կոկ.) բողոքի ընթացք է տրված: Մասսաների հետ կապվելու 2-րդ ձևը մամուլի և բանթղթակիցների հոդվածների ոգտագործումն է յեղել: 1925 թ. քննության է առնված 117 թղթակցություն, վորից 55 տոկ. թողնված է առանց հետևանքի, իսկ 1926 թ.—209 ու թողնվել է առանց հե-

թանքի՝ 47 տուկ։ Բանթղթակիցների հալածանքների դեմ հարուցված է 1925 թ.—5, իսկ 1926 թ.—12 գործ։

Գավառներում կատարված հետազոտություններից պարզվել են հետևյալ շեղումները հեղափոխական օրինականությունից.

ա) գյուղխորհուրդների գծով—1. ինքնագլուխ տուրքագրում, 2. ինքնագլուխ տուրքարարություն (налоготворчество), 3. պաշտոնական պարտականությունների կատարելու համար լրացուցիչ վարձատրություն հասարակական միջոցներից ստանալը, 4. դատական ֆունկցիաներ յուրացնելը և քաղաքացիական ու հողային վեճերին լուծում տալը տեղերում՝ վարչական կարգով։

բ) շրջգործկոմների գծով—1. պարտադիր վորոշումներ հրատարակելու իրավունքը ի չարն գործադրելը, 2. Գյուղական կյանքը կանոնավորելը պարտադիր վորոշումների միջոցով 3. իշխանությունն ի չարը գործադրելը անտառային և տեղական այլ մարմինների կողմից, յուրացում և վատնում կոոպերատիվներում, և այլն։

Հաշվետու ժամանակաշրջանում զգալի աշխատանք է կատարված հեղափոխական օրինականություն ամրացնելու ուղղությամբ, վորը դրական հետևանքներ է տվել։ Բայց դրանով չի կարելի բավարարվել, անհրաժեշտ է ավելի ևս յեռանդուն կերպով շարունակել աշխատանքներն այդ բնագավառում։ Անհրաժեշտ է ավելի ևս խորացնել հսկողական աշխատանքները՝ թե կենտրոնական վարչա-դատական և թե իշխանության ստորին մարմինների վրա։

# XII. ՊԵՏՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Հաշվետու ժամանակաշրջանում Պետվիճակագրության ամենակարևոր աշխատանքը յեղել է մարդահամարը։

Մարդահամարի ճգնաժամային ժամկետը նշանակված էր դեկտեմբերի 17-ի գիշերը։ Հայաստանի համար տարվա այդ ժամանակը պետք է աննպաստ համարել, քանի վոր մեր ժողովրդի զգալի տոկոսն այդ միջոցին շարժական վիճակում է գտնվում։ Ձմեռը նրանք անցնում են թե հարևան հանրապետությունների արոտատեղերը և թե մեծ քաղաքները՝ աշխատանք փնտրելու, իսկ ամառը վոչ միայն նրանք են վերադառնում, այլ և հարևան հանրապետություններից մեծ թվով քոչվորներ են բարձրանում մեր սարերը. ըստ մարդահամարի, ազգաբնակության կլոր թիվը Հայաստանում հավասար է 870.000-ի, մինչդեռ, մեր յերկրի մշտական ազգաբնակությունը մենք 930.000 հոգի յենք հաշվում։

Նկատի ունենալով մարդահամարի կարևորությունը, կենտվիճվարին առընթեր, վորպես մարդահամարի աշխատանքներին անմիջապես ընթացք տվող՝ հատուկ բաժին է կազմակերպվել։ Աշխատանքները ղեկավարելու համար գործել է հանրապետական յերրյակ՝ Ժողկոմխորհի նախագահի, Արհմիությունների նախագահի և Կենտվիճվարի կառավարչի մասնակցությամբ։ Բացի դրանից, աշխատանքներն անմիջապես տանելու համար, գործել է հանրապետական քառյակ՝ Կենտվիճվարի կառավարչի գլխավորությամբ, իսկ գավառներում, գավառակներում և, նույնիսկ, գյուղերում աջակցող յերրյակներ են գործել։ Մարդահամարի հաջողությունը խոշոր նախապատրաստական աշխատանքներ էր պահանջում. դրանցից անհրաժեշտ է նշել՝ 1) բոլոր բնակավայրերի մանրամասն ցուցակ կազմելը, (նրանց թվում նաև ձմեռանոցների, գյուղակների, անտառային պահակների տնիկների, յերկաթուղու կայարանների, կիսակայարանների, վանքի շենքերի և այլն), 2) Տնացուցակներ կազմելը, նշելով ամեն մի բնակավայրում տնտեսությունների լրիվ քանակը, 3) Հայաստանի քարտեզ պատրաստելը, 4) Քաղաքային վայրերի սահմանագծային քարտեզները և հատակագծերը մշակելը, 5) Քաղաքային վայրերի կալվածքների ցուցակները պատրաստելը։ Խոշոր տեղ են բռնել նաև պրոպագանդային աշխատանքները՝ թռուցիկներ, պլակատներ, բրոշյուրներ, կոչեր և այլն հրատարակելը։ Մարդահամարի աշխատանքները տանելու համար մշակված է վիճակագրական հետևյալ ցանցը՝ յերկու քաղաքային վիճակագրական շրջան, 8 գյուղական, 13 հրահանգչական ավագ, 20—քաղաքային և 98—գյուղական, ցուցակագրական շրջաններ՝ 334—քաղաքային, 906—գյուղական։

Աշխատանքները տանելու համար վերապատրաստվել են 1.500 աշխատակից։ Ճգնաժամի որը, դեկտեմբերի 17-ին մարդահամարին մասնակցել են

3.000-ից ավելի մարդ։ Մարդահամարի աշխատանքները ընթացել են հաջող և մասսաների լայն աջակցությամբ։

Առանձին դժվարություններից հիշատակելի յեն Լենինականի յերկրաշարժից փլատված վայրերի, մասնավորապես, Լենինական քաղաքի. կալվածքների ցուցակագրությունը ու ձմեռնանոցներում բնակվողների հաշվառումը այն տեսակետից, վոր նրանք վոչ մոռացվեյին, վոչ ել կրկնվեյին իրենց հիմնական բնակավայրերում։

Տեսականորեն, մարդահամարը պիտի կատարվի մի որվա մեջ, բայց, փաստորեն, նա տևեց քաղաքներում՝ 7 որ, իսկ գյուղերում՝ 14 որ։

Ներկայումս կատարվում ե աշխատանքների ստուգում, վորին հաջորդելու յե նյութերի մշակումը, վորը, հավանականորեն, յերկու տարի կըտևի։

Մարդահամարի արդյունքների նախնական տվյալները հետևյալն են.

**Խորհրդային Հայաստանի ազգաբնակությունն ըստ գավառների**

Աղյուսակ № 1

| Գ Ա Վ Ա Ռ Ն Ե Ր | | Արական | Իգական | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 Յերևանի | Գյուղերում | 56.325 | 54.235 | 110.560 |
| | Քաղաքներում | 33.398 | 31.858 | 65.256 |
| | Գումարը | 89.723 | 86.093 | 175.816 |
| 2 Դարալագյազի | Գյուղերում | 14.954 | 13.540 | 28.494 |
| | Քաղաքներում | 865 | 715 | 1.580 |
| | Գումարը | 15.819 | 14.255 | 30.074 |
| 3 Դիլիջանի | Գյուղերում | 35.941 | 33.765 | 69.706 |
| | Քաղաքներում | 4.042 | 3.825 | 7.867 |
| | Գումարը | 39.983 | 37.590 | 77.573 |
| 4 Եջմիածնի | Գյուղերում | 51.153 | 49.413 | 100.566 |
| | Քաղաքներում | 6 819 | 6.545 | 13.364 |
| | Գումարը | 57.972 | 55.958 | 113.930 |
| 5 Զանգեզուրի | Գյուղերում | 32.000 | 32.685 | 64.685 |
| | Քաղաքներում | 2 508 | 1.667 | 4.175 |
| | Գումարը | 34.508 | 34.352 | 68 860 |
| 6 Լենինականի | Գյուղերում | 61.027 | 62.791 | 123.818 |
| | Քաղաքներում | 18.413 | 20.348 | 38.761 |
| | Գումարը | 79.440 | 83.139 | 162.579 |
| 7 Մեղրու | Գյուղերում | 3.726 | 3.221 | 6.947 |
| | Քաղաքներում | 608 | 521 | 1.129 |
| | Գումարը | 4.334 | 3.742 | 8.076 |
| 8 Նոր-Բայազետի | Գյուղերում | 46.131 | 45.877 | 92.008 |
| | Քաղաքներում | 4.694 | 4.770 | 9.464 |
| | Գումարը | 50.825 | 50.657 | 101.472 |
| 9 Փամբակ-Լոռու | Գյուղերում | 57.453 | 56.724 | 114 177 |
| | Քաղաքներում | 9.368 | 8.796 | 18.164 |
| | Գումարը | 66 821 | 65.520 | 132.341 |
| **Հայաստանում** | Գյուղերում | 358.710 | 352.251 | 710 961 |
| | Քաղաքներում | 80.715 | 79.045 | 159.760 |
| | **Ընդամենը** | 439.425 | 431.296 | 870.721 |



**ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ**

Աղյուսակ № 2

| ՎԱՅՐ | Հայաստան | | | Վրաստան | | | Ադրբեջան | | | Գումարն Անդրկովկասում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արական | Իգական | Ընդամեն. | Արական | Իգական | Ընդամեն. | Արական | Իգական | Ընդամեն. | Արական | Իգական | Ընդամեն. |
| Քաղաքներում և քաղաքատիպ վայրերում | 80.715 | 79.045 | 15[illegible].760 | 279.345 | 289.602 | 568.947 | 327.379 | 310.435 | 637.814 | 687.439 | 679,082 | 1.366 521 |
| Գյուղերում | 358.710 | 352.251 | 710.961 | 1.031.894 | 1.021.769 | 2.053.663 | 869.420 | 790.965 | 1.660.776 | 2.260 024 | 2.164.985 | 4.425 400 |
| Ընդամենը | 439.425 | 431 296 | 870.721 | 1.311 239 | 1 311 371 | 2.622 610** | 1.196 799 | 1.101 400 | 2.298 590* | 2.947 463 | 2 844.067 | 5.791.921 |

* Այդ թվում 391 հոգի չի դասավորված ըստ սեռի։

** Մի քանի վայրերից ազգաբնակության թվի մասին տեղեկությունները պակասում են այդ վայրերում մոտավորապես 14.500 բնակիչ կա։

ՀԱՎԵԼՎԱԾ

# Ց Ա Ն Կ

## Հ. Ս. Խ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՈՐՈՆՔ ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՆ 1925 Թ. ՄԱՐՏԻՑ—1927 Թ. ՀՈՒՆՎԱՐԸ

*(Դասավորված է ըստ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի)*

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Ադրբեջանի, Վրաստանի յեվ Նախիջևանի Ս. Խ. Հանրապետությունների քոչվորների ամառային տեղափոխության մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. մայիսի 8 Ո.Հ.* № 5, հոդ. 39, «Խ.Հ.»**) 1925 թ. մայիսի 21 № 114)։

2. Ծխամատյանների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. 1925 թ. մայիսի 29, Ո.Հ. 1925 թ. № 6, Հոդ. 42, «Խ.Հ.» 1925 թ. հունիսի 5, № 126)։

3. Բամբակի չուի դեմ մաքառելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հուլիսի 3, Ո.Հ. 1925 թ. № 7—8, հոդ. 48, «Խ.Հ.» 1925 թ. №156)։

4. Կանոնադրություն Հ.Ս.Խ.Հ. Ջրային Տնտեսության Վարչության.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. նոյեմբեր 18, Ո.Հ. № 11, հոդ. 77, «Խ.Հ.» 1925 թ. № 289)։

5. Գյուղացիական տնտեսությունների տիրազուրկ գույքերը Փոխադարձ Օգնության ընկերություններին հանձնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. նոյեմբերի 26, Ո.Հ. 1925 թ. № 11, հոդ. 78, «Խ.Հ.» 1925 թ. № 291)։

6. Այգիները Փիլոքսերայից ազատելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ., Ո.Հ. 1925 թ. № 11, հոդ. 81, «Խ.Հ.» 1925 թ. № 181)։

7. Մելիորատիվ ընկերությունների մասին.

(Հ.Ս.Հ.Խ. Ժ.Կ.Խ. 1926 թ. հունվարի 15, Ո.Հ. 1926 թ. № 2, հոդ. 9, «Խ.Հ.» 1926 թ № 29)։

8. Պետական հողային գույքերն օգտագործելու կարգի, պայմանների յեվ ժամանակի մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Տնտխորհի 1926 թ. փետրվարի 17, Ո.Հ. № 3, հոդ. 23, «Խ.Հ.» 1926 թ. № 111)։

9. Խաշխաշի ցանքսերի մասին.

Հ.Ս.Խ.Հ. Տնտխորհի 1926 թ. մարտի 24, Ո.Հ. 1926 թ. № 4, հոդ. 38, «Խ.Հ.» 1926 թ. № 87)։

10. Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1924 թ. հոկ. 22 «Գյուղերը հատակագծելու յեվ բարեկարգելու վերաբերյալ վորոշումը վերացնելու մասին».

(ՀՍԽՀ Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. ապրիլի 13, Ո.Հ. 1926 թ. № 5, հոդ. 46, «Խ.Հ.» 1926 թ. № 113)։

11. Վրաստանի, Ադրբեջանի, Նախիջևանի Հանրապետությունների սահմաններից Հ.Ս.Խ.Հ. անցնող քոչվորների յեղջյուրավոր (խոշոր յեվ մանր) անասունների տեղափոխության կարգի ու պայմանների մասին, ինչպես յեվ Հայաստանի ներսում ամառը գավառից-գավառ լեռնային արոտատեղերը տարվող տեղական անասունների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. մայիսի 25, Ո.Հ. 1926 թ. № 7, հոդ. 59, «Խ.Հ.» 1926 թ. №136)։

---

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ * «Ո. Հ.» Օրենքների և կարգադրությունների հավաքածու

** «Խ. Հ.» «Խորհրդային Հայաստան» թերթ։

12. Քաղաքներից դուրս գտնվող ցանքսերը, այգիները, բանջարանոցները, խոտատեղերը յեվ այլն արածացնելու յեվ փչացնելու համար վարչական կարգով պատիժներ նշանակելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. հունիսի 22 Ո.Հ. 1926 թ. № 8, հոդ. 68, «Խ.Հ.» 1926 թ. № 161)։

13. Հ.Ս.Խ.Հ. սահմաններում ջրից ոգտվելու կարգի մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 հուլիսի 9, Ո. Հ. 1926 թ. №8. հոդ. 70, «Խ. Հ.» 1926 թ. № 169)։

14. Անասնաբուժական կանոնագրքի փոփոխությունների յեվ լրացումների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. մայիսի 25, Ո.Հ. 1926 թ. № 9, հոդ. 83)։

15. Նոր վայրերում հաստատվող հողագործողներին արտոնություններ տալու մասին վորոշումը վերացնելու վերաբերյալ.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. սեպտեմբերի 1, «Խ.Հ.» 1926 թ. № 250)։

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Կանոնադրություն Հ.Ս.Խ Հ. Աշխժողկոմատին առընթեր բանվորական բնակարանների կոոպերատիվ շինարարությանն ոժանդակող Հանրապետական Կոմիտեյի.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. մարտի 27. Ո.Հ. 1925 թ. №4, հոդ. 31, «Խ.Հ.» 1925 թ. № 91)։

2. Տնայնագործական կոմիտեյի մասին.

(ՀՍԽՀ ԺԿԽ 1925 թ. մարտի 27, Ո.Հ. 1925 թ. № 5, հոդ. 38, «Խ.Հ.» 1925 թ. մայիսի 12 № 106)։

3. Խճուղիները բարվոք դրության մեջ պահելու յեվ վաղաժամ ավերվելուց պաշտպանելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հուլիսի 1, Ո.Հ. 1925 թ. № 7-8, հոդ. 49, «Խ.Հ.» 1925 թ. № 162)։

4. Խ.Ս.Հ.Մ. Ժողտնտխորհին առընթեր Պոլիգրաֆ արդյունաբերության կոմիտե հիմնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հուլիսի 31, Ո.Հ. 1925 թ. №7-8, հոդ. 55, «Խ.Հ.» 1925 թ. № 195)։

5. Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1925 թ. հոկտեմբերի 16-ի վորոշման 1-4 հոդվածների կիրառման վերաբերյալ «բանվորական բնակարանների շինարարության համար պետական ձեռնարկություններին արտոնություններ վերապահելու մասին».

(Հրահանգ Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. ապրիլի 2, Ո.Հ. 1926 թ. № 4, հոդ. 33, «Խ.Հ.» 1926 թ. № 98).

6. Կանոնադրություն ընկ. Լուկաշինի անվան բամբակամանվածային գործարանի շինարարական կոմիտեյի.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. ապրիլի 2, Ո.Հ. 1926 թ. № 5, հոդ 44)։

7. Խաղողի յեվ մրգի ողու զտման յեվ գործարաններից զտած ողի բաց թողնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. հունիսի 18, Ո.Հ. 1926 թ. № 8, հոդ 67. «Խ.Հ.» 1926 թ. № 168.)

8. «Կոնյակի սպիրտի արդյունաբերության վերաբերյալ» Հ Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1924 թ. նոյեմբերի 15 վորոշման փոփոխության մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. հունիսի 29, Ո.Հ. 1926 թ № 7, հոդ. 69, «Խ.Հ.» 1926 թ. № 168)։



9. Կանոնադրություն Պետական ծխախոտի գործարանի.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. ապրիլի 29-ի, Ո. Հ. 1925 թ. բաժ. 2-րդ № 1, հոդ. 2)։

10. Կանոնադրություն Հ.Ս.Խ. ելեքտրո-մեքենայագործական տրեստի.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հուլիսի 8-ի, Ո. Հ. 1925 թ. բաժ. 2-րդ № 2, հոդ. 3)։

11. Կանոնադրություն «Անասնարդյունառ» առեվտրա-արդյունաբերական փայատիրական ընկերության.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. սեպտեմբերի 9-ի Ո. Հ. 1925 թ. բաժ. 2, № 3, հոդ. 5-րդ)։

12. Հ.Ս.Խ.Հ. Պետական Պոլիգրաֆ արդյունաբերության Վարչության կանոնադրությունը (Հայպոլիգրաֆ)։

(Հ.Ս Խ.Հ. Ժողկոմխորհի 1926 թ. հունիսի 4-ի, Ո. Հ. № 3, բաժ. 2, հոդ. 20)։

## ԱՌԵՎՏՈՒՐ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

1. Գործադիր Կոմիտեների տեսչության տակ գտնվող տնտեսավարական սկզբունքներով գործող ձեռնարկությունների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. դեկ. 15. Ո.Հ. № 13 հոդ. 83)։

2. Որինակելի կանոնադրություն Կոմունալ տրեստի։

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. դեկտեմբերի 16., Ո.Հ. № 13, հոդ. 84)

3. Գանձումների բավարարման համար՝ պետական հիմնարկություններին ու ձեռնարկություններին կոոպերատիվ կազմակերպություններին յեվ այլ հասարակական հաշվետվության յենթակա ձեռնարկություններին պատկանող ապրանքներն ապրանքային բորսաներում հարկադրաբար վաճառելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվարի 2, Ո.Հ. № 2, հոդ. 15, «Խ.Հ.» 1926 թ. № 52)։

4. «Գործադիր Կոմիտեյի տեսչության տակ գտնվող տնտեսավարական սկզբունքներով գործող ձեռնարկությունների (տրեստների) մասին» 1925 թ. դեկտեմբերի 16-ի դեկրետի հոդ. 31-ը նոր ծանոթությամբ լրացնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. մարտի 5., Ո.Հ. 1926 թ. № 3, հոդ. 28)։

5. Կանոնադրություն Հ.Ս.Խ.Հ. Բնակարանային կոոպերացիայի Միության։

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. ապրիլի 16., Ո.Հ. 1926 թ. № 8, հոդ. 65)։

6. Կանոնադրություն արհեստագործական կոոպերացիայի.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. ոգոստոսի 10., Ո. Հ. 1926 թ. № 9, հոդ. 71),

7. Կանոնադրություն Հայաստանի Տնայնա-արհեստագործական կոոպերատիվների Միության «Հայտնարկոոպի»-ի.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. հուլիսի 23, Ո.Հ. 1926 թ. № 9, հոդ. 72)։

8. Կանոնադրություն արհեստագործական կոոպերատիվ արտելի.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. հուլիսի 23, Ո.Հ. 1926 թ. № 9, հոդ. 73)։

9. Կանոնադրություն Ա.Ս.Ֆ.Խ.Հ. Առեվտրի Ժողովրդական Կոմիսարի Լիազորի Վարչության՝ Սառնարանային Կոմիտեյի.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հունիսի 12, Ո.Հ. 1925 թ. № 7-8, հոդ. 52, «Խ. Հ» 1925 թ. № 176)

10. Առեվտրական հիմունքներով գործող արդյունաբերական ձեռնարկությունների (տրեստների) մասին։

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հունվարի 28-ի Ո.Հ., բաժ. 2-րդ, № 1, հոդ. 1)։

11. Որինակելի կանոնադրություն բնակարանա-շինարարական կոոպերատիվ ընկերությունների.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հուլիսի 9-ի Ո.Հ. 1925 թ. բաժ. 2-րդ, № 3, հոդ. 4)։

12. Կանոնադրություն Հայաստանի կաթնատնտեսական կոոպերացիայի Միության (Պանիրյուղկենտրոն)։
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. բաժ. 2-րդ, № 2, հոդ. 17)։

13. Կանոնադրություն Բամբակագործական կոոպերատիվ ընկերության.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ 1926 թ. ապրիլի 29-ի Ո.Հ. 1926 թ. բաժ. 2, № 4, հոդ. 26)։

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղերում խոշոր յեղջյուրավոր անասունները պետական պարտադիր կոպարով մահից ապահովագրելու մասին.
(Հ,Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. փետրվարի 20, Ո.Հ. 1925 թ. № 3, հոդ. 24, «Խ. Հ.» 1925 թ. մարտի 7 № 54)։

2. Գյուղատնտեսական կուլտուրական բույսերը կարկտահարությունից պետական պարտադիր կոպարով ապահովելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1925 թ. ապրիլի 7, Ո.Հ. 1925 թ. № 4, հոդ. 35, «Խ. Հ.» 1925 թ. № 87)։

3. Հինգ-տոկոսային գյուղացիական խաղարկության փոխառության ռեալիզացիային օժանդակող Հանրապետական Հանձնաժողովի կազմի մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հունիսի 3., Ո.Հ. 1925 թ. № 6, հոդ. 44, «Խ.Հ.» 1925 թ. հունիսի 17, № 136)։

4. Գրականության յեվ ռեպերտուարի Վարչության գանձումների մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հուլիսի 8., Ո.Հ. 1925 թ. № 7-8, հոդ. 50, «Խ.Հ.» 1925 թ. № 175)։

5. Կանոնադրություն կանխավճարներ տալու չափերի.
(Հ.Ս.Խ.Հ Ժ.Կ.Խ. հունիսի 19., Ո.Հ. 1925 թ. № 7-8, հոդ. 51, «Խ.Հ.» 1925 թ. № 177).

6. Բամբակացանների Հայբամբակից ստացած կանխավճարներից տույժեր յեվ ապառիկներ գանձելն արգելելու մասին.
(Հ Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. սեպտեմբերի 2., Ո Հ. 1925 թ. № 10, հոդ. 64, «Խ Հ.» 1925 թ. № 215)։

7. Բուժա-սանիտարական, գիտական յեվ կենտրոնական ցուցադրական հիմնարկությունների նյութական դրությունը թեթևացնելու նպատակով, հատուկ դրամական ֆոնդեր ստեղծելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. դեկտեմբերի 30., Ո.Հ. 1926 թ. № 1, հոդ., 2 «Խ.Հ.» 1926 թ. № 18)։

8. Կանոնադրություն գավգործկոմների վերստուգիչ հանձնաժողովների.
(Հ.Ս Խ Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. հունվարի 5, Ո.Հ. 1926 թ. № 1, հոդ. 4, «Խ.Հ.» 1926 թ. № 17)։

9. Կանոնադրություն Հ.Ս.Խ.Հ. գյուղերի գյուղհարկային հանձնաժողովների.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ Կ.Խ. 1926 թ. մարտի 30. Ո. Հ. № 5, հոդ. 43, «Խ. Հ.» 1926 թ. № 113)։

10. Կանոնադրություն գյուղական խորհուրդների վերստուգիչ հանձնաժողովների.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. ապրիլի 20. Ո.Հ. 1926 թ. № 5, հոդ. 48, «Խ.Հ.» 1926 թ. № 118)։

11. Նոտարական գործողությունների վարձատրության սակագին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվարի 19, Ո.Հ. 1926 թ. № 7, հոդ. 52, «Խ.Հ.» 1926 թ. № 101, 102)։

12. Ցանկ նոտարական տուրքից ազատվողների.
(Հ.Ս.Խ Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվ. 19., Ո Հ. 1926 թ. № 7, հոդ. 53)։

13. 1926/27 տ. ընթացքում Հ.Ս Խ Հ. վորոշ գավառներում խոզաբուծությունը գյուղատնտեսական հարկից ազատելու յեվ գյուղատնտեսական կուլտուրաների, անասունների յեվ մեղվաբուծության միջին նորմաներ սահմանելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. հունիսի 21., Ո.Հ. 1926 թ. № 7, հոդ. 63, «Խ.Հ.» 1926 թ. № 152)։



14. Արհեստակցական միությունները դատատուրքից յեվ դատական գործերի համար այլ տուրքերից յեվ ծախսերից ազատելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. հուլիսի 27, Ո.Հ. 1926 թ. № 9, հոդ. 75, «Խ. Հ.» 1926 թ. № 191)։

15. Խոտի ցանքսերը 1926 թ. 1927 թ. ընթացքում միասնական գյուղատնտեսական հարկից ազատելու մասին։
(Հ.Ս Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ Խ. 1926 թ. սեպտեմբերի 1, «Խ.Հ.» 1926 թ. № 251)։

16. Պանրագործությունից, կտավագործությունից, զամբյուղագործությունից, փինաչությունից, բուսական ներկեր պատրաստելուց յեվ անտառային պտուղներ հավաքելուց գոյացած յեկամուտները 1926/27 թ. միասնական գյուղատնտեսական հարկից ազատելու մասին.
(Հ Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. սեպտեմբերի 1, «Խ.Հ.» 1926 թ. № 251)։

17. Շերամապահությունը 1926/27 տ. ընթացքում միասնական գյուղատնտեսական հարկից ազատելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 19 6 թ. սեպտեմբերի 1., «Խ.Հ.» 1926 թ. № 252)։

18 Ծխախոտաբուծությունը 1926/27 տ. ընթացքում միասնական գյուղատնտեսական հարկից ազատելու մասին.
(Հ.Ս.Խ Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. սեպտեմբերի 1., «Խ.Հ.» 1926 թ. № 252)։

19. Պետական յեվ տնտեսական հիմնարկությունների հաշվեկշիռները քննող Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների մասին։
(Հ. Ս. Խ. Հ. Տնտխորհի 1926 թ. ապրիլի 28-ի Ո. Հ. 1926 թ. բաժ. 2-րդ, № 2-րդ, հոդ. 18, Խ. Հ. 1926 թ. № 166)։

## ԱՇԽԱՏԱՆՔ, ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Կենտրոնական Վիճակագրական Վարչության առընթեր կոոպերատիվների վիճակագրության բյուրո հիմնելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. մարտի 6, Ո.Հ. 1925 թ. № 3, հոդ. 27, «Խ. Հ.» 1925 թ. մարտի 28, № 70)։

2. Ձեռնարկություններում պատանիների նվազագույն քանակությունը սահմանելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ Ժ.Կ.Խ. 1925 թ. ապրիլի 3-ի, Ո.Հ. 1925 թ. № 4, հոդ. 33, «Խ.Հ.» 1925 թ. № 92).

3. Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց անհատական կենսաթոշակների մասին.
(Հ.Ս.Խ,Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հունիսի 19, Ո.Հ. № 10, հոդ. 60, «Խ.Հ.» 1925 թ. № 156)։

4. Գրասենյակային աշխատանքների սկսելու յեվ ավարտելու ժամանակի մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. սեպտ. 30. Ո.Հ. № 10, հոդ. 67, «Խ.Հ.» 1925 թ. № 223)։

5. Հ.Ս.Խ.Հ. սահմաններում 1926 թ. տոն յեվ հանգստի առանձին օրերի մասին
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. դեկտեմբերի 30, Ո.Հ. 1926 թ. № 1, հոդ. 3, «Խ.Հ.» 1926 թ. № 25)։

6. Հ.Ս.Խ.Հ. Գերատեսչությունների յեվ հիմնարկությունների Միջվարչական հանձնաժողովների յեվ խորհրդակցությունների աշխատանքների կարգավորման մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ Կ.Խ. 1926 թ. հունվարի 5, Ո.Հ. 1926 թ. № 1, հոդ. 6, «Խ.Հ.» 1926 թ. № 19)։

7. Պետական հիմնարկությունների աշխատանքների ժամերը սահմանելու մասին 1926 թ. ամառվա ընթացքում.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. ապրիլի 21, Ո.Հ. 1926 թ. № 4, հոդ. 37, «Խ.Հ.» 1926 թ. № 97)։

8. Գավգործկոմի Նախագահության առընթեր գավառային վիճակագրական բյուրո կազմակերպելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. մայիսի 25, Ո.Հ. 1926 թ. № 7, հոդ. 58, «Խ.Հ.» 1926 թ. № 140)։

9. Տնային աշխատավորների աշխատանքի պայմանների մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. սեպտեմբերի 16., «Խ.Հ.» 1926 թ. № 248)։

10. Մարդահամարին նպաստելու միջոցների մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. նոյեմբերի 10, «Խ.Հ.» 1926 թ. № 263)։

11. Հ.Ս.Խ.Հ. սահմաններում 1927 թ. տոն յեվ հանգստի առանձին օրերի մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. դեկտեմբերի 24, «Խ.Հ.» 1926 թ. № 302)։

## ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1. Ծաղկի պարտադիր պատվաստման մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. փետրվարի 25. Ո.Հ. 1925 թ. № 3, հոդ. 26, «Խ.Հ.» 1925 թ. մարտի 18, № 62)։

2. Բարձրագույն դպրոցների յեվ արդյունաբերական տեխնիկումների շրջանավարտ մասնագետներին ոգտագործելու միջոցների մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. ապրիլի 3, Ո.Հ. 1924 թ. № 4, հոդ. 32, «Խ.Հ.» 1925 թ. № 91)։

3. Կանոնադրություն Հ.Ս.Խ.Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի ֆիզկուլտուրայի գերագույն Խորհրդի.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. ապրիլի 7-ի, Ո.Հ. 1925 թ. № 4, հոդ. 34, «Խ.Հ.» 1925 թ. № 96)։

4. Պետական համալսարանում ուսման վարձ սահմանելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. մայիսի 20, Ո.Հ. № 6, հոդ. 41, «Խ.Հ.» 1925 թ. հունիսի 4, № 125)։

5. Արտազորային պատրաստության կայանների բժշկա-սանիտարական հսկողության կանոնավորման մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1925 թ. ոգոստոսի 18, Ո.Հ. № 10, հոդ. 63, «Խ.Հ.» 1925 թ. № 206)։

6. Մալարիայի դեմ պայքարելու միջոցների մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. սեպտեմբերի 9, Ո.Հ. 1925 թ. № 10, հոդ. 66, «Խ.Հ.» 1925 թ. № 217)։

7. «Խ. Հ.» թերթի 1926 թ. հունվարի 8-ի № 5-ում «դեղատներին արտոնություններ տալու մասին» վորոշումը չեղյալ համարելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. հունվարի 21, Ո.Հ. 1926 թ. № 2, հոդ. 11, «Խ.Հ.» 1926 թ. № 42)։

8. Պետական համալսարանում ուսման վարձ սահմանելու վերաբերյալ Ժողկոմխորհի 1925 թ. մայիսի 20-ի վորոշման փոփոխության յեվ լրացման մասին.
Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվարի 12, Ո.Հ. 1926 թ. № 3, հոդ. 21., «Խ.Հ.» 1926 թ. № 61)։



9. Լուսժողկոմատի հիմնարկություններում ուսման վճար սահմանելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվարի 12., Ո.Հ. № 3, հոդ. 22, «Խ.Հ.» 1926 թ. № 67)։

10. Մանկատների սաներին հանրոգուտ աշխատանքի պատրաստելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. մարտի 15, Ո.Հ. 1926 թ. № 3, հոդ. 29, «Խ.Հ.» 1927 թ. № 73)։

11. Հ.Ս.Խ.Հ. Պետհամալսարանի յեվ արդյունաբերական տեխնիկումների 1925-26 ուս. տ. շրջանավարտ մասնագետներին ոգտագործելու միջոցների մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. ապրիլի 9, Ո.Հ. 1926 թ. № 4, հոդ. 34, «Խ.Հ.» 1926 թ. № 99)։

12. Հ.Ս.Խ. Հանրապետության խիստ յեվ չափավոր մալարիային քաղաքների յեվ շրջանների ցուցակի մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. ապրիլի 30, Ո.Հ. 1926 թ. № 5, հոդ. 49, «Խ.Հ.» 1926 թ. № 126)։

13. Պետական դեղատների յեվ դեղատնային ձեռնարկությունների յեկամուտներն ոգտագործելու կարգի մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. մայիսի 7, Ո.Հ. 1926 թ. № 5, հոդ. 50, «Խ.Հ.» 1925 թ. № 124)։

14. Կանոնադրություն Հ.Ս.Խ. Հանրապետական նշանակություն ունեցող կուրորտների վարչության.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. ապրիլի 20, Ո.Հ. № 7, հոդ. 54, «Խ.Հ.» 1926 թ. № 135)։

15. Կանոններ հիվանդանոցներում յեվ բուժական հիմնարկություններում մեռածների դիահատման կարգի մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. մայիսի 28, Ո.Հ. 1926 թ. № 7, հոդ. 60, «Խ.Հ.» 1926 թ. № 151)։

16. Պրոֆտեխնիկական դպրոցների կանոնադրության հաստատման մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. ոգոստոսի 27, «Խ.Հ.» 1926 թ. № 228)։

17. Գյուղական վայրերը բուժօգնությամբ ապահովելու յեվ գավառային բժշկական կազմի նյութական կենցաղային դրությունը բարելավելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. սեպտեմբերի 17, «Խ.Հ.» 1926 թ. №253)։

18. Բնակարանների սանիտարական պահպանության մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. ոգոստոսի 5, Ո.Հ. № 10, հոդ. 62, «Խ.Հ.» 1925 թ. № 201)։

19. Պետական յեվ կոոպերատիվ մարմինների գործունեյության վերաբերյալ նյութերի յեվ տեղեկագրերի հրատարակության կրճատելու միջոցների մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. ոգոստոսի 6, Ո.Հ. № 9, հոդ. 76, «Խ.Հ.» 1926 թ. № 195)։

20. Նորմալ կանոնադրություն Գավառագիտական ընկերության.
(Հ. Ս. Խ. Հ. Ժ. Կ. Խ. 1926 թ. հունիսի 18-ի, Ո. Հ. 1926 թ. բաժ. 2-րդ № 4, հոդ. 31)։

## ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԶԻՆՎԱԾ ՈՒԺ

1. Հ.Ս.Խ Հ. Կառավարության որենքների յեվ կարգադրությունների հրատարակման կարգի մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1925 թ. հունիսի 9, Ո.Հ. 1925 թ. № 6, հոդ. 47, «Խ.Հ.» 1925 թ. հունիսի 26 № 144)։

2. Կանոնադրություն գյուղական խորհուրդների.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1925 թ. մարտի 16, Ո.Հ. 1925 թ. № 9, հոդ. 57)։

3. Կանոնադրություն խորհուրդների գավառական համագումարների յեվ գավառական գործադիր կոմիտեների.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1925 թ. մարտի 16-ի, Ո.Հ. № 9, հոդ. 58)։

4. Հ.Ս.Խ.Հ. խորհուրդների գավառային համագումարների յեվ գավառային գործադիր կոմիտեների.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1925 թ. մարտի 16, Ո.Հ. № 9, հոդ. 59)։

5. Քաղաքային յեվ գյուղական խորհուրդների ընտրության յեվ խորհուրդների համագումարներ հրավիրելու հրահանգ.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. Նախագահության՝ 1925 թ. նոյեմբերի 27, Ո. Հ. 1925 թ. № 10, հոդ. 68, «Խ Հ.» 1925 թ. № 249)։

6. Խ.Ս.Հ. Միության Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի յեվ Բանվորա-գյուղացիական Կարմիր Նավատորմի զինվորական ծառայողների յեվ նրանց ընտանիքների արտոնությունների ու նախապատվությունների օրենսգրքի կիրարկության հրահանգների մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. նոյեմբերի 7, Ո.Հ. № 11, հոդ. 69)։

7. Կանոնադրություն քաղաքային խորհուրդների.
(Հ.Ս.Խ.Հ Կ.Գ.Կ. 1925 թ. դեկտեմբերի 22, Ո.Հ. 1925 թ. № 12 հոդ. 82, «Խ.Հ.» 1926 թ. № 6-7)։

8. Խորհուրդների գավառակային համագումարների յեվ գավառային գործադիր կոմիտեների կանոնադրության 27 հոդվածի փոփոխման ու լրացման մասին։
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. Նախագահության՝ 1926 թ. հունվարի 19, Ո.Հ. № 2, հոդ. 10, «Խ.Հ.» 1926 թ. № 30)։

9. Գավառակային Գործադիր Կոմիտեյի զինվորական գործավարության մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. նախագահության 1926 թ. մարտի 23, Ո.Հ. № 3, հոդ. 30)։

10. Գյուղական խորհուրդների կանոնադրության լրացման մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. Նախագահության 1926 թ. մարտի 30, Ո.Հ. 1926 թ. № 4, հոդ. 40 «Խ Հ.» 1926 թ. № 86)։

11. Հրահանգ Հ.Ս Խ.Հ. Կ.Գ.Կ. Նախագահության աշխատանքի կարգի.
(Հ.Ս.Խ Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. փետրվարի 2, Ո.Հ. 1926 թ. № 5, հոդ. 41)։

12. Հ.Ս.Խ.Հ. Հողժողկոմատի կանոնադրության 5-րդ գլուխը փոփոխելու յեվ լրացնելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ Կ Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. ապրիլի 13, Ո Հ. 1926 թ. № 5, հոդ. 45, «Խ.Հ» 1926 թ. № 113)։

13. Կանոնադրություն Հ.Ս.Խ.Հ. Կենտգործկոմի կազմակերպչական բաժնի.
Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. ապրիլի 20, Ո.Հ. 1925 թ. № 5, հոդ. 47)։

14. ՀՍԽՀ. Սահմանադրություն
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. հուլ. 22. Ո.Հ. 1926 թ. № 6, հոդ.51. «Խ.Հ.» 1926 թ № 178)։

15. Հրահանգ գյուղխորհուրդների անդամների իրավունքների յեվ պարտականությունների մասին.
Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. մայիսի 25, Ո.Հ. 1926 թ, № 7, հոդ. 57, «Խ.Հ.» 1926 թ. № 134)։

16. Հ.Ս.Խ.Հ. Կենտվիճվարչության վերակազմելու մասին.
(Հ.Խ.Ս.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. հունիսի 1, Ո.Հ. 1926 թ. № 7, հոդ. 61, «Խ.Հ.» 1926 թ. № 146)։

17. Խորհուրդների գավառակային համագումարների յեվ գավառակային գործադիր կոմիտեների կանոնադրության 2-րդ հատվածի 18-րդ հոդվածի փոփոխության յեվ լրացման մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. հուլիսի 27, Ո.Հ. 1926 թ. № 9, հոդ. 77, «Խ.Հ.» 1926 թ. № 186)։

18. Գավառային Գործադիր Կոմիտեների կանոնադրության լրացման մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. օգոս. 25, «Խ.Հ.» 1926 թ. № 211)



19. Հայաստանի Արտակարգ Հանձնաժողովը Պետական Քաղաքական Վարչության վերածելու մասին.
(Հ.Ս.Խ Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. սեպտ. 8, «Խ.Հ.» 1926 թ. № 221)։

20. Պարտադիր զինվորագրության վերաբերյալ վորոշումը վերացնելու մասին.
Հ Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. հոկտ. 20, «Խ.Հ.» 1926 թ. № 254)։

21. Հ. Ս. Խ. Հ. Լոռի-Փամբակի գավառում Վորանցովկայի գավառակ կազմելու մասին.
Հ.Ս.Խ Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1925 թ. հոկտ. 20, Ո.Հ. № 11, հոդ. 76, «Խ.Հ. 1925 թ. № 59)։

22. Հ.Ս.Խ.Հ. Լոռի-Փամբակի գավառում Վորանցովկայի գավառակ կազմելու վերաբերյալ 1925 թ. հոկտ. 20-ի վորոշումը փոխելու մասին.
(Հ.Ս.Խ Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ. Խ. 1926 թ. մարտի 30, Ո.Հ. 1926 թ. № 4. հոդ. 39, «Խ.Հ.» 1926 թ. № 95)։

23. Հրահանգ գյուղական Խորհուրդների սեկցիաների մասին.
(Հ.Ս.Ծ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. հունիսի 15, Ո.Հ. 1926 թ. բաժ. 2-րդ, № 4, հոդ. 28)

24. Հրահանգ գավառակային Գործադիր Կոմիտեյի անդամների իրավունքների յեվ պարտականությունների մասին։
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. հունիսի 15, Ո.Հ. 1926 թ. բաժ. 2-րդ № 4, հոդ. 29, «Խ.Հ.» 1926 թ. № 159)։

25. Հրահանգ գավառային գործադիր կոմիտեների անդամների իրավունքների յեվ պարտականությունների մասին։
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. հունիսի 5-ի, Ո.Հ. 1296 թ., բաժ. 2-րդ, № 4, հոդ. 30, «Խ.Հ.» 1626 թ. № 158).

## ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎՈՒՆՔ

1. Խ.Ս.Հ.Մ. Կենտգործկոմի 3-րդ նստաշրջանի Ա.Ս.Ֆ.Խ.Հ. կալանավորների վիճակը թեթեվացնելու վերաբերյալ 1925 թ. մարտի 7-ի վորոշման գործադրության կարգի մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. Նախագահության 1925 թ. մարտի 19-ի, Ո.Հ. 1925 թ. № 3, հոդ. 28 «Խ.Հ.» 1925 թ. մարտի 25, № 66)։

2. Վարկային ֆունկցիաներ ունեցող վարկային յեվ գյուղատնտեսական ընկերությունների արած փոխատվությունների նկատմամբ՝ դատական հրամանի կարգով անվիճելի գանձման իրավունք վերապահելու մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1925 թ. մարտի 19, Ո.Հ., 1925 թ. № 3, հոդ. 29, «Խ.Հ.» 1925 թ. ապրիլի 9 № 80)։

3. Քրեական օրենսգիրքը 219 ա հոդվածով լրացնելու մասին.
(Հ.Ս.Խ Հ. Կ Գ.Կ. 1925 թ. մարտի 19, Ո.Հ. 1925 թ. № 3, հոդ 30 «Խ.Հ.» 1925 թ. ապրիլի 9, № 80)։

4. Դատական կարգով գրված տուգանքների, գրավումների, այլ յեվ դատական ծախսերի գանձման յեվ պետական հաշվով պահվող հիմնարկությունների օգտին կայացած դատական վճիռների կատարման հսկողության մասին.
(Հ.Ս.Խ.Հ Ժ.Կ.Խ. 1925 թ. հունիսի 3, Ո.Հ. 1925 թ. № 6, հոդ. 45, «Խ.Հ.» 1925 թ. հուլիսի 17, № 136)։

5. Քաղաքացիական օրենսգրքի 60 հոդ. լրացման մասին.
(Հ.Ս Խ Հ Կ.Գ.Կ. 1925 թ. հունիսի 9, Ո.Հ. 1925 թ. № 6, հոդ. 46, «Խ.Հ.» 1925 թ. հուլիսի 24, № 142)։

6. Գերատեսչությունների միլիցիայի մասին.
(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1925 թ. հուլիսի 8, Ո Հ 1925 թ. № 7-8, հոդ. 53, «Խ.Հ.» 1925 թ. № 179)։

7. Քրեյական որենսգրքի՝ զինվորական հանցագործությունների վերաբերյա 7-րդ գլխի փոփոխության յեվ լրացման մասին.

Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ Նախագահության 1925 թ. հուլիսի 17, Ո.Հ. 1925 թ. № 7-8, հոդ. 54, «Խ.Հ.» 1925 թ. № 184):

8. Կալանավոր գյուղացիներին դաշտային աշխատանքների ժամանակ արձակուրդներ տալու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1925 թ. հուլիսի 2, Ո.Հ. № 10, հոդ. 61, «Խ.Հ.» 1925 թ. № 218):

9. Ընդհանուր ներման մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1925 թ. նոյեմբերի 29, Ո.Հ. 1925 թ. № 11, հոդ. 79, «Խ.Հ.» 1925 թ. № 272):

10. Հ.Ս.Խ.Հ. Քաղաքացիական որենսգրքի 265 հոդ. ծանոթությամբ լրացնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1925 թ. դեկտեմբերի 4, Ո.Հ. 1925 թ. № 11, հոդ. 80, «Խ.Հ.» 1925 թ. № 292):

11. Գավառային գործադիր կոմիտեների յեվ գյուղական խորհուրդների՝ գործարքներ, պայմանագրեր յեվ փաստաթղթեր վավերացնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ Կ.Գ.Կ. 1925 թ. դեկտեմբերի 4, Ո.Հ. 1926 թ. № 1, հոդ. 1, «Խ.Հ.» 1926 թ. № 9):

12. Պետական յեվ պետականներին հավասարեցրած հիմնարկությունների յեվ ձեռնարկությունների պաշտոնյաներին կարգապահական պատասխանատվության յենթարկելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. հունվարի 5, Ո.Հ. 1926 թ. № 1, հոդ, 5, «Խ.Հ.» 1926 թ. № 23):

13. Կանոնադրություն Քրեյական հետախուզության բաժնի.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. հունվարի 5, Ո.Հ. 1926 թ. № 1, հոդ. 7, «Խ.Հ.» 1926 թ. № 27):

14. 1924 թ. հուլիսի 26-ի բնակարանային դեկրետի փոփոխման ու լրացման մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. հունվարի 12, Ո.Հ. 1926 թ. № 2, հոդ. 8, «Խ.Հ.» 1926 թ. № № 36—37):

15. Ամուսնացողների ցուցակագրության կարգի վերաբերյալ վորոշման փոփոխության մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվ. 6, Ո.Հ. 1926 թ. № 2, հոդ. 16, «Խ.Հ.» 1926 թ. № 52):

16. Ժողկոմխորհին առընթեր Որենսդրական հանձնաժողովի վերացման մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվ. 19, Ո.Հ. № 3, հոդ. 24, «Խ.Հ.» 1926 թ. № 71):

17. Սպառողական ընկերություններին ու նրանց միություններին ապրանքային վարկից առաջացած պարտքերն անվիճելի կարգով գանձելու իրավունք վերապահելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվարի 23, Ո.Հ. № 3, հոդ. 25, «Խ.Հ.» 1926 թ. № 72):

18. Կանոնադրություն կալանավայրերի ծառայության.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. փետր. 23, Ո.Հ. № 3, հոդ. 26):

19. Ցուցակ անձանց, վորոնց վրա տարածվում ե կալանավայրերի ծառայության կանոնադրությունը.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. փետր. 23, Ո.Հ. № 3, հոդ. 27):



20. Գյուղական կատարածուների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվ. 16, Ո.Հ. 1926 թ. № 4, հոդ. 31, «Խ.Հ.» 1926 թ. № 70):

21. Կանոնադրություն Հ.Ս.Խ.Հ. Քրեյական հետախուզական տեղական մարմինների.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. մարտի 15, Ո.Հ. 1926 թ. № 4, հոդ. 35, «Խ.Հ.» 1926 թ. № 77):

22. Կանոնադրություն Բանվորա-գյուղացիական միլիցիայի ծառայության,

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. փետրվ. 23, Ո.Հ. 1926 թ. № 5, հոդ. 42, «Խ.Հ.» 1926 թ. № 119—120):

23. Կանոնադրություն Հայաստանի կալանավայրերում գտնվող կալանավորների յեվ կալանքից ազատվողների ոգնության կոմիտեյի.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. ապրիլի 27, Ո.Հ. 1926 թ. № 7, հոդ. 55, «Խ.Հ.» 1926 թ. № 127):

24. Կանոնադրություն Ներքգործժողկոմատի Կոմունալ Տնտեսության Գլխավոր Վարչության.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. մայիսի 25, Ո.Հ. 1926 թ. № 7, հոդ. 56):

25. Կանոններ վարչական մարմինների յեվ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ գանգատ տալու յեվ քննելու կարգի մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1՛26 թ. հունիսի 9, Ո.Հ. 1926 թ. № 7, հոդ. 62):

26. Քաղաքային վայրերում քաղաքացիների ցուցակագրման մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. հունիսի 4, Ո.Հ. 1926 թ. № 8, հոդ. 66, «Խ.Հ.» 1926 թ. № 168):

27. Հ.Ս.Խ.Հ. Դատարանակազմության կանոնագրքի փոփոխությունների յեվ լրացումների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. մայիսի 20, Ո.Հ. 1926 թ. № 9, հոդ. 78, «Խ.Հ.» № 207):

28. Հ.Ս.Խ.Հ. Քաղաքացիական Որենսգրքի փոփոխությունների ու լրացումների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. մայիսի 20, Ո.Հ. 1926 թ. № 9, հոդ. 79, «Խ.Հ.» 1926 թ. № 207):

29. Հ.Ս.Խ.Հ. Քաղաքացիական Դատավարության Որենսգրքի փոփոխությունների ու լրացումների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ 1926 թ. մայիսի 20, Ո.Հ. № 9, հոդ. 80, «Խ.Հ.» 1926 թ. № 207):

30. Հ.Ս.Խ.Հ. Քրեյական Որենսգրքի փոփոխությունների ու լրացումների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. մայիսի 20, Ո.Հ. 1926 թ. № 9, հոդ. 81, «Խ.Հ.» 1926 թ. № 207):

31. Հ.Ս.Խ.Հ. Քրեյական Դատավարության Որենսգրքի փոփոխությունների ու լրացումների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. մայիսի 20, Ո.Հ. 1926 թ. № 9, հոդ. 82, «Խ.Հ.» 1926 թ. № 207):

32. Քաղաքացիների ազգանունը յեվ անունը փոխելու իրավունքի մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. սեպտ. 8, «Խ.Հ.» 1926 թ. № 213):

33. Ամուսնության քաղաքացիական կացության ակտերի, ընտանեկան յեվ խնամակալության Որենսգրքի 3-րդ բաժնի 5-րդ գլուխը վորդեգրության վերաբերյալ փոփոխելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. «Խ.Հ.» 1926 թ. № 224):

34. Գյուղական բնակչության իրավունքների մասին տեղական կարիքները բավարարելու վերաբերյալ.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. սեպտ. 15, «Խ.Հ.» 1926 թ. № 225)։

35. Բացված ժառանգությունների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. հոկտ. 15, «Խ.Հ.» 1926 թ. № 255)։

36. Գավառային գործադիր կոմիտեների յեվ գյուղական խորհուրդների կողմից գործարքներ, պայմանագրեր յեվ փաստաթղթեր վավերացնելու մասին վորոշման 3-րդ հոդվածը փոփոխելու յեվ 6-րդ հոդվածը «Դ» կետով լրացնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. հոկտ. 13, «Խ.Հ.» 1926 թ. № 263)։

37. Քաղաքացիական Օրենսգրքի 268 հոդվածը լրացնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. հոկտ. 27, «Խ.Հ.» 1926 թ. № 268)։

38. Հ.Ս.Խ.Հ. Ներքառժողկոմատի կանոնադրության 2-րդ հոդվածի փոփոխման մասին.

(Հ.Ս Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. հոկտ. 27, «Խ.Հ.» 1926 թ. № 269)։

39. Քաղաքացիական Դատավարության Օրենսգրքի 191-րդ հոդվածի «Ժ» կետը փոփոխելու յեվ քաղ. դատ. որ. 26 ա գլխով լրացնելու մասին «կորցրած վոչ անվանական փաստաթղթերի իրավունքները վերականգնելու հատուկ դատավարության մասին».

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. հոկտ. 13, «Խ.Հ.» 1926 թ. № 279)։

40. Պետական յեվ պետականներին հավասարեցրած հիմնարկությունների յեվ ձեռնարկությունների իրավախորհրդատուների մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. նոյեմբ. 26, «Խ.Հ.» 1926 թ. № 294)։

41. Աշխատավորական Ներգաղթի հանձնաժողովի մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժողկոմխորհի 1925 թ. սեպտ. 2, Ո.Հ. № 10, հոդ. 65, «Խ.Հ.» 1925 թ. № 217)։

42. Ոտարերկրացիների տոմարագրության յեվ տոմարագրության կանոնները խախտելու ու առանց սահմանված անցագրերի ապրելու համար՝ նրանց պատժի յենթարկելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1926 թ. մարտի 15, Ո.Հ. 1926 թ. № 4, հոդ. 36, «Խ.Հ.» 1926 թ. № 80)։

43. Կանոնադրություն Հ.Ս.Խ.Հ. Ժողտնտխորհի.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. յեվ Ժ.Կ.Խ. 1925 թ. դեկտեմբերի 22, Ո.Հ. № 13, հոդ. 85)։

## ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Եջ | Տող վերևից | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 14 | 34 | Խորհրդային տնտեսություններ | Դ. Խորհրդային տնտեսություններ |
| 23 | 22 | 9 : 3 | 9,3 |
| 27 | 6-րդ տող. | 197,7 | 107,7 |
| » | » | 7756,8 | 8.795,2 |
| 37 | 24 | 345 000 | 34.500 |
| 42 | 12-րդ տող. | 1.874.085 | 1.874.058 |
| 44 | 16-րդ տող. | 8.275 | 8.175 |
| 45 | 2-րդ տող ներք. | 8.611.156 | 8.612.156 |
| 50 | 14-րդ տող. | 1.244.920 | 1 244.929 |
| 57 | 12-րդ տող. | 14.789 | 134.789 |
| 58 | 2 | Կոտնոտնք | Կոտոտնոտնք |
| 86 | 15-րդ տող. | 320 | 328 |
| 95 | 22 | 90 գյուղատնտեսական | 9 գյուղատնտեսական |

34. Գյուղական բնակչության իրավունքների մասին տեղական կարիքները բավարարելու վերաբերյալ.

(Հ.Ս.Խ.Հ. Կ.Գ.Կ. 1926 թ. սեպտ. 15, «Խ.Հ.» 1926 թ. № 225):

35. Բացված ժառանգությունների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ. Ժ.Կ.Խ. 1926 թ. հոկտ. 15, «Խ.Հ.» 1926 թ. № 255):

36. Գավառային գործադիր կոմիտեների յեվ գյուղական խորհուրդների կողմից գործարքներ, պայմ

ման 3-րդ հոդվածը փոփ

(Հ.Ս.Խ.Հ

37. Քաղաքացիակա

(Հ.Ս.Խ.Հ

38. Հ.Ս.Խ.Հ. Ներքա

մասին.

(Հ.Ս Խ.Հ

39. Քաղաքացիակա

փոփոխելու յեվ քաղ դ

վանական փաստաթղթե

թյան մասին».

(Հ.Ս.Խ.Հ

40. Պետական յեվ

ձեռնարկությունների իր

(Հ.Ս.Խ.Հ

№ 294):

41. Աշխատավորակ

(Հ.Ս.Խ.Հ.

1925 թ. № 21

42. Ոտարերկրացին

խախտելու ու առանց ա

յենթարկելու մասին.

(Հ.Ս.Խ.Հ

հոդ. 36, «Խ.Հ

43. Կանոնադրությ

(Հ.Ս.Խ.Հ.

հոդ. 85):

ՀՀ Ազգային գրադարան
NL0215550

40.290